ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱՆՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Երևան
2011

ՀՏԴ 23/28:94/99
ԳՄԴ 67+63.3
Ռ 950

Գիտական խմբագիր՝
Ռուբեն Մելքոնյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ռ 950 Ռուսաստանի Դաշնության հայության կրոնադավանանքային կողմնորոշումները - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2011. - 134 էջ:

Աշխատությունում լուսաբանվում են Ռուսաստանի Դաշնության հայ կաթողիկե և ավետարանական համայնքների պատմական զարգացման ընթացքը և արդի գործընթացները: Ներկայացվում են այս դավանական համայնքներում հայապահպանության, հոգևոր-եկեղեցական, ազգային ներուժի համախմբմանը, միջդավանական հարաբերություններին վերաբերող հարցեր: Փորձ է արված վեր հանել ՌԴ հայ կաթողիկե և ավետարանական համայնքների ներուժը՝ մարդկային, կազմակերպչական և այլ տեսանկյուններից:

Գիրքը նախատեսված է վերլուծական հանրության և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 23/28:94/99
ԳՄԴ 67+63.3

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2011
© «Նորավանք» ԳԿՀ, 2011

ISBN 978-9939-825-09-0

Գիրքը հրատարակվում է
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա

Հեղինակներ՝
Արեստակես Սիմավորյան
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական
կենտրոնի ղեկավար

Վահրամ Հովյան
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական
կենտրոնի փորձագետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

Վահրամ Հովյան
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 11

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 13
Նախախորհրդային շրջան 13
Խորհրդային շրջան 28
Հետխորհրդային շրջան 29

ԳԼՈՒԽ 2. ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ 32
Թվաքանակը և աշխարհագրական սփռվածությունը 32
Կազմակերպչական կառույցները 36

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԱՐԴԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ 42
Հարաբերություններն այլ ավետարանական համայնքների հետ 42
Միջդավանական հարաբերությունները 43
Միջդավանական համագործակցության ձևերը և մակարդակները ... 48

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 52

Արեստակես Սիմավորյան
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 59

ԳԼՈՒԽ 1. ԿԱԹՈԼԻԿՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ 61

Պատմական ակնարկ 61
Ղրիմի հայ կաթողիկե համայնքը 63
Հյուսիսային Կովկաս 67

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՆԵՐԸ ԽՍՀՄ ՏԱՐԻՆԵՐԻՆ 84

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ 93
Թվաքանակն ու աշխարհագրական սփռվածությունը 94
Միջդավանական համագործակցությունն ու
փոխընկալման խնդիրը 98
Հոգևոր-եկեղեցական խնդիրները 103

Հավելված 1. DIRECTORIUM OFFICII DIVINI PRO
DIOECESI TIRASPOLENSI in Annum Domini 1866
ECCLESIASE RITUS ARMENO-CATHOLICI 112

Հավելված 2 118

Հավելված 3. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ 119

Հավելված 4. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 120

Հավելված 5. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԴԱՎԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 121

ԱՄՓՈՓՈՒՄ 122

РЕЗЮМЕ 126

SUMMARY 130

ԱՌԱՋԱԲԱՆ

Ռուսաստանի հայ համայնքը հայ գաղթօջախների մեջ աչքի է ընկնում որոշ առանձնահատկություններով, որոնցից, թերևս, առաջինն այն է, որ համաձայն տարբեր աղբյուրների՝ ռուսաստանաբնակ հայերի թիվը կազմում է շուրջ 2,2 մլն մարդ: Փաստորեն, Ռուսաստանի Դաշնությունն իր հայ բնակչության թվով Հայաստանի Հանրապետությունից հետո երկրորդ երկիրն է աշխարհում: Ռուսաստանի հայությանը, ըստ տարբեր չափանիշների, կարելի է պայմանականորեն բաժանել խմբերի, որոնցից յուրաքանչյուրը, բացի ընդհանուր համայնքային խնդիրներից, ունի նաև միայն իրեն հատուկ խնդիրներ:

ՌԴ հայության պայմանական բաժանման չափանիշների մեջ առանձնահատուկ տեղ ունի կրոնադավանանքային պատկանելության հարցը: Ինչպես Սփյուռքի որոշ համայնքներում, այնպես էլ Ռուսաստանի հայ համայնքում Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների կողքին ապրում են նաև Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական եկեղեցիների հետևորդները: Այս շերտերը մի կողմից ապահովում են հայության քաղաքակրթական բազմազանությունը, մյուս կողմից՝ լուրջ ռեսուրս են, որը կարող է վերածվել քաղաքական գործոնի: Էթնիկ առումով հայ լինելուն զուգահեռ՝ նրանք գտնվում են կաթոլիկության և բողոքականության ընդհանուր դավանանքային դաշտերում՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Ընդ որում՝ դավանանքային պատկանելության հարցը կարելի է դիտարկել երկու մակարդակներում՝ նեղ (տվյալ երկրի շրջանակներում) և լայն (համաշխարհային մասշտաբով): Այսպես, Ռուսաստանի հայ կաթողի-

կեները (իմա՝ հայ կաթոլիկները) Ռուսաստանի կաթոլիկության (նեղ առումով), ինչպես նաև Վատիկանի կողմից ղեկավարվող համաշխարհային կաթոլիկության (լայն առումով) մի մասն են։ Նույն կերպ Հայ Ավետարանական եկեղեցու հետևորդներն ինչպես Ռուսաստանի (նեղ առումով), այնպես էլ համաշխարհային (լայն առումով) բողոքականության մաս են կազմում։

Տարադավան հայության այս շերտերի ազգային և դավանանքային այսօրինակ պատկանելությունը մի կողմից կարող է որոշակի բացասական արդյունքների և զարգացումների պատճառ դառնալ, մյուս կողմից՝ լրացուցիչ հնարավորություններ և ռեսուրսներ ապահովել ազգային խնդիրներն ավելի արդյունավետ լուծելու տեսանկյունից։ Օրինակ, հայ կաթողիկեները և ավետարանականները, ըստ էության, այն կապող օղակն են, որը հայությանը հնարավորություն է տալիս արդյունավետ հարաբերություններ կառուցել և համագործակցել թե՛ ռուսաստանյան, թե՛ համաշխարհային կաթողիկե, բողոքական կազմակերպությունների ու կառույցների հետ՝ նրանց հնարավորությունները նույնպես ի սպաս դնելով հայության առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը։

Այսպիսով, հայության կրոնադավանանքային շերտերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը պետք է հետապնդի երկու հիմնարար ռազմավարական նպատակ.

1. չեզոքացնել կամ նվազագույնի հասցնել այդ շերտերի միջոցով հայության վրա օտարերկրյա և համաշխարհային կրոնական կազմակերպությունների հնարավոր բացասական ազդեցությունները,
2. այդ շերտերը կապող օղակ «ծառայեցնելով»՝ օտարերկրյա և համաշխարհային կրոնական կառույցների հնարավո-

ռություններն ի սպաս դնել հայության հիմնախնդիրների լուծմանը՝ մշակելով համագործակցության և շփումների արդյունավետ մեխանիզմներ։

Այս ռազմավարական խնդիրների իրագործումը Ռուսաստանի հայության կրոնադավանանքային խմբերի պարագայում պահանջում է այդ շերտերի համակողմանի ուսումնասիրություն, ինչը ենթադրում է համայնքների պատմական զարգացման, թվաքանակի, աշխարհագրական սփռվածության, կազմակերպչական կառույցների, նյութական, մտավոր, վարչական և այլ ռեսուրսների բացահայտում և «գույքագրում»։ Հարկ է վերլուծել նաև Ռուսաստանի իրենց հավատակիցների հետ հարաբերությունները, նրանց կենսագործունեության պայմանները ռուսաստանյան հասարակական-քաղաքական միջավայրում, Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների հետ փոխհարաբերությունները, ինչպես նաև միմյանց միջև փոխադարձ ընկալումներն ու փոխհարաբերությունները։ Մեր աշխատանքը փորձ է այդ ուղղությամբ։ Հետազոտությունը Ռուսաստանի հայ կաթողիկե համայնքի մասով հեղինակել է «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար Ա.Սիմավորյանը, ավետարանական համայնքի մասով՝ նույն կենտրոնի փորձագետ Վ.Հովյանը։ ՌԴ այս երկու դավանանքային շերտերի աշխարհագրական սփռվածությունը ներկայացնող քարտեզը կազմել է Հայագիտական կենտրոնի փորձագետ Տ.Ղանալանյանը։

Արեստակես Սիմավորյան

Վահրամ Հովյան

Վահրամ Հովյան

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի հայ համայնքի կազմում իրենց ուրույն տեղն ունեն հայ ավետարանականները։ Վերջիններս թեև փոքրաթիվ են և էականորեն զիջում են տեղի հայ առաքելականներին ու կաթողիկեներին, սակայն որպես համայնք ցուցաբերում են զարգանալու և ընդլայնվելու միտում, ինչը ենթադրում է թե՛ քանակական աճ և թե՛ աշխարհագրական սփռվածության ընդլայնում, ինչպես նաև կազմակերպչական կառույցների հիմնում և գործունեություն։ Ռուսաստանի հայ ավետարանականների առկայությունը պետք է դիտվի ոչ թե որպես հայությունը պառակտող, այլ նրա ներքին բազմազանությունն ավելացնող գործոն։

Հայ ավետարանականների առջև ծառացած խնդիրներն ու մարտահրավերները չեն տարբերվում ռուսաստանաբնակ մյուս հայերի խնդիրներից։ Հետևաբար, Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի ուսումնասիրությունն ունի տեսական և գործնական ավելի լայն նշանակություն։

Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի մասին համալիր հետազոտություններ այս պահին գրեթե չկան։ Ռուսաստանի հայ ավետարանական համայնքը հայագիտության դեռևս չուսումնասիրված ոլորտներց է։ Համայնքին առնչվող որոշ հարցեր շոշափվել են հայ ավետարանականների, մասնավորապես Արևելյան Հայաստանում ավետարանականության ծագման և տարածման պատմության[1], Ռուսաստանի ընդհանուր հայ հա-

[1] Տե՛ս *Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.,* Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան - Կովկաս), Երևան, 1999։

մայնքին նվիրված և այլ հետազոտություններում: Բացի գիտական ուսումնասիրություններից, Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի մասին որոշակի տեղեկատվության ենք հանդիպում տարբեր փաստաթղթերում և տեղեկագրերում:

ԳԼՈՒԽ 1
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի ձևավորումը և պատմական զարգացումն ունեցել են հետաքրքիր և ուրույն ընթացք, որը կարելի է բաժանել երեք փուլի.

- *նախախորհրդային* ՝ համայնքի կազմավորման և տարածման ժամանակաշրջան։ Այս փուլում Ռուսաստանում հայտնվում են առաջին հայ ավետարանականները և, աստիճանաբար ստվարանալով, սփռվում երկրի տարբեր շրջաններում,
- *խորհրդային* ՝ կրոնական հալածանքներով և աթեիստական գաղափարախոսությամբ պայմանավորված՝ համայնքի հարաբերական անկման ժամանակաշրջան,
- *հետխորհրդային* ՝ համայնքի վերածննդի ժամանակաշրջան։ Այս փուլում ընձեռված կրոնական ազատությունները հիմք են հանդիսանում Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի վերազարթոնքի համար, ինչը և տեղի է ունենում ու շարունակվում առայսօր։

Նախախորհրդային շրջան

Ռուսաստանի հայության շրջանում ավետարանականության ծագումը և տարածումը վերագրվում են 19-րդ դարասկզբին՝ պայմանավորված երկու գործոնով՝ ազգային, մշակութային, հասարակական-քաղաքական զարթոնքով և Ռուսաստանում ավետարանական միսիոներների ծավալած գործունեությամբ։

Ազգային, մշակութային, հասարակական-քաղաքական զարթոնքը (ավետարանականության առաջացման նախադրյալները): Ավետարանական գաղափարների սաղմնավորումը և տարածումը Ռուսաստանի հայության մեջ ունեն խոր պատմական և քաղաքակրթական հիմքեր: Բանն այն է, որ ավետարանականությունը, որպես երևույթ, կրոնականից զատ, ունի նաև սոցիալ-քաղաքական, ինչպես նաև քաղաքակրթական բաղադրիչ: Ուստի, Ռուսաստանի հայության (և ընդհանրապես հայ իրականության) մեջ ավետարանականության ծագման մասին ճիշտ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նախ անդրադառնալ ավետարանականությանն ընդհանրապես, նրա ծագման և զարգացման պատմական հիմքերին:

Ավետարանականությունը՝ որպես քաղաքակրթական երևույթ, ինչպես նաև կրոնական, սոցիալ-քաղաքական շարժում, համարվում է 16-րդ դարի ծնունդ: Ավետարանականությունը նաև արդեն հնացած և իրենց սպառած ավատատիրական կարգերի քայքայման և նոր՝ կապիտալիստական հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջանի ծնունդն էր: Հասարակական հարաբերությունների փոխակերպումն իր հետ բերեց նաև զգալի փոփոխություններ մարդկանց աշխարհայացքում և հասարակական-քաղաքական գիտակցության մեջ: Քաղաքական առումով այն աստիճանաբար պետք է հանգեցներ բացարձակ միապետության՝ որպես կառավարման ձևի, «հնացմանը» և հասարակական տրամադրություններում համապատասխան գիտակցման ձևավորմանը: Ըստ այդմ՝ հասարակական-քաղաքական գիտակցության մեջ, ինչպես նաև իրավաքա-

ղաքական մտքում առաջ են գալիս միապետի բացարձակ իշխանության սահմանափակման, խորհրդարանի՝ որպես օրենսդիր մարմնի և միապետական իշխանության, հակակշռի ձևավորման, միապետական իշխանության լիազորությունները սահմանադրությամբ, օրենքներով, ինչպես նաև խորհրդարանի իշխանությամբ սահմանափակելու գաղափարներ: Այս ամենի հետ մեկտեղ կարևորվում է ժամանակակից արևմտյան հասարակությունների արժեհամակարգի հիմքը կազմող այնպիսի գաղափարների առաջքաշումն ու զարգացումը, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանությունը, խոսքի, խղճի, դավանանքի ազատությունը և այլն:

Ահա այս բոլոր սոցիալ-քաղաքական, քաղաքակրթական փոփոխությունների արտացոլումը կրոնական ոլորտում եղավ Մարտին Լյութերի նախաձեռնած Ռեֆորմացիոն շարժումը, որի հիմնական նպատակն էր Հռոմեական կաթոլիկ եկեղեցու բարեփոխումը: Ռեֆորմացիոն շարժումն իր էությամբ և գաղափարախոսությամբ, ըստ էության, հասարակական կյանքի աշխարհիկացման, միջնադարյան կրոնական կապանքներից ու կաղապարներից նրա ազատագրման ջատագովն էր այդ դարաշրջանի կրոնական փիլիսոփայության մեջ: Որպես գաղափարախոսություն՝ ավետարանականության հաջողությունն ըստ էության պայմանավորված էր այդ դարաշրջանի սոցիալ-քաղաքական միջավայրով: Պատահական չէ, որ Եվրոպայում 16-րդ դարի Ռեֆորմացիոն շարժման նման այլ շարժումներ կամ այդ շարժման ու գաղափարախոսության նախատիպեր եղել են նաև նախկինում, սակայն հաջողության չեն հասել: Որպես այդպիսին կարե-

լի է վկայակոչել Վիկլիֆյան շարժումը (Ջոն Վիկլիֆի անունով) Անգլիայում 14-րդ դարի վերջին, Հուսյան շարժումը (Յան Հուսի անունով) Չեխիայում 15-րդ դարում և այլն[1]: Հայ իրականության մեջ այդպիսի շարժումներ կամ Ռեֆորմացիայի գաղափարախոսության նախատիպեր եղել են շատ ավելի վաղ՝ ի դեմս միջնադարյան Հայաստանում տարածում ստացած Պավլիկյան և Թոնդրակյան շարժումների[2]: Սակայն այդ շարժումները հաջողության չհասան գլխավորապես այն պատճառով, որ տվյալ դարաշրջանում դրա համար չկային անհրաժեշտ սոցիալ-քաղաքական պայմաններ և միջավայր: Մինչդեռ 16-րդ դարի սոցիալ-քաղաքական, ինչպես նաև քաղաքակրթական միջավայրը ստեղծում էր անհրաժեշտ պայմաններ Ռեֆորմացիայի հաջողության, հաղթանակի և տարածման համար: Պատահական չէ, որ Մարտին Լյութերի կողմից նախաձեռնված Ռեֆորմացիոն շարժմանը, նախկինում ծավալված նմանատիպ շարժումների համեմատ, սատարում էին հասարակական ավելի լայն շերտեր, քանի որ այն համապատասխանում էր զգալիորեն ավելի մեծ թվով խավերի շահերին: Մասնավորապես՝ Ռեֆորմացիոն շարժմանը սատարողների թվում կարևոր տեղ էին զբաղեցնում ազնվականության ներկայացուցիչները: Մյուս կողմից էլ Ռեֆորմացիան, լինե-

[1] Տե՛ս Историческая обусловленность Реформации http://www.sedmitza.ru/text/441757.html

[2] Համաձայն հայ ավետարանականների ինքնընկալումների՝ բողոքականությունը կամ ավետարանականությունը հայոց մեջ հանդիսանում է միջնադարյան աղանդավորության՝ Պավլիկյան և Թոնդրակյան շարժումների ժառանգորդը և ունի գաղափարա-դավանաբանական ընդհանրություններ դրանց հետ: Նաև այս հանգամանքի վկայակոչմամբ են ավետարանական հայերը պնդում, որ ավետարանականությունը հայոց մեջ ունի ոչ թե արտաքին (օտարերկրյա միսիոներների գործունեության հետևանքով), այլ ներքին՝ հայկական ծագում: Այս մասին առավել մանրամասն տե՛ս *Հովյան Վ.,* Բողոքական հայերը՝ տարադավան հայության շերտ, Գլոբուս. Ազգային անվտանգություն, 2010, թիվ 1, էջ 16-17:

լով իր դարի ծնունդը, իր հերթին էր նպաստում հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին։

Այսպիսով, Ռեֆորմացիան ընդհանուր առմամբ նոր դարաշրջանի հասարակական-քաղաքական փոփոխությունների արտացոլումն էր կրոնական բնագավառում և գիտակցության մեջ։ Եվ Ռեֆորմացիան էլ, ըստ էության, ներկայացնում էր հոգևոր-եկեղեցական կյանքի աշխարհիկացումը, որպես գաղափարախոսություն առաջադրում էր Հռոմեական Կաթողիկե եկեղեցու բարեկարգման անհրաժեշտությունը՝ ավելորդ ծիսապաշտությունից հրաժարում (վերադարձ քրիստոնեության նախնական կամ սկզբնական՝ պարզ տարբերակին)[1], դավանաբանական հարցերում Ավետարանի գերակայություն կամ բացարձակացում[2] և այլն։

Համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցող այս նշանակալի փոփոխությունները, բնականաբար, չէին կարող շրջանցել հայ իրականությունը, որտեղ նույնպես ավատատիրական հարաբերությունների քայքայմանը և կապիտալիստական հարաբերությունների ձևավորմանը զուգընթաց արմատավորվում էին աշխարհիկության, խղճի ազատության, հանդուրժողականության, լուսավորության ու կրթության ջատագովության գաղափարներ։ Հայ իրավաքաղաքական միտքը սույն ժամանակահատվածում տալիս է այնպիսի գոհարներ, ինչպիսիք են Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ Փառացն»[3] ու Մովսես Բաղ-

[1] Բողոքականները, օրինակ, ընդունում են քրիստոնեական խորհուրդներից միայն երկուսը՝ մկրտությունը և հաղորդությունը։

[2] Համաձայն այս սկզբունքի՝ միակ ճշմարիտ դավանաբանական աղբյուրը Ավետարանն է, և դավանաբանական հարցերում պետք է հիմնվել միայն Ավետարանում գրվածի վրա։

[3] Սույն աշխատանքը համարվում է առաջին սահմանադրության նախագիծը հայ իրականության մեջ։

բամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակը»: Սույն աշխատություններում, բացի մարդու իրավունքների ու ազատությունների (խղճի, խոսքի և այլ ազատություններ) պաշտպանության, կրթության և լուսավորության ջատագովությունից, առաջ էին քաշվում նաև ապագա հայկական պետությունում խորհրդարանի ստեղծման, ընտրությունների ինստիտուտի ձևավորման և ժողովրդավարական այլ արժեքների ստեղծման գաղափարներ[1]:

Հոգևոր-մշակութային կյանքում կրթության և լուսավորության խթանման, գիտության զարգացմամբ ազգային հիմնախնդիրները լուծելու գաղափարների տարածման համատեքստում առաջանում է նաև աշխարհաբար լեզվի տարածման և զարգացման գաղափարը, որը պետք է փոխարիներ լայն հասարակայնության շրջանում արդեն անհասկանալի և գործածությունից դուրս մղված գրաբարին: Առաջանում է հայ նոր՝ աշխարհաբար գրականության հիմնադրման գաղափարը, որի ջատագովներն էին հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը և ժամանակի կրթյալ, լուսավորյալ, ազգի ճակատագրով մտահոգ այլ անվանի մտավորականներ, հատկապես նրանք, որ ստացել էին եվրոպական կրթություն: Վերջիններիս համոզմամբ՝ միայն դպրության, գիտության տարածմամբ, մատաղ սերնդի դաստիարակությամբ, լուսավորության տարածմամբ, համամարդկային արժեքներին հայ ժողովրդի հաղորդակցման միջոցով էր հնարավոր հասնել հայ ազգի ազատմանն այն ծանր իրավիճակից, որում հայտնվել էր վերջինս:

[1] Տե՛ս *Մանուչարյան Հ.,* Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Երևան, 2002, էջ 136-155:

Եվրոպայի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող այս նշանակալի փոփոխությունների ազդեցության տակ հայ իրականության մեջ թե՛ եկեղեցական գործիչների, թե՛ աշխարհիկ անձանց շրջանում առաջանում է եկեղեցական բարենորոգումների անցկացման գաղափարը, որի նպատակն էր Հայ Առաքելական եկեղեցու առողջացումը և նրա համապատասխանեցումը ժամանակի ոգուն, նրա կողմից ժամանակակից մարդու հոգևոր-կրոնական պահանջմունքների բավարարումը: Այդ բարեփոխումները ենթադրում էին.

1. *հրաժարում ծիսապաշտական ավելորդություններից.* սա նշանակում էր եկեղեցու բեռնաթափում ծիսապաշտությունից, այն է՝ վերադարձ քրիստոնեության նախնական կամ սկզբնական՝ պարզ տարբերակին,
2. *աշխարհաբարացում՝* Աստվածաշնչի և այլ կրոնական գրականության թարգմանություն աշխարհաբարի, նոր կրոնական գրականության ստեղծում և քարոզների իրականացում աշխարհաբարով,
3. *կրթության և լուսավորության տարածում հոգևորականության շրջանում.* նպատակն էր հայ եկեղեցու քահանաների և այլ հոգևոր սպասավորներին կրթելը և լուսավորելը, ինչը նրանց շրջանում պետք է արմատախիլ աներ տգիտությունն ու խավարամտությունը:

Հայ իրականության մեջ այսպիսի գաղափարները կարող էին առաջանալ հայության հոգևոր-մշակութային և քաղաքակրթական կենտրոններում, որտեղ ակտիվորեն ծավալվում էր հասարակական-քաղաքական, մշակութային կյանքը, գործում

էին դպրոցներ, մշակութային հաստատություններ, հրատարակվում էին գրքեր և պարբերականներ։ Ահա այդպիսի հոգևոր-մշակութային կենտրոններն էին ապահովում համապատասխան միջավայր, որում ծավալվում էր ակտիվ քննարկում և բանավեճ հասարակական կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող հրատապ խնդիրների վերաբերյալ։

Պատմական հանգամանքների բերումով մեր նոր պատմության ժամանակաշրջանում հայության հոգևոր-մշակութային կենտրոնները հիմնականում եղել են Հայաստանի սահմաններից դուրս[1]։ Եթե Օսմանյան կայսրության կազմում բնակվող արևմտահայության համար հոգևոր-մշակութային, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքի ծավալման ու զարգացման կենտրոնը հիմնականում կայսրության մայրաքաղաքն էր՝ Կ.Պոլիսը, ապա ռուսական կայսրության կազմի մեջ գտնվող արևելահայերի համար դրանք մի քանիսն էին՝ Թիֆլիսը, Մոսկվան, Նոր Նախիջևանը և այլ քաղաքներ։

Արդ, Ռուսաստանի հայկական նշանավոր կենտրոններում հայության հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի վերելքը, ռուսական և եվրոպական մշակույթների հետ հաղորդակցությունը ռուսահայ իրականության մեջ առաջ բերեց ավետարանականության հետ առնչվող զարգացումներ[2]։ Ռուսաստանում հայկական հոգևոր-մշակութային

[1] Գլխավորապես այն պատճառով, որ օտար պետությունների կազմում հայտնված Հայաստանում, որը գտնվում էր ծանր պայմաններում, չկային հոգևոր-մշակութային, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքի ծավալման ու զարգացման համար անհրաժեշտ պայմաններ։

[2] Արևմտահայության պարագայում նույնպես նախքան առաջին հայ ավետարանական համայնքի ձևավորումը (1846թ.) ծավալվել են խմորումներ ու զարգացումներ՝ կապված ավետարանականության հետ, գլխավորապես Կ.Պոլսում։

և հասարակական-քաղաքական կյանքի գլխավոր կենտրոնը, որտեղ 19-րդ դարի կեսից ծավալվում էին ավետարանականության հետ կապված խմորումներ, Մոսկվան էր։ Այդ գործընթացը ծավալվում էր երկու՝ տեսական-գաղափարական և գործնական մակարդակներով։

Տեսական-գաղափարական մակարդակ. ակնհայտ է, որ ավետարանականությանն առնչվող խմորումներն ու զարգացումները պետք է տեղի ունենային քննարկումների, փաստարկումների ու բանավեճերի տեսքով, որտեղ միմյանց էին բախվում թեր և դեմ կարծիքները։ Տեսական-գաղափարական մակարդակով Մոսկվայում ավետարանականության հետ կապված խմորումների ու զարգացումների ծավալման ասպարեզ էր ժամանակի ամենանշանավոր հայկական պարբերական հրատարակությունը՝ «Հյուսիսափայլ» ամսագիրը։ «Հյուսիսափայլի» էջերում ամսագրի գլխավոր խմբագիր Ստ. Նազարյանը, մեծանուն գրող Ռաֆֆին, ինչպես նաև ժամանակի այլ նշանավոր հայ մտավորականներ հանդես էին գալիս մի շարք թեմաներով.

1. խղճի ազատության, կրոնական հանդուրժողականության վերաբերյալ հրապարակումներով՝ քննադատելով Հայ Առաքելական եկեղեցու որոշ հետադեմ սպասավորների իրականացրած հալածանքները տարադավան՝ բողոքական և կաթողիկե հայերի նկատմամբ,
2. այնպիսի հրապարակումներով, համաձայն որոնց՝ կրոնը կամ դավանանքը ազգային ինքնության չափանիշ չէ և, հետևաբար, ավետարանական կամ կաթողիկե հայը նույնքան հայ է, որքան առաքելականը,

3. սրա հետ մեկտեղ՝ «Հյուսիսափայլի» էջերում լույս էին տեսնում հայ ազգի ծանր դրությունը հաղթահարելու գործում կրթության, գիտության և լուսավորության կարևորագույն դերի մասին հրապարակումներ՝ միևնույն ժամանակ ընդգծելով բողոքական հայերի, ինչպես նաև այլազգի բողոքական միսիոներների գնահատելի ավանդը հայ իրականության մեջ կրթության գործի կազմակերպման, գիտության տարածման և այլ ազգանպաստ գործերում,
4. քննադատվում էին ժամանակի որոշ հոգևոր գործիչների խավարամտությունը և հետադիմականությունը,
5. կարևորվում էր աշխարհաբարի տարածումը հայ իրականության մեջ և մասնավորապես՝ Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանությունը։

Գործնական հարթությունում ավետարանականության հետ առնչվող խմորումներն ու զարգացումները Մոսկվայում և Ռուսաստանի հայկական այլ հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական կենտրոններում ծավալվում էին հիմնականում երկու ուղղությամբ.

1. *հրատարակչական.* խմորումների մեջ իր կարևորությամբ թերևս առաջին տեղում էր Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանությունն ու տարածումը հայերի շրջանում։ Ռուսական աստվածաշնչյան ընկերության և այլ միսիոներական կառույցների շնորհիվ հազարավոր օրինակներով աշխարհաբար Աստվածաշունչ է հրատարակվել և տարածվել,
2. *ավետարանական կաղրերի պատրաստում.* հաջորդ կարևոր գործը, որը գործնական հարթությունում ծավալվում

էր Մոսկվայում և այլ կենտրոններում, ավետարանական կաղրերի պատրաստումն ու «գործարկումն» էր։ Մոսկվայում և Ռուսաստանի հայկական այլ հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական կենտրոններում պատրաստվում էին ավետարանական քարոզիչներ, որոնք գործունեություն էին ծավալում տեղի հայության շրջանում։

Նկատենք նաև, որ գործնական հարթությունում Ռուսաստանի հայկական հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական կենտրոններում ավետարանականությանն առնչվող գործընթացներում ակտիվ մասնակցություն են ունեցել օտարազգի ավետարանական միսիոներները՝ շվեյցարական Բազելի Ավետարանական քարոզչական ընկերության անդամ միսիոներներ Ավգուստ Դիտրիխը, Ֆելիցիան Զարեմբան և այլք։

Պետք է նշել, որ Մոսկվայում և Ռուսաստանի հայկական այլ կենտրոններում մեծ քանակությամբ տպագրված աշխարհաբար Աստվածաշնչի և հատկապես Նոր Կտակարանի, ինչպես նաև այլ կրոնական գրականության մի զգալի հատվածն էլ ուղարկվել է Արևելյան Հայաստան, Անդրկովկաս (Բաքու, Շամախի, Թիֆլիս և այլն) և անգամ Արևմտյան Հայաստան ու տարածվել տեղի կրթօջախներում, հասարակ ժողովրդի, ինչպես նաև հոգևորականների շրջանում։ Ռուսաստանի հայկական կենտրոններում պատրաստված քարոզիչների մի մասը նույնպես, տեղի հայության շրջանում գործունեությունից բացի, գործուղվում էին նաև Արևելյան Հայաստան և Անդրկովկասի հայաշատ բնակավայրեր՝ այստեղի հայության շրջանում քարոզելու համար։ Փաստորեն, կարող ենք ասել, որ Մոսկվան և

Ռուսաստանի հայկական այլ հոգևոր-մշակութային, հասարակական-քաղաքական կենտրոնները եղել են նաև ավետարանականության տարածման օջախներ: Մոսկվայում և Ռուսաստանի հայկական այլ կենտրոններում 19-րդ դարի կեսերից ավետարանականության զարգացումը նպաստեց ողջ ռուսական կայսրության տարածքում, այդ թվում նաև՝ Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ բնակավայրերում ավետարանականության տարածմանը:

- *Օտարերկրյա միսիոներների գործունեությունը:* Ռուսաստանում ավետարանականության տարածումը պայմանավորված է եղել նաև օտարերկրյա ավետարանական միսիոներների գործունեությամբ: Ձևավորվելով Արևմտյան Եվրոպայում՝ ավետարանականությունը միսիոներների գործունեության հետևանքով սկսեց աստիճանաբար տարածվել աշխարհում և մասնավորապես՝ Արևմուտքից Արևելք՝ ընդգրկելով նաև Ռուսաստանը: Այստեղ 19-րդ դարից ծավալվող միսիոներական ալիքը երկրի բազմաթիվ ժողովուրդների հետ միասին ընդգրկեց նաև հայերին: Ռուսական կայսրությունում միսիոներների կողմից ավետարանականության տարածման մեկնակետը համարվում է 19-րդ դարի սկիզբը: 1821թ. Շվեյցարիայի բազելյան Ավետարանական քարոզչական ընկերության երկու ներկայացուցիչ միսիոներներ՝ Ավգուստ Դիտրիխը և Ֆելիցիան Զարեմբան, դիմում են ռուսական իշխանություններին՝ Ռուսաստանի մուսուլմանների շրջանում քրիստոնեական քարոզչություն իրականացնելու թույլտվության

խնդրանքով: Ելնելով քաղաքական նկատառումներից, այն է՝ 1804-12թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով Ռուսաստանին անցած մուսուլման բնակչությամբ շրջաններում անհանգիստ վիճակից, Ալեքսանդր Առաջին ցարը բավարարում է այդ խնդրանքը՝ թույլ տալով բազելյան քարոզիչներին գործունեություն ծավալել Ռուսաստանում: Քարոզիչներից մեկը՝ Ավգուստ Դիտրիխը, ինչպես հաղորդում է Հ.Ղուկասյանցը, Մոսկվայում Միքայել Սալլանթյան վարդապետի մոտ ուսանում է գրաբար հայերեն[1]: Այս փաստն ինքնին տեղիք է տալիս ենթադրելու, որ 19-րդ դարի սկզբին Ռուսաստան մուտք գործած բազելյան քարոզիչները մտադիր չէին իրենց միսիոներական գործունեությունը ծավալել զուտ մուսուլման բնակչության շրջանում: Ավետարանական քարոզչությունը պետք է իր ալիքի մեջ ներառեր նաև քրիստոնյաներին, այդ թվում և հայերին: Գործնականում դրա ապացույցը լինում է այն, որ շուտով բազելյան քարոզչական խումբը կրկին նամակով դիմում է ցարական իշխանություններին՝ հայերի շրջանում նույնպես ավետարանական քարոզչություն իրականացնելու թույլտվության խնդրանքով: Հայերի շրջանում միսիոներական գործունեության իրականացումը պայմանավորված էր հետևյալ գործոններով.

- *Հայերի ավելի մեծ ընկալունակությունն ավետարանական քարոզչության նկատմամբ՝ մուսուլմանների համեմատ:* Բախվելով ռուսական կայսրության մուսուլման բնակչու-

[1] *Հ.Ղուկասյանց,* Բողոքականություն Կովկասու Հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 3, հղումը ըստ՝ *Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.* նշվ. աշխ., էջ 22:

թյան՝ ավետարանական քարոզչության նկատմամբ անընկալունակության խնդրին՝ բազելյան քարոզիչները միսիոներական գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով որոշում են ավետարանականությունը տարածել նախ հայերի, որոնք ավելի ընկալունակ էին ավետարանական քարոզչության նկատմամբ, ապա նոր մուսուլմանների շրջանում։

- *Հայերի խնդրանքը։* Ռուսաստան և մասնավորապես՝ Կովկաս մուտք գործած քարոզիչներին հայերն են խնդրել իրենց շրջանում նույնպես իրականացնել կրոնական քարոզչություն։ Նման խնդրանքով հանդես են եկել ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր խավերի ներկայացուցիչները։ Միսիոներների հետ համագործակցությունը մեծ նպաստ է բերել հայերին՝ կրթական գործի կազմակերպման (դպրոցների հիմնում և գործարկում, եղած դպրոցների բարեկարգում) և հոգևոր-եկեղեցական բնույթի խնդիրների (Աստվածաշնչի և այլ կրոնական գրականության հրատարակում կամ ձեռքբերում) լուծման առումներով։

Բազելյան քարոզիչներն իրենց միսիոներական գործունեությունն իրականացնում էին հետևյալ բնագավառներում.

- *քարոզչական,*
- *կրթական,*
- *հրատարակչական։*

Այսքանով հանդերձ, ցարական կառավարության կողմից հայ ավետարանականներն այդպես էլ մինչև 1914թ. չճանաչվեցին որպես առանձին կրոնական համայնք։ Մինչև 1914թ. Ռու-

սական կայսրությունում գրանցված էր միայն Մոսկվայի Ավետարանական-Լյութերական եկեղեցին։ Վերջինս այդ ժամանակահատվածում փորձել է իր ազդեցության տակ գցել կամ անգամ իր կազմի մեջ ներառել նաև հայ ավետարանականներին։

Իշխանությունների կողմից ճանաչված չլինելով որպես առանձին համայնք կամ չունենալով սեփական կազմակերպչական կառույցը՝ մի կողմից, և հանդիպելով Մոսկվայի Ավետարանական-Լյութերական եկեղեցու՝ հայ ավետարանականներին իր ազդեցության տակ գցելու նկրտումներին՝ մյուս կողմից, Ռուսաստանի հայ ավետարանականների մի մասը ստիպված էր անդամակցել Մոսկվայի Ավետարանական-Լյութերական եկեղեցուն։ Իսկ այն հայ ավետարանականները, որոնք չէին ցանկանում անդամակցել Լյութերական եկեղեցուն՝ այդ կերպ չցանկանալով կտրվել ազգային արմատներից, բաժանվում էին երկու մասի։ Մի մասը չէր անդամակցում որևէ եկեղեցու՝ մնալով որպես անհատ ավետարանական։ Իսկ մյուս մասը, մնալով Հայ Առաքելական եկեղեցու անդամ, հարում էր ավետարանականությանը։ Այսպիսով, նախախորհրդային շրջանում Ռուսաստանի հայ ավետարանականներին կարելի է բաժանել երեք մասի՝ հիմք ընդունելով այս կամ այն հոգևոր-եկեղեցական կառույցին նրանց անդամակցությունը.

1. Մոսկվայի Ավետարանական-Լյութերական եկեղեցու անդամ հայ ավետարանականներ,
2. որևէ եկեղեցու չանդամակցող անհատ հայ ավետարանականներ,
3. Հայ Առաքելական եկեղեցուն անդամակցող, սակայն ավետարանականությանը հարող հայեր։

Խորհրդային շրջան

Ռուսաստանում կոմունիստական (խորհրդային) վարչակարգի հաստատումից հետո բոլոր կրոնական համայնքների հետ միասին տուժեց նաև հայ ավետարանական համայնքը: Պետական մակարդակով իրականացվում էր աթեիզմի քաղաքականություն, որը դրսևորվում էր նաև եկեղեցական գույքի նկատմամբ ոտնձգությունների, հոգևորականների դեմ իրականացվող հալածանքների ու հետապնդումների ձևով: Հոգևորականների նկատմամբ իրականացվող բռնություններն ու հալածանքները չէին կարող շրջանցել նաև ավետարանականներին: Նրանք նույնպես պետական մարմինների կողմից ենթարկվում են հետապնդումների՝ հիմնականում քաղաքական մեղադրանքներով (լրտեսություն, հակախորհրդային քարոզչություն և այլն): Թե ինչ հալածանքների ու հետապնդումների են ենթարկվել ավետարանական գործիչները խորհրդային շրջանում՝ ցույց է տալիս Խորհրդային Հայաստանի օրինակը: Այսպես, 1930-40թթ. Խորհրդային Հայաստանում բռնադատվել են հինգ հայ ավետարանական գործիչ, որոնցից երկուսը եղել են համայնքի ղեկավար[1]: 1928թ. Գերմանիայի օգտին լրտեսության մեղադրանքով եռամյա աքսորի է դատապարտվել Գյումրու հայ ավետարանական համայնքի ղեկավար Ռափայել Մելիք-Ադամյանը[2]:

Կրոնի և եկեղեցու նկատմամբ նման քաղաքականությունը մեծ հարված հասցրեց Ռուսաստանի հայ ավետարանական համայնքին՝ գրեթե կազմալուծելով այն: Խորհրդային տարինե-

[1] *Մանուկյան Ա.,* Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ., Երևան, 1999, էջ 128:
[2] Նույն տեղում, էջ 116:

ին Ռուսաստանում որևէ հայ ավետարանական կազմակերպչական կառույց (եկեղեցի, դպրոց և այլն) չկար։ Այդ մասին է վկայում Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության կողմից հրապարակվող հայ ավետարանական կազմակերպությունների ամենամյա տեղեկագիր-ուղեցույցը, համաձայն որի՝ ներկայումս Ռուսաստանի տարածքում գործող հայ ավետարանական կազմակերպությունները հիմնադրվել են միայն հետխորհրդային շրջանում[1]։

Սակայն նկատենք նաև, որ խորհրդային ժամանակաշրջանում՝ 1944թ., ստեղծվեց Համամիութենական Ավետարանական Քրիստոնյա-Բապտիստների եկեղեցին, որն ուներ տեղական կառույցներ կամ մասնաճյուղեր։ Նրա տեղական կառույցներից մեկն էր Երևանի Ավետարանական Քրիստոնյաների և Բապտիստների եկեղեցին։ Չի բացառվում, որ խորհրդային շրջանում ռուսաստանաբնակ հայ ավետարանականներն անդամակցում էին համամիութենական վերոհիշյալ ավետարանական կառույցին։

Հետխորհրդային շրջան

Խորհրդային կարգերի տապալմամբ կրոնական ազատությունների ընձեռումը նպաստավոր պայմաններ ստեղծեց Ռուսաստանում հայ ավետարանականության վերածննդի համար։ 1993թ. Մոսկվայում հիմնադրվեց տեղի Հայ Ավետարանական եկեղեցին։ Հետագայում հայ ավետարանական եկեղեցիներ հիմնադրվեցին նաև Սոչիում (1997թ.) և Խոստայում (2001թ.), իսկ

[1] Տե՛ս AMAA Directory 2011: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 16 http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf

2010թ. Սարատովում հիմնվեց Հայ Ավետարանական եղբայրություն[1]: Հոգևոր-եկեղեցական կառույցների հիմնադրումը համայնքի տեսք հաղորդեց ռուսաստանաբնակ հայ ավետարանականներին, որոնք սկսեցին աստիճանաբար աճել քանակապես և աշխարհագրորեն սփռվել Ռուսաստանի տարբեր բնակավայրերում: Հետխորհրդային շրջանում Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի վերածննդի հիմքում ընկած էին հետևյալ գործոնները.

- *Հայ ավետարանականների կրոնական գիտակցության վերազարթոնքը և վերելքը:*
- *Ավետարանական հայերի՝ Հայաստանից Ռուսաստան գաղթը:* Հայերի գաղթը դեպի Ռուսաստան, ինչը բնորոշ էր նաև խորհրդային շրջանին, առանձնակի մեծ չափերի հասավ հետխորհրդային շրջանում՝ կապված նորանկախ Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր կացության հետ: Դեպի Ռուսաստան հայ գաղթականների բանակը մշտապես ընդգրկել է հայերի տարբեր, այդ թվում նաև՝ դավանանքային շերտերին: Հետազոտող Մ.Սավվայի դիտարկմամբ՝ Կուբանի հայ բողոքական համայնքի ձևավորումն, օրինակ, կապված է 1990-ական թթ. Հայաստանից այստեղ բողոքական հայերի ներգաղթի հետ[2]:
- *Ռուսաստանում կրկին կամ նոր թափով տարածում ստացող ավետարանականությունը:* Հետխորհրդային շրջանում, օգտվելով ընձեռված ազատություններից, արևմտյան

[1] Նույն տեղում:
[2] *Ժամակոչյան Ա. և ուրիշներ,* Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները հարավային Ռուսաստանում, Երևան, 2010, էջ 164-165:

միսիոներական կառույցները կրկին սկսեցին լայն գործունեություն ծավալել Ռուսաստանում։

Համեմատության մեջ դիտարկելով Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի պատմության վերոհիշյալ երեք փուլերը՝ կարող ենք նշել, որ երրորդ փուլը տարբերվում է նախորդ երկու փուլերից երկու փոխկապակցված հատկանիշներով.

1. Եթե առաջին երկու փուլերում ռուսաստանաբնակ հայ ավետարանականները հանդես չէին գալիս որպես առանձին էթնիկ հիմքով ձևավորված դավանանքային ընդհանրություն (համայնք), այլ տարրալուծված էին Ռուսաստանի ընդհանուր բողոքական համայնքի մեջ, ապա հետխորհրդային շրջանում ընձեռված կրոնական և այլ բնույթի ազատությունները նպաստավոր պայմաններ ստեղծեցին ազգային հիմքով հայ ավետարանական համայնքի ձևավորման համար։ Հետևաբար, միայն հետխորհրդային շրջանում ռուսաստանաբնակ հայ ավետարանականները կազմավորվեցին որպես առանձին էթնիկ հիմքով ձևավորված դավանանքային (ավետարանական) ընդհանրություն՝ Ռուսաստանի հայ ավետարանական համայնք։
2. Երկրորդ առանձնահատկությունը բխում է առաջինից։ Եթե իրենց պատմության առաջին երկու փուլերում ռուսաստանաբնակ հայ ավետարանականները չունեին իրենց կազմակերպչական կառույցները, ապա հետխորհրդային շրջանում նրանք ստեղծեցին իրենց առանձին ազգային ավետարանական կազմակերպչական կառույցները։

ԳԼՈՒԽ 2
ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի արդի վիճակին անդրադառնալիս դիտարկումները կենտրոնանում են հիմնականում համայնքի թվաքանակի, աշխարհագրական սփռվածության, կազմակերպչական կառույցների և այլ խնդիրների վրա։ Ըստ այդմ՝ Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի արդի վիճակն ընդհանուր գծերով կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

1. Այն աչքի է ընկնում քանակական սահմանափակությամբ։
2. Չնայած դրան, աշխարհագրորեն սփռված է Ռուսաստանի հայաշատ կենտրոններում։
3. Կան խնդիրներ, սակայն կա նաև զարգացման և ընդլայնման միտում, ինչը դրսևորվում է կազմակերպչական կառույցների.
   - քանակական աճով,
   - աշխարհագրական սփռվածության ընդլայնմամբ,
   - բազմազանության մեծացմամբ։

Թվաքանակը և աշխարհագրական սփռվածությունը

Ռուսաստանի հայ ավետարանական համայնքը կենտրոնացած է հիմնականում այդ երկրի երկու հայահոծ բնակավայրերում՝ Մոսկվայում և Կրասնոդարի երկրամասում։ Ինչպես ողջ երկրի մասշտաբով, այնպես էլ առանձին բնակավայրերում հայ ավետարանական համայնքի կոնկրետ թվաքանակի վերաբերյալ

հստակ վիճակագրություն առկա չէ: Կան առանձին տվյալներ, որոնք թույլ են տալիս որոշակի ընդհանրացումներ անել այս համայնքի թվաքանակի և աշխարհագրական սփռվածության վերաբերյալ: Որպես այդպիսի աղբյուր են ծառայում հայ ավետարանական եկեղեցիների հաղորդական անդամների թվի, ինչպես նաև կազմակերպչական կառույցների վերաբերյալ տվյալները:

1. *Եկեղեցիների հաղորդական անդամների թվաքանակի մասին տվյալներ:* 1990-ական թթ. վերջին Մոսկվայի հայ ավետարանական համայնքն ուներ մոտ 40 հաղորդական անդամ, իսկ Սոչիինը՝ 35[1]: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ավետարանական եկեղեցիների հաղորդական անդամների թիվը միջինը կազմում է ընդհանուր անդամների թվի 15-20%-ը[2]: Ըստ այդմ՝ կարող ենք ասել, որ 1990-ական թթ. վերջին Մոսկվայում Հայ Ավետարանական եկեղեցու անդամների թիվը կազմում էր մոտ 230 մարդ, իսկ Սոչիում՝ մոտ 200 մարդ:
2. *Կազմակերպչական կառույցների դիտարկումը* ցույց է տալիս Ռուսաստանի հայ ավետարանական համայնքում նկատվող հետևյալ միտումները.
   - *Քանակական աճի միտում:* Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցների քանակական աճը վկայում է այն մասին, որ, չնայած ներկայիս սահմանափակությանը, համայնքի թվաքա-

[1] *Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.,* նշվ. աշխ., էջ 149:

[2] Սույն եզրակացությունը հիմնված է Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքների մասին վիճակագրական տվյալների վերլուծության վրա, որոնք ներկայացված են Կ.Ատանալյանի աշխատությունում: Տե՛ս *Ատանալեան Կ.,* Յուշարձան հայ աւետարանականաց եւ աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952, էջ 357:

նակն ունի աճի միտում: Այսպես, առաջին հայ ավետարանական կազմակերպչական կառույցը հիմնվեց 1993թ., երկրորդը՝ 1997թ., երրորդը՝ 2001թ. և չորրորդը՝ 2010թ.: Արդ, Ռուսաստանի հայ ավետարանական կազմակերպչական կառույցների վերջին շրջանում արձանագրած քանակական աճը կարող է պայմանավորված լինել տեղի հայ ավետարանական համայնքի թվաքանակի աճով:

- *Աշխարհագրական սփռվածության ընդլայնման միտում:* Հայ ավետարանական կազմակերպչական կառույցների սփռվածությունը Մոսկվայում, Սոչիում, Խոստայում և Սարատովում[1] վկայում է այն մասին, որ, չնայած քանակական սահմանափակությանը, Ռուսաստանի հայ ավետարանականները կենտրոնացած չեն որևէ բնակավայրում, այլ սփռված են երկրի այդ հայաշատ վայրերում:

Չնայած կոնկրետ տվյալների բացակայությանը, այնուամենայնիվ, կարելի է ասել, որ Ռուսաստանի հայ ավետարանականները գլխավորապես կենտրոնացած են Մոսկվայում և Մեծ Սոչիում: Նախ՝ Մոսկվայում է կենտրոնացած ռուսաստանաբնակ հայության հարաբերական մեծամասնությունը: Այստեղ հայերի թիվը կազմում է մոտ 500 հազ.[2]: Բացի այդ, Մոսկվայի Հայ Ավետարանական եկեղեցին առաջինը հիմնված հայ ավետարանական կազմակերպչական կառույցն է Ռուսաստանում:

[1] Տե՛ս AMAA Directory 2011 ..., p. 16.
[2] Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 462:

Իսկ Մեծ Սոչին, բացի նրանից, որ նույնպես աչքի է ընկնում հայահոծությամբ (մոտ 100 հազ.[1]), հայ ավետարանականության տեսանկյունից նշանավոր է նաև նրանով, որ այստեղ են կենտրոնացված Ռուսաստանի հայ ավետարանական կազմակերպչական կառույցներից երկուսը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Ռուսաստանի հայ ավետարանականների մի զգալի հատված էլ կենտրոնացած է այստեղ։

Ինչ վերաբերում է Սարատովին, ապա բացի այն, որ վերջինս հայերի թվով զգալիորեն զիջում է Մոսկվային և Սոչիին (Սարատովի հայ բնակչությունը կազմում է մոտ 20 հազ. մարդ[2]), այն ունի ընդամենը մեկ հայ ավետարանական կազմակերպչական կառույց, այն էլ ոչ թե եկեղեցու, այլ եղբայրության տեսքով, որը հիմնադրվել է միայն 2010թ.։ Այս հանգամանքները, ինչպես նաև այն, որ Սարատովի հայ ավետարանական համայնքը վերապատվելի չունի, վկայում են Սարատովի հայ ավետարանական համայնքի նոր ձևավորված լինելու մասին։ Ասվածը թույլ է տալիս ենթադրել, որ Սարատովի հայ ավետարանականները քանակապես զիջում են Մոսկվայի և Մեծ Սոչիի հայ ավետարանականներին։

Փոքրաթիվ ավետարանական հայեր կան նաև այլ վայրերում (օրինակ՝ Կրասնոդարում), որոնք, չունենալով իրենց կազմակերպչական կառույցները, ստիպված են օգտվել այլ բողոքական եկեղեցիներից։ Այդ կերպ հայ ավետարանականները հանդիսանում են տվյալ բնակավայրի բողոքական համայնքի մի մասը՝ պահպանելով որոշակի ինքնուրույնություն։ Այդ-

[1] Նույն տեղում, էջ 473։
[2] Նույն տեղում, էջ 481։

պիսի համայնքների մասին վիճակագրական տվյալները բացակայում են։

Ամփոփելով՝ Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի թվաքանակի և աշխարհագրական սփռվածության մասին կարող ենք ասել հետևյալը.

1. Համայնքը փոքրաթիվ է (թերևս, համայնքի թվաքանակը չի գերազանցում 1000-ը)։
2. Չնայած թվային սահմանափակությանը, այն սփռված է երկրի հայաշատ վայրերում՝ Մոսկվայում, Սոչիում, Խոստայում և այլուր։
3. Համայնքն ունի թե՛ քանակական աճի և թե՛ աշխարհագրական սփռվածության ընդլայնման միտում։

Կազմակերպչական կառույցները

Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցները հիմնադրվել են միայն հետխորհրդային շրջանում։ Ներկայումս գործում են չորս հայ ավետարանական կառույցներ, որոնք միայն հոգևոր-եկեղեցական բնույթի են։ Դրանք բաժանվում են երկու խմբի՝ եկեղեցիներ (3) և ավետարանական եղբայրություն (1).

- *Եկեղեցիներ։* Ռուսաստանում գործող հայ ավետարանական 3 եկեղեցիները գտնվում են Մոսկվայում, Սոչիում և Խոստայում։ Առաջինը Մոսկվայի Հայ Ավետարանական եկեղեցին է։ Այն հիմնադրվել է 1993թ.։ Ներկայումս եկեղեցին գլխավորում է վերապատվելի Մասիս Հակոբյանը։ Հաջորդ հայ ավետարանական եկեղեցին Ռուսաստանում հիմնադրվել է 1997թ.՝ Սոչիում, իսկ երրորդը՝ 2001թ.՝ Խոս-

տայում։ Սոչիի և Խոստայի Հայ Ավետարանական եկեղեցիների հոգևոր հովիվը միևնույն անձն է՝ վերապատվելի Սասուն Կարախանյանը։

- *Ավետարանական եղբայրություն։* Միակ ավետարանական եղբայրությունը Սարատովի Հայ Ավետարանական եղբայրությունն է, որը հիմնադրվել է 2010թ.։ Կառույցը ղեկավարում է Վահան Ֆրանկյանը։

Դիտարկումը ցույց է տալիս, որ համայնքը, բացի հոգևոր-եկեղեցական կառույցներից, չունի այլ (կրթական, սոցիալական և այլն) կազմակերպչական կառույցներ։ Հոգևոր-եկեղեցական կառույցները, բացի համայնքների հոգևոր պահանջմունքները բավարարելուց, իրենց վրա են վերցնում նաև նրանց կազմակերպման և ղեկավարման գործառույթները՝ այդ կերպ հանդիսանալով նաև համայնքների ղեկավար կառույցներ։ Իսկ դրանց հոգևոր առաջնորդներն, ըստ էության, համայնքների ղեկավարներն են։

Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի կազմակերպչական կառույցների քանակական սահմանափակությունը կարելի է բացատրել հետևյալ հանգամանքներով.

1. Խորհրդային աթեիստական անցյալից հետո Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի վերազարթոնքը նոր է սկսվել, և վերջինս դեռ չի հասցրել թոթափել խորհրդային անցյալի հետևանքները։ Դրա համար ժամանակ և միջոցներ են հարկավոր։
2. Ի տարբերություն այլ, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի երկրների (Սիրիա, Լիբանան, Իրան և այլն),

որտեղ կրոնի դերը շատ ավելի մեծ է, ուստիև կրոնական կառույցներին վերապահվում են ավելի լայն գործառույթներ, Ռուսաստանն աշխարհիկ բնույթի պետություն է, որտեղ կրթական, սոցիալական, առողջապահական և այլ գործառույթները վերապահվում են աշխարհիկ կառույցներին: Իսկ կրոնական կազմակերպություններին և կառույցներին մնում է հիմնականում իրենց համայնքների հոգևոր-եկեղեցական պահանջմունքների բավարարման գործառույթը:

Թեև վերջին շրջանում նկատվող դրական միտումներին, այնուամենայնիվ, կազմակերպչական կառույցների առումով Ռուսաստանի հայ ավետարանական համայնքում դեռևս առկա են խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Այդպիսի խնդիրներ են.

1. Եկեղեցական կառույցների անբավարարությունը: Ռուսաստանի հայ ավետարանական համայնքում ներկայումս գործող չորս հոգևոր-եկեղեցական կառույցները բավարար չեն ամբողջ համայնքի կարիքները բավարարելու համար: Կան համայնքներ, որոնք չունեն սեփական եկեղեցի (օրինակ՝ Կրասնոդարում): Մոսկվայում, որը դասվում է ժամանակակից մեգապոլիսների շարքին, մեկ եկեղեցին կարող է հեռու գտնվել քաղաքի տարբեր հատվածներում բնակվող հայ ավետարանականների համար:

Այն հայ ավետարանականները, որոնք չեն կարող իրենց հոգևոր-եկեղեցական պահանջմունքները բավարարել հայ ավետարանական եկեղեցիներում, ստիպված են կամ հաճախել այլ բողոքական եկեղեցիներ, կամ էլ օգտագործել այլ բողոքական եկեղեցիների շենքերն իրենց ծեսերն իրականացնելու

համար։ Այն համայնքները, որոնք ունեն սեփական հոգևոր-եկեղեցական կառույց, ավելի մոտ են կանգնած ազգային արմատներին, քանի որ սեփական հոգևոր-եկեղեցական կառույցի առկայությունը թույլ է տալիս կրոնական ծեսերն ու արարողությունները, ինչպես նաև այլ միջոցառումները կազմակերպել և իրականացնել հայերեն, ազգային սովորույթներին ու ավանդույթներին համապատասխան։

2. Հոգևոր գործիչների խնդիրը։ Թեև Ռուսաստանի չորս հայ ավետարանական կառույցներն էլ ապահովված են ղեկավարներով, և դրանցից երեքի՝ Մոսկվայի, Սոչիի և Խոստայի Հայ Ավետարանական եկեղեցիների ղեկավարներն ունեն վերապատվելիի աստիճան, սակայն Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի՝ հոգևոր գործիչներով ապահովվածության խնդիրն առայժմ կարելի է լուծված համարել միայն որոշակի վերապահումներով, քանի որ այս ասպարեզում նույնպես դեռևս առկա են որոշ խնդիրներ։

3. Միասնական Հայ Ավետարանական եկեղեցու բացակայությունը։ Ինչպես երևում է կազմակերպչական կառույցների բնույթից, Ռուսաստանի հայ ավետարանական համայնքը չունի մեկ միասնական կազմակերպչական կառույց, որը կմիավորի երկրի բոլոր հայ ավետարանականներին և կհանդիսանա նրանց ղեկավար կառույցը։ Այնուամենայնիվ, որոշ վերապահումներով կարելի է որպես Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի կենտրոն դիտել Մոսկվայի Հայ Ավետարանական եկեղեցին՝ հետևյալ նկատառումներով.

- Այն առաջինը հիմնադրված (1993թ.) հայ ավետարանական կառույցն է Ռուսաստանում:
- Մայրաքաղաքում գործող կառույցները որոշակի առավելություն ունեն այլ բնակավայրերում գործող հայկական կառույցների համեմատությամբ:
- Ռուսաստանաբնակ հայությունն ամենաշատը կենտրոնացած է Մոսկվայում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այստեղ է կենտրոնացած նաև ռուսաստանաբնակ հայ ավետարանականների մեծ մասը:

4. Պաշտոնական գրանցումը: Թեև Ռուսաստանի հայաշատ բնակավայրերում գործում են հայ ավետարանական կազմակերպչական կառույցներ, սակայն Ռուսաստանի Հայ Ավետարանական եկեղեցի, որպես այդպիսին, առկա չէ, ինչը նշանակում է, որ Ռուսաստանում հայ ավետարանական համայնքը պաշտոնապես գրանցված չէ, այսինքն՝ չունի իրավաբանական անձի կարգավիճակ: Այստեղից էլ, թերևս, գալիս է միասնական հայ ավետարանական կազմակերպչական կառույցի բացակայությունը: Սույն խնդիրը կապված է օրենսդրական և կազմակերպչական բարդությունների հետ: Խղճի ազատության և կրոնական միավորումների մասին ՌԴ օրենքը՝ ընդունված 1997թ., կրոնական կազմակերպությունները դասակարգելով երկու մասի՝ տեղական և կենտրոնացված, տեղական կազմակերպության գրանցման համար նրա հիմնադիր խմբից պահանջում է նվազագույնը 15-ամյա բնակություն տվյալ վայրում[1]:

[1] Закон о свободе совести и религиозных объединениях, статья 8, ч. 2 и статья 9, ч. 1 http://pravbeseda.ru/library/index.php?page=book&id=571

Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս Ռուսաստանի հայ ավետարանական կառույցների հիմնադրման տարեթվերը, դրանցից ոչ բոլորը կարող են բավարարել օրենսդրական այս պահանջին։ Ինչ վերաբերում է կենտրոնացված կազմակերպությանը, ապա համաձայն վերոնշյալ օրենքի՝ այն կարող է գրանցվել միայն նվազագույնը միևնույն դավանանքի երեք տեղական կազմակերպությունների առկայության պարագայում[1]։

Ինչևէ, Ռուսաստանի հայ ավետարանական համայնքն իր կազմակերպչական կառույցներով մտնում է Եվրասիայի Հայ Ավետարանական միության մեջ, որի կենտրոնը գտնվում է Երևանում։ Սույն հանգամանքից ելնելով՝ որոշ վերապահումներով կարելի է փաստել, որ Ռուսաստանի հայ ավետարանական համայնքների համար, որոնք չունեն միասնական ղեկավար մարմին, կենտրոն է հանդիսանում Երևանում գտնվող Եվրասիայի Հայ Ավետարանական միությունը։

[1] Նույն տեղում, статья 9, ч. 1.

ԳԼՈՒԽ 3
ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԱՐԴԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Ռուսաստանաբնակ հայ ավետարանականները կրոնական ինքնության հիմքով մաս են կազմում Ռուսաստանի ընդհանուր բողոքական համայնքի, իսկ էթնիկ ինքնության հիմքով նրանք ռուսաստանաբնակ հայության անքակտելի բաղադրիչն են: Այս «երկակիությունը» պահանջում է արդի ռուսաստանյան միջավայրում հայ ավետարանականների հիմնախնդիրները դիտարկել տարբեր հարթություններում:

Հարաբերություններն այլ ավետարանական համայնքների հետ

Ռուսաստանի ընդհանուր բողոքական համայնքի մաս կազմելը որոշակի նպաստներ է բերում հայ ավետարանական համայնքին: Դավանանքային պատկանելությունը ենթադրում է որոշակի շփումներ և համագործակցություն Ռուսաստանի այլ բողոքական եկեղեցիների և միսիոներական գործունեություն իրականացնող կառույցների ու կազմակերպությունների հետ: Վերջիններիս հետ փոխօգնությունը հնարավորություն է տալիս Ռուսաստանի հայ ավետարանական համայնքին լուծել որոշակի խնդիրներ: Ռուսաստանի այլ բողոքական համայնքների հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս հայերին իրենց հոգևոր-եկեղեցական պահանջմունքները բավարարելու

համար օգտվել այդ համայնքների եկեղեցական կառույցներից։ Օրինակ, Կրասնոդարում հայ ավետարանական համայնքը, որը չունի սեփական եկեղեցական կառույց, իր հոգևոր-եկեղեցական պահանջմունքները բավարարում է տեղի «Վիփանիա» եկեղեցու միջոցով։ «Արդեն 10 տարի այստեղ ամիսը երկու անգամ հայերեն ժամերգություններ են կատարվում»[1]։

Միջդավանական հարաբերությունները

Ռուսաստանի հայ ավետարանականները, լինելով ռուսաստանաբնակ հայության մի մասը, կտրված չեն տեղի հայ առաքելականներից ու կաթողիկեներից, այլ նրանց հետ միասին կազմում են մեկ ամբողջություն՝ Ռուսաստանի հայ համայնքը։ Միջդավանական փոխհարաբերություններում տիրապետում է ավելի շատ համերաշխության, քան մրցակցության կամ, առավել ևս, հակամարտության ոգին։ Համենայնդեպս, դավանանքային հողի վրա առճակատման դեպքեր հայտնի չեն։ Միջդավանանքային համերաշխության հիմքում ընկած գործոնները կարելի է բաժանել երկու խմբի՝ տեսական-աշխարհայացքային և գործնական։

Տեսական-աշխարհայացքային գործոնները ռուսաստանաբնակ հայության գիտակցությունում գերիշխող դրույթներն ու մոտեցումներն են։ Որպես այդպիսիք կարելի է առանձնացնել հետևյալները.

1. *Ազգային բարձր ինքնագիտակցությունը։* Չնայած իրենց դավանանքային որոշակի առանձնահատկությանը, հայ

[1] *Гюльназарян М.,* Армянские богослужения в «Вифании»//САР. №9 (135), 31.08.2006, с. 2. Հղումը՝ ըստ *Ժամկոչյան Ա. և ուրիշներ,* Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները հարավային Ռուսաստանում, Երևան, 2010, էջ 165։

ավետարանականները միշտ էլ իրենց համարել են Հայության անբաժանելի մասը։ Նրանք միշտ էլ մերժել են ազգային ինքնությունը կրոնական կամ դավանանքային պատկանելությամբ պայմանավորելու մոտեցումները՝ ազգային ինքնության հիմքում տեսնելով ազգային ինքնագիտակցությունը։ Համարելով իրենց հայության անբաժանելի մասը՝ հայ ավետարանականները միշտ էլ հաղորդակից են եղել Հայության առջև ծառացած խնդիրներին ու մարտահրավերներին և փորձել Հայության մյուս հատվածների հետ համատեղ լուծել այդ խնդիրները կամ դիմագրավել այդ մարտահրավերներին[1]։ Միաժամանակ, հայության անբաժան մասը լինելու ձգտումն ու դրսևորումն է եղել պատմության ընթացքում հայ ավետարանականների առավել ընդգծված նախանձախնդրությունն ազգային ինքնության պահպանման հարցում։

2. *Ընդհանուր կրոնը՝ քրիստոնեությունը, կամ ընդհանուր կրոնական՝ քրիստոնեական պատկանելությունը։* Չնայած որոշակի դավանանքային տարբերություններին, ռուսաստանաբնակ հայ ավետարանականներն իրենց ազգակից առաքելականների և կաթողիկեների հետ միասին միևնույն կրոնի՝ քրիստոնեության հետևորդներ են, ինչը հիմք է տալիս դավանանքային տարբերություններին երկրորդական նշանակություն տալով՝ առաջնային համարել ընդհանուր կրոնական՝ քրիստոնեական պատկանելությունը։ Արդ, դավանանքային տարբերությունների կողքին ընդհա-

[1] Առավել մանրամասն տե՛ս *Հովյան Վ.,* Բողոքական հայերը՝ տարադավան հայության շերտ, Գլոբուս. Ազգային անվտանգություն, 2010, թիվ 1, էջ 15-20։

նուր կրոնական՝ քրիստոնեական պատկանելությունն ապահովում է ընդհանրություններ բազմաթիվ հարցերում, որոնք թե՛ քանակապես և թե՛ այլ առումներով գերակշռություն ունեն դավանանքային տարբերությունների նկատմամբ: Սա նույնպես լուրջ հիմք է ռուսաստանաբնակ հայ ավետարանականների՝ առաքելական և կաթողիկե հայերի հետ մեկ միասնական ամբողջության՝ Ռուսաստանի հայ համայնքի շրջանակներում ինտեգրման համար, քանի որ արդի հասարակությունում կրոնական հանդուրժողականության ապահովման գործուն մեխանիզմներից մեկն էլ տարբեր դավանանքային հատվածների ընդհանուր կրոնական պատկանելության գիտակցությունն է[1]:

3. *Աշխարհիկությունը:* Արդի աշխարհում, այդ թվում նաև՝ Ռուսաստանում, տիրապետող աշխարհիկությունը երկրորդական պլան է մղում մարդկանց միջև կրոնադավանանքային տարբերությունները: Աշխարհիկ կառույցներում կամ գործունեության ոլորտներում ներգրավված մարդկանց կրոնադավանանքային պատկանելության հարցը քիչ է հետաքրքրում: Մի խոսքով, չնայած կրոնականության հանդեպ բացասական վերաբերմունքին, արդի հասարակությունում կրոնական հանդուրժողականության ապահովման գործուն մեխանիզմներից մեկն էլ աշխարհիկությունն է[2]:

[1] Տե՛ս *Միմավորյան Ա., Հովյան Վ.,* Կրոնական հանդուրժողականությունը արդի հասարակությունում, Գլոբուս. Ազգային անվտանգություն, 2011, թիվ 1, էջ 27-28:
[2] Նույն տեղում, էջ 27:

Գործնական հիմքերը, որոնք ապահովում են Ռուսաստանի հայ ավետարանականների միջդավանանքային համերաշխությունը հայ առաքելական և կաթողիկե համայնքների հետ, այն խնդիրներն են, որոնք փոխգործակցության դաշտ են ապահովում Ռուսաստանի հայության տարբեր դավանանքային շերտերի համար: Որպես այդպիսիք կարելի է առանձնացնել հայապահպանությունը, ռուսաստանյան հասարակական-քաղաքական միջավայրի հարուցած մարտահրավերներին դիմակայումը, համազգային խնդիրների (Հայոց ցեղասպանության ճանաչում և դատապարտում, Արցախյան հիմնահարց և այլն) լուծման համար պայքարը:

1. Հայապահպանություն: Գաղտնիք չէ, որ Սփյուռքի գրեթե բոլոր համայնքների գլխին էլ դամոկլյան սրի նման կախված է ուծացման վտանգը: Ռուսաստանի հայ համայնքն այս հարցում նույնպես բացառություն չէ: Ռուսաստանում հաստատված հայերը, ինտեգրվելով տեղի միջավայրին, կորցնում են ազգային ինքնության այնպիսի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են մայրենի լեզուն, ազգային մշակույթին ու հոգևոր ժառանգությանը հաղորդակցությունը, ազգային ինքնագիտակցությունը և այլն[1]: Հետևաբար, Ռուսաստանի հայ համայնքում հայապահպանության խնդիրը նույնպես դրված է ամենայն սրությամբ: Սա այն բնագավառն է, որտեղ հաջողության հասնելու համար պահանջվում է ազգային ներուժի առավելագույն համախմբում:

[1] Դա, թերևս, պայմանավորված է ռուսական հասարակության մեջ հայերի արագ և սահուն ինտեգրացիայով, ինչն էլ իր հերթին պայմանավորված է հայ և ռուս ժողովուրդների՝ դարեր շարունակ նույն պետության մեջ ապրելու հանգամանքով, մշակութա-քաղաքակրթական ընդհանրություններով, ինչպես նաև որոշակիորեն ընդհանուր անցյալով:

2. Ռուսաստանի հասարակական-քաղաքական առանձնահատկություններով պայմանավորված մարտահրավերների դիմակայում: Ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչները՝ անկախ իրենց կրոնադավանանքային պատկանելությունից, հետխորհրդային շրջանում ենթարկվել և շարունակում են ենթարկվել այդ երկրի հասարակական-քաղաքական միջավայրի ծնունդ հանդիսացող այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են, օրինակ, ահաբեկչությունը, քաղաքական ցնցումները, ազգամիջյան բախումները, ազգայնամոլական ուժերի բռնությունները այլազգիների նկատմամբ և այլն: Ռուսաստանի հայերի միության նախագահ Ա.Աբրահամյանը ժամանակակից Ռուսաստանի տագնապալի միտումներից մեկն է համարում երիտասարդության շրջանում ագրեսիվության, հանցավորության, ծայրահեղական կազմավորումների մեջ ընդգրկվածության աճը, ինչպես նաև կրթության մակարդակի, բարոյական և ֆիզիկական առողջության անկումը[1]:

Այդպիսի մարտահրավերներին դիմակայելու կամ դրանց հնարավոր հետևանքները ռուսաստանաբնակ հայության համար նվազագույնի հասցնելու նպատակով կրկին պահանջվում է ազգային ներուժի համախմբում: Վերոհիշյալ մարտահրավերներին դիմակայելը, ինչպես նաև հայապահպանության խնդիրը այն բնագավառներն են, որտեղ հայ համայնքի ներուժի ջլատումը կամ հատվածականությունը՝ ցանկացած, այդ թվում նաև կրոնադավանանքային հիմքով, մեծ շռայլություն կլիներ և մեծ հարված կհասցներ ընդհանուր գործին:

[1] Встреча Владимира Путина с руководителями общественных организаций и религиозных конфессий: президент САР Ара Абрамян предлагает В.В. Путину создать общероссийскую молодёжную организацию http://sarinfo.org/sarnews/20-07-11.shtml

3. Համազգային խնդիրների լուծման համար պայքարը: Համազգային խնդիրների լուծման համար միասնական պայքարը նույնպես վճռական նշանակություն ունի միջդավանական համերաշխության ապահովման գործում: Հայոց ցեղասպանության պատմական հիշողությունը Սփյուռքում հայ ինքնության պահպանման գլխավոր հենասյունն է, քանի որ, ըստ ազգագրագետ Հ.Մարությանի. «...էթնիկ ընդհանրության կամ ազգի անդամների միջև կիսվող հիշողությունը հանդես է գալիս իբրև դրանց անդամներին կապող, նրանց հարաբերություններն ու գործողությունները կառուցող միջոց»[1]: Հետևաբար, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցն այն ոլորտն է, որը տասնամյակներ շարունակ համախմբող ուժ է եղել Սփյուռքի հայ համայնքների համար: Այդ գաղափարի դրոշի ներքո արտերկրի հայ համայնքներում տասնամյակներ շարունակ համախմբվել են սփյուռքահայ համայնքների աշխարհիկ և հոգևոր կառույցները: Ռուսաստանի հայ համայնքը նույնպես այս հարցում բացառություն չէ:

Միջդավանական համագործակցության ձևերը և մակարդակները

Ռուսաստանաբնակ հայ ավետարանականների՝ Ռուսաստանի ընդհանուր հայ համայնքի մասը լինելու վկայությունը պետք է լինեն միջդավանական համագործակցությունն ու շփումները հայ առաքելական և կաթողիկե համայնքների հետ: Ընդ որում՝ խնդիրն ունի երկու մակարդակ.

[1] *Մարության Հ.,* Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Երևան, 2006, էջ 9:

- *Անհատական,* երբ միմյանց հետ հարաբերությունների կամ համագործակցության մեջ են մտնում տարբեր դավանանքներ ներկայացնող անհատ հայեր։
- *Ինստիտուցիոնալ,* երբ շփումներն ու համագործակցությունը ծավալվում են Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների միջև։

Տեղի հայ առաքելականների և կաթողիկեների հետ Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի միջդավանական համագործակցության ապահովման առումով դեռևս առկա են լուրջ խնդիրներ և անելիքներ։ Եթե անհատական մակարդակով շփումներն ու համագործակցությունը տրամաբանորեն պետք է ինչ-որ չափով առկա լինեն, ապա ինստիտուցիոնալ մակարդակով հայ ավետարանականների համագործակցությունը հայ առաքելական և կաթողիկե հարանվանությունների հետ, կարելի է ասել, գտնվում է գրեթե զրոյական մակարդակի վրա։

Անհատական մակարդակով միջդավանանքային համագործակցությունը սովորաբար դրսևորվում է հիմնականում համազգային և աշխարհիկ կառույցների գործունեության մեջ տարբեր դավանանքներ ներկայացնող անհատ հայերի ընդգրկվածության ու մասնակցություն ձևերով։ Ռուսաստանում գործում են աշխարհիկ բնույթի բազմաթիվ հայկական կազմակերպություններ, ինչպես համապետական, այնպես էլ տարածաշրջանային և տեղական մասշտաբներով։ Այդ կազմակերպությունների մեջ ամենանշանավորը, անշուշտ, Ռուսաստանի հայերի միությունն է, որը մասնաճյուղեր ունի երկրի գրեթե բոլոր հայաշատ վայրերում։ Ռուսաստանում գործում են նաև

համազգային կառույցների մասնաճյուղերը։ Այս կառույցներն իրենց գործունեությունը տարածում են ողջ հայ համայնքի, այլ ոչ թե նրա այս կամ այն դավանանքային հատվածի վրա։ Այդ կառույցների գործունեության մեջ կարող է ընդգրկվել ցանկացած հայ՝ անկախ դավանանքային պատկանելությունից։ Հետևաբար, ամենևին էլ բացառված չէ, որ Ռուսաստանում գործող աշխարհիկ բնույթի հայկական կազմակերպությունների գործունեության մեջ ընդգրկված լինեն կամ դրանց անդամակցեն նաև ավետարանական հայերը։

Ինչ վերաբերում է համազգային միջոցառումներին, ապա դրանց մասնակցող հայերի ցանկն ընդգրկում է Հայության բոլոր դավանանքային շերտերին։ Այնպիսի համազգային միջոցառումներ, ինչպիսիք են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչումը, Հայաստանի անկախությանը նվիրված տոնակատարությունները և այլն, ընդհանուր են թե՛ առաքելական, թե՛ կաթողիկե և թե՛ ավետարանական հայերի համար։ Հետևաբար, համազգային միջոցառումներն ազգային համախմբման առումով լուրջ ներուժ ունեցող գործիքներ են։

Սակայն տեղի հայությանն ինտեգրման և նրա անբաժան մասը դառնալու գործում անփոխարինելի դեր և նշանակություն կարող է ունենալ ինստիտուցիոնալ մակարդակով համագործակցությունը հայ առաքելական և կաթողիկե հարանվանությունների հետ։ Մինչդեռ այս հարցում դեռևս առկա են լուրջ անելիքներ։ Ռուսաստանի հայ ավետարանական համայնքը, լինելով նոր վերածնված կամ նոր կազմավորված համայնք, ի տարբերություն այլ, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի

երկրների հայ ավետարանական համայնքների, կարելի է ասել, գրեթե չունի ինստիտուցիոնալ մակարդակով համագործակցության փորձ տեղի Հայ առաքելական և կաթողիկե համայնքների հետ։ Ինստիտուցիոնալ մակարդակով տեղի Հայ Առաքելական և Կաթողիկե եկեղեցիների հետ այս համայնքի համագործակցության ապահովման հարցում կարելի է օգտվել այլ երկրների, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի հայ համայնքների փորձից, որոնք իրենց միջդավանական համագործակցության բազմամյա փորձով կարող են օրինակ լինել Ռուսաստանի հայ համայնքի համար, ինչպես նաև ցուցաբերել նորարարական մոտեցումներ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով սույն հետազոտությունը՝ ներկայացնենք մեր եզրակացություններն ու առաջարկությունները հետևյալ կետերի միջոցով։

- Ինչպես ցարական, այնպես էլ խորհրդային շրջանում կրոնի բնագավառում պետական քաղաքականությունը գրեթե բացառում էր հայկական ազգային ավետարանական կազմակերպչական կառույցների հիմնման հնարավորությունը Ռուսաստանում։ Հետխորհրդային շրջանում կրոնական ոլորտում որդեգրված ազատականության սկզբունքը թույլատրելի դարձրեց ավետարանական եկեղեցիների և այլ կառույցների ստեղծումը։
- Ռուսաստանի հայության տարբեր դավանանքային շերտերի համար միավորիչ տեսական-աշխարհայացքային հիմքեր են ազգային բարձր ինքնագիտակցությունը, ընդհանուր քրիստոնեական կրոնը և աշխարհիկությունը։
- Հայապահպանությունը, Ռուսաստանի հասարակական-քաղաքական մթնոլորտով պայմանավորված մարտահրավերներին (ներքաղաքական ցնցումներ, ահաբեկչություն, ազգայնամոլություն) դիմակայումը, ինչպես նաև համազգային խնդիրների (Հայոց ցեղասպանության ճանաչում և դատապարտում, Արցախյան հիմնահարց և այլն) լուծման նպատակով համատեղ պայքարը այն խնդիրներն են,

որոնք համագործակցության դաշտ են ստեղծում Ռուսաստանի հայության տարբեր դավանանքային շերտերի միջև։ Ռուսաստանաբնակ հայ ավետարանականների համագործակցությունն իրենց ազգակից առաքելականների և կաթողիկեների հետ, մի կողմից, ավելի արդյունավետ կդարձնի պայքարը տարատեսակ համազգային խնդիրների լուծման համար, մյուս կողմից՝ կնպաստի Ռուսաստանի հայ ավետարանականների ինտեգրմանը տեղի ողջ հայ համայնքին։

- Արդի աշխարհում կրոնական հանդուրժողականության և համերաշխության մթնոլորտի ձևավորման գործուն մեխանիզմներ են միևնույն ազգային ընդհանրությանը պատկանող տարբեր կրոնադավանանքային շերտերի ազգային ինքնագիտակցության բարձրացումը, միևնույն կրոնին, տվյալ դեպքում՝ քրիստոնեությանը պատկանող տարբեր դավանանքային շերտերի գիտակցության մեջ դավանանքային տարբերությունների փոխարեն ընդհանուր կրոնին (քրիստոնեությանը) պատկանելու գիտակցության խթանումը և մեր օրերում լայն տարածում ստացած աշխարհիկությունը։
- Ազգային ինքնագիտակցության բարձրացումը ենթադրում է միևնույն ազգին պատկանող տարբեր դավանանքային հատվածների մեջ կրոնադավանանքային պատկանելության փոխարեն ընդհանուր ազգային պատկանելության գիտակցության ամրացում, այլ խոսքերով՝ հայ առաքելականի, կաթողիկեի և ավետարանականի գիտակցությունում առաջին հերթին հայ, այլ ոչ թե առաքելական, կաթողիկե կամ ավետարանական լինելու զգացողության առաջ-

մղում: Արդ, լրատվամիջոցների և այլ քարոզչամիջոցների գործունեությունն այս տեսանկյունից պետք է նպատակաուղղված լինի ազգայինի, այլ ոչ թե կրոնականի շեշտադրմանը: Ազգային ընդհանուր պատկանելության գիտակցության առաջմղումը և քարոզումը, անձի ինքնանույնացման մեջ երկրորդական պլան մղելով կրոնադավանանքային պատկանելության զգացողությունը, լուրջ հիմք կդառնա ռուսաստանաբնակ հայության տարբեր դավանանքային շերտերի շրջանում կրոնադավանանքային հակասությունների մեղմման համար: Դեռևս 19-րդ դարում հայ մեծ մտավորական Ռաֆֆին, անդրադառնալով ազգայինի և կրոնականի հարաբերակցության խնդրին, նշել է. «...Դավանությունների բազմատեսակությունը չէ ոչնչացնում ազգային միությունը, միությունը պետք է որոնել այդ մասների ներդաշնակության մեջ, որի հիմնական *մոթիվը* պետք է լինի *ազգայնությունն* իր բարձր նշանակությամբ»[1]:

- Օգտվելով այն իրողություններից, որ մեր օրերում մեծ տարածում ստացած աշխարհիկությունը երկրորդական պլան է մղում կրոնադավանաբանական խնդիրները, անհրաժեշտ է Ռուսաստանի հայ համայնքում որպես ազգային համախմբման գործիք կամ մեխանիզմ խրախուսել աշխարհիկ ինստիտուտների ստեղծումն ու կայացումը: Հոգևոր-եկեղեցական կառույցների գերակայությունը, չնայած դրանց անգնահատելի դերին Սփյուռքի հայ համայնքների ինքնակազմակերպման և կենսունակության ապա-

[1] *Ռաֆֆի,* Ին՞չ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ, Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 292:

հովման գործում, այնուամենայնիվ, կարող է որոշակի հիմք լինել կրոնադավանանքային հիմքով հայ համայնքների հատվածայնացման համար՝ ջլատելով ազգային ներուժը։ Աշխարհիկ կառույցների փորձը ցույց է տալիս, որ դրանց մեջ ընդգրկվում են հայերը՝ անկախ իրենց դավանանքային պատկանելությունից, ինչպես նաև դրանց գործունեության դաշտը տարածվում է բոլոր հայերի վրա։

- Հայաստանի Հանրապետությունը՝ որպես համայն հայության պետություն, պետք է իր գործունեությունը տարածի ոչ միայն հայության հիմնական դավանանքային հատվածի՝ հայ առաքելականների, այլև մյուս կրոնադավանանքային հատվածների վրա նույնպես։ ՌԴ-ում ՀՀ դեսպանությունը տեղի հայ համայնքների հետ հարաբերություններում իր գործունեության ծիրում պետք է ներառի ավետարանական հայերին նույնպես։
- Ռուսաստանի Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների համագործակցությունը կրթության, մշակույթի և այլ բնագավառներում՝ մի կողմից, ավելի արդյունավետ կդարձնի հայապահպանության գործը Ռուսաստանում, մյուս կողմից՝ գործնական կյանքում այն համագործակցության դաշտը կլինի, որը կամրապնդի, կխթանի Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի միասնականությունն առաքելական և կաթողիկե հայերի հետ։ Այս կապակցությամբ ժամանակին Ռաֆֆին նշում էր. «...Ժամանակ է ձեռք առնել *դպրոցը*, որպես մի նոր կապ մեր և մեզանից օտարացած ազգայինների մեջ, որպես մի նոր ավազան, ուր հայ-կաթոլիկը, հայ-մահմե-

դականը և հայ-բողոքականը կմկրտվեն նոր հոգով և նոր կյանքով և կդրոշմվեն *ազգայնության* անունով. դրանով միայն կարող ենք միացնել մեզ հետ մեր եղբայրներին, որ բաժանեց եկեղեցու ավազանը…»[1]:

- Համատեղ կառույցների ստեղծման և գործարկման հարցում փայլուն օրինակ են Մերձավոր Արևելքի հայ համայնքները, որտեղ հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական հարանվանությունների կողմից ստեղծվել և ղեկավարվում են տարբեր հաստատություններ: Որպես օրինակ կարելի է վկայակոչել Ազունիեի առողջարանը Լիբանանում[2]: Ռուսաստանի հայ համայնքում նույնպես տարբեր դավանանքային շերտերի միջև ազգային համախմբմանն էապես կնպաստի համագործակցության այս ձևը՝ համատեղ կառույցների (սոցիալական, կրթական, առողջապահական և այլ բնույթի) հիմնումը և գործարկումը:
- Ռուսաստանի հայ համայնքում ինստիտուցիոնալ մակարդակով տարբեր դավանանքային շերտերի համագործակցությունն ավելի արդյունավետ և նպատակային դարձնելու համար կարևոր քայլ կլիներ Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների գործունեությունը համակարգող խորհրդի ստեղծումը: Խորհրդում Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները կարող են ներկայացված լինել կամ համամասնության սկզբունքով, կամ էլ հավասարապես:

[1] *Ռաֆֆի,* Ի՞նչ վերանորոգություններ պետք են Տաճկական Հայաստանին, Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 57:

[2] Այս մասին առավել մանրամասն տե՛ս *Հովյան Վ.,* Լիբանանի հայ բողոքական համայնքը, 21-րդ ԴԱՐ, Երևան, 2010, թիվ 4, էջ 56-57:

- Ռուսաստանի հայ համայնքում, ինստիտուցիոնալ մակարդակով միջդավանական համագործակցությանը մեծապես կնպաստեր նաև Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների ընդգրկվածությունը համազգային կառույցների կառավարման և գործունեության մեջ։ Այդպիսի ընդգրկվածության փայլուն օրինակ է տալիս «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որի հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկված են ինչպես Հայ Առաքելական, այնպես էլ Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները՝ ի դեմս իրենց առաջնորդների։ Կարծում ենք, համագործակցության սույն մոդելը կարելի է տարածել նաև Ռուսաստանի հայկական համայնքային կազմակերպությունների վրա։

Արեստակես Սիմավորյան

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի տարբեր երկրներում գաղթավայր կազմած առաքելադավան հայության կողքին այսօր առանձին կրոնական համայնքների կարգավիճակով գոյություն ունեն հայ կաթոլիկների (հայ կաթողիկե) մեծ ու փոքրաթիվ խմբեր։ Ցավոք, այսօր հարկ եղած ուշադրություն չի դարձվում Հայության՝ բավական մեծ ներուժ ունեցող տարադավան այս համայնքի գործունեությանը։ Շատ դեպքերում հայ կաթողիկեների մասին պատկերացումները սահմանափակվում են Մխիթարյան միաբանության, Սիրիայի, Լիբանանի համայնքների կամ առնվազն Հայաստանի, Վրաստանի, այսպես կոչված, «ֆրանգների» գոյությամբ, այնինչ նրանք բավական լայն աշխարհագրական տարածք են զբաղեցնում։

Հայ կաթողիկե համայնք գոյություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում։ Տեղի կաթողիկե համայնքը, թերևս, արդի ժամանակաշրջանի նոր (վերա)կազմավորվող կրոնադավանական համայնքներից է, որն ուրույն տեղ ունի ՌԴ-ում և այս երկրի ընդհանուր հայության անքակտելի մասն է։ ՌԴ Հայ Կաթողիկե եկեղեցու և նրա հետևորդների պատմությունը հարուստ է և լի ողբերգական էջերով։ Տարբեր ժամանակաշրջաններում նրանք ստիպված են եղել հարմարվել և գոյապայքար մղել սկզբում ցարական Ռուսաստանում, այնուհետ ԽՍՀՄ-ում, իսկ ավելի ուշ՝ Ռուսաստանի Դաշնությունում։ Այս պատմական երեք փուլերն առանձնահատուկ են եղել հայ կաթողիկեների համար. հա-

մայնքներն անընդհատ վերածնվել և անկում են ապրել տարբեր քաղաքական դրդապատճառների արդյունքում։

Հետազոտության նպատակն է համառոտ ներկայացնել ՌԴ հայ կաթողիկե համայնքի պատմական զարգացման փուլերը։ Հայկական իրականության մեջ, թերևս, առաջին անգամ ի մի են բերվել Հայ Կաթողիկե եկեղեցու հոգևորականության նկատմամբ կատարված բռնությունները։ Ռուսաստանի Դաշնության տարածքում գոյություն ունեցող արդի կաթողիկե համայնքների հետազոտական մասը կանդրադառնա նրանց թվաքանակի, աշխարհագրական սփռվածության, փոխընկալման և այլ խնդիրներին։

ԳԼՈՒԽ 1
ԿԱԹՈԼԻԿՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ

Պատմական ակնարկ

Կաթոլիկությունը՝ որպես քրիստոնեական ուղղություն, ամենամեծ տարածումն ունի աշխարհում: Հռոմեական կաթոլիկ եկեղեցին, լինելով խոշոր քրիստոնեական կառույցներից մեկը, հանդես է եկել ոչ միայն մշակութաստեղծ, այլև պետականաստեղծ դերով և մեծ ներդրում է ունեցել արևմտաեվրոպական պետությունների քաղաքական, մշակութային և հոգևոր կյանքում: Հռոմեական կաթոլիկ եկեղեցու հզորացման հետ մեկտեղ, ի հայտ եկավ ունիայի (միության) գաղափարը, որի հենքի վրա էլ ձևավորվել են այսօրվա արևելյան ծեսի մյուս կաթոլիկ՝ մարոնիտական, Հույն կաթոլիկ (մելքիտյան), Խալդեական (ասորա-խալդեական), Ղպտի կաթոլիկ և Հայ կաթողիկե (կաթոլիկ) եկեղեցիները: Բոլորը հիմնված են մեկ, միմյանցից առանձին արևելյան մշակութածիսական ավանդույթի վրա՝ անտիոքական, ալեքսանդրյան, բյուզանդական, հայկական և այլն[1]:

[1] Ունիան, որպես կրոնական պառակտման հաղթահարմանն ու քրիստոնեական ընդհանուր միասնության վերականգնմանն ուղղված մեթոդ, ընդհանուր առմամբ իրեն չարդարացրեց և ճանաչվել է ինչպես Կաթոլիկ, այնպես էլ Ուղղափառ եկեղեցիների կողմից: Այս ամենն ամրագրվեց Կաթոլիկ և Ուղղափառ եկեղեցիների միջև Լիբանանում 1993թ. տեղի ունեցած VII Համատեղ հանձնաժողովի հրատարակած փաստաթղթում, որտեղ, մասնավորապես, նշված է. «Թեև արևելյան ծեսի կաթոլիկ եկեղեցիներն ունեն միևնույն իրավունքները, ինչ մյուս քրիստոնեական համայնքները, այդուհանդերձ, առաքելական միսիոներության ձևը, որը կոչվում է ունիա, չի կարող ընդունվել ոչ որպես վարք կամ որպես միասնության մոդել, որ փնտրում են մեր եկեղեցիները»: Տե՛ս *Овсиенко Ф.,* Католическая концепция диалога западно-христианской и восточно-христианской цивилизации, Государство, религия, церковь в России и за рубежом, Москва, 2006. № 1–2 (36–37), с. 62–75.

Հայ իրականության մեջ կաթոլիկության տարածումը տեղի է ունեցել միսիոներների քարոզչության հետևանքով թե՛ բուն Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս, այդ թվում՝ Ռուսաստանում: Ի տարբերություն բազմաթիվ այլ երկրների, Ռուսաստանում հայ կաթողիկե համայնքի ձևավորումը պատմական տեսանկյունից առանձնահատուկ է նրանով, որ առաջացել է այդ երկրի տարածքից դուրս և հայտնվել է նրա կազմում ռազմական արշավանքների արդյունքում:

Ընդհանրապես, հայ կաթողիկեների առնչությունը Ռուսաստանի հետ կարելի է բաժանել 3 փուլի, որոնցից յուրաքանչյուրն իր դրական և բացասական կողմերով հսկայական ազդեցություն է թողել այդ ընդարձակ երկրի հայության վրա: Դրանք են՝ ցարական, խորհրդային և հետխորհրդային շրջանները: Մեր խնդիրն է քննել տարբեր ժամանակահատվածներում Ռուսաստանի հայ կաթողիկե համայնքների առաջացման պատմական պատճառները, համայնքների կյանքում տեղի ունեցած տարաբնույթ զարգացումները և արդի իրավիճակը:

Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու գործունեությունը Ռուսաստանում տարբեր ժամանակաշրջաններում ընթացել է տարբեր ուղիներով: Ընդ որում՝ Հռոմի Կաթոլիկ եկեղեցու բարձրագույն ներկայացուցիչների, ռուսական արքունիքի և Ռուս Ուղղափառ եկեղեցու գործիչների միջև կապերն ունեն պատմական վաղեմություն և այդ հարաբերություններում երբեմն խնդիրներ են ի հայտ եկել: Հարկ է նկատել, որ հարաբերություններն ունեցել են թե՛ քաղաքական և թե՛ կրոնադավանական նշանակություն:

13-րդ դարի 40-ական թվականներին Հռոմի պապ Ինոկենտիանոս IV-ը բավական ակտիվ դիվանագիտական նախաձեռնություն էր ցուցաբերում՝ համոզելով ռուս իշխաններին ենթարկվել Հռոմեական սրբազան կայսրությանը՝ փոխարենը խոստանալով ռազմական աջակցություն ընդդեմ մոնղոլների։ Հետագայում նման առաջարկությունները հաճախ էին տեղ գտնում Հռոմի պապերի կողմից իրականացվող քաղաքական բանակցություններում։

Ռուսական կայսրությունում կաթոլիկության տարածումը սկսվեց 1684 թվականից հետո, երբ Ինոկենտիանոս XI պապը միսիոներական առաքելություն ուղարկեց Ռուսաստան։ Դա համընկավ Պետրոս Առաջինի (1682-1725թթ.) գահակալության տարիների հետ, երբ վերջինիս քաղաքականության արդյունքում եվրոպական նորամուծությունները թափանցեցին ռուսական պետական և մշակութային կյանքի ոլորտներ։ Կաթոլիկներ էին դառնում քաղաքական և պետական այրեր, ինչը շարունակվեց Ալեքսանդր Առաջինի (1801-1825թթ.) օրոք։ Կաթոլիկությունն աստիճանաբար տարածվեց Մոսկվայում, Կիևում, Սմոլենսկում։

Ռուսական կայսրությունում հայ կաթողիկեների համեմատաբար խոշոր խմբեր առաջին անգամ ի հայտ եկան 1768-1774թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում՝ Ղրիմի նվաճման և Ռեչ Պոսպոլիտայի երրորդ բաժանման հետևանքով (1775թ.)։

Ղրիմի հայ կաթողիկե համայնքը

Ղրիմի հայ կաթողիկեների մասին պատմական և արխիվային նյութերն այնքան սակավ են, որ դժվար է լիարժեք ներկայացնել համայնքային կյանքի զարգացումները։

Մինչև Ռուսական կայսրության կազմում հայտնվելը Ղրիմի հայերի մեջ արդեն ակտիվորեն քարոզվել էր կաթոլիկություն, և կային այդ եկեղեցու հետևորդներ: Ըստ ժամանակագիր Վ.Խ. Կոնդարակիի, կաթոլիկություն ընդունում էին մեծահարուստ առևտրական հայերը, որոնք լուրջ մրցակցության մեջ էին ճենովացի կաթոլիկ առևտրականների հետ[1]: Ղրիմի նվաճումից հետո թերակղզու փոքրաթիվ հայ կաթողիկեներն առաքելադավան հայության մեծ մասի հետ միասին Եկատերինա Երկրորդի հրամանով 1778թ. գաղթեցին Ռուսաստան: Այստեղ հաստատված հայերին խոստանում էին դավանանքի լիիրավ ազատություն: Նրանք ազատորեն կարող էին եկեղեցիներ և զանգակատներ կառուցել ու կատարել իրենց եկեղեցուն հատուկ ծիսակատարություններ: Հայերը, բացառությամբ սակավաթիվ հայ կաթողիկեների, ենթարկվելու էին Արարատյան Մայր աթոռի հոգևոր իշխանությանը:

Ռուսաստանի արևմտյան մասի հայ գաղթօջախներում Հռոմից եկող կաթոլիկացման քաղաքականությունը և այդ հողի վրա լուսավորչականների ու կաթոլիկների տևական հակամարտությունը հարկադրում էին աչալուրջ լինել՝ դավանափոխության վտանգից զերծ մնալու համար: Դավանանքային հարցին վերաբերող «պայմաններ»-ի յոթերորդ կետում արգելվում էր հակառակ դավանանքին (լուսավորչական թե կաթոլիկ) պատկանող անձանց գայթակղել և սեփական հոտի մեջ ներգրավելը: Նման քայլեր կատարողները պետք է պատժվեին պետական օրենքների ամբողջ խստությամբ[2]: Դժգոհ լինելով

[1] *В.Х. Кондараки,* Универсальное описание Крыма, Часть первая, Николаевъ, 1873, с. 32:

[2] *Բարխուդարյան Վ.,* Նոր Նախիջևանի ինքնավարությունը, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1965, № 2, էջ 180:

իրենց սոցիալ-տնտեսական կացությունից՝ պաշտոնական թույլտվությունից հետո, 1787թ., Եկատերինոսլավ և այլ վայրեր գաղթած հայ կաթողիկեները բռնեցին հետադարձ ճանապարհը՝ դեպի Ղրիմ։

Համայնքն արագ կերպով վերակազմակերպվեց՝ ձեռք բերելով որոշակի արտոնություններ։ Ղրիմ վերադարձած հայ կաթոլիկական համայնքի համար պահպանվեցին բոլոր այն արտոնությունները, որոնք շնորհվել էին համայնքի հոգևոր առաջնորդ Հակոբ վարդապետի անունով 1779թ. նոյեմբերի 14-ին տրված հրովարտակում, և որոնք 1800թ. ապրիլի 18-ին հաստատել էր նաև Պավել Առաջինը. համայնքի անդամները դասվում էին ռուսական քաղաքացիների շարքը, տասը տարի ազատվում էին հարկերից ու տուրքերից, դրանից հետո վճարելու էին ծխահարկ, կարող էին զբաղվել առևտրով, հիմնել գործարաններ, ներքին գործերը վարելու համար պահել դատարան[1]։

Զուգահեռաբար թերակղզու հայ կաթողիկե համայնքը համալրվեց Կ.Պոլսի և Տրապիզոնի դավանակից հայերով։ Համայնքի համար տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին էր համարվում Կարասուբազարի հռոմեական կաթոլիկ դատարանը, որը գործեց մինչև 1870թ.։ Թերակղզի վերադարձած հայ կաթողիկեները համայնքի միջոցներով 1793թ. հիմնել են փայտյա եկեղեցի, իսկ հետագայում՝ 1810թ., Կարասու գետի ափին կառուցել են քարակերտ Սբ. Գևորգ կաթողիկե եկեղեցին, որն ըստ ժամանակագիրների՝ համարվում էր քաղաքի ամենաշքեղ կառույցը[2]։

[1] *Միքայելյան Վ.,* Ղրիմահայ գաղութի պատմությունից (XVIII դարի վերջ-XIX դարի սկիզբ), Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1969, № 3, էջ 112։

[2] *Тур В.,* Особенности возрождения армяно-католической общины Карасубазара в конце XVIII в., Материалы по археологии, истории и этнографии Таврии. Выпуск XV, Симферополь, 2009, стр. 563.

19-րդ դարի կեսերին, Կարասուբազարից բացի, գործում էին հայ կաթողիկեների ևս երկու կենտրոնացված համայնքներ թերակղզու Թեոդոսիա և Եվպատորիա քաղաքներում, ինչպես նաև ցրված փոքրաթիվ համայնքներ կային որոշ քաղաքներում։ Հայ կաթողիկեների ընդհանուր թվաքանակը հասնում էր 2000-ի.

1. Կարասուբազար՝ 1250 մարդ։
2. Թեոդոսիա՝ 100 մարդ։
3. Եվպատորիա՝ 100 մարդ։
4. Սիմֆերոպոլ, Կերչ, Պերեկոպ, ընդհանուր՝ 140 մարդ։

1862թ. Լեհաստանից և Գալիցիայից Ղրիմում հաստատված հայ կաթողիկեները հիմնեցին սիմֆերոպոլյան համայնքը, կառուցեցին համայնքապատկան եկեղեցին[1]։ Այս բոլոր քաղաքների մեջ անհայտ է մնում Սուդակի հայ կաթողիկե համայնքի ճակատագիրը, որը տարբեր աղբյուրներում հիշատակվում է դեռևս 13-րդ դարից։ Ըստ Բրունի՝ հայերը վենետիկցիների և ճենովացիների մեջ միշտ կազմել են Սուդակի ազգաբնակչության մեծամասնությունը, դավանանքով եղել են հիմնականում կաթոլիկներ և ունեցել են իրենց թեմակալ առաջնորդն ու աթոռանիստ եկեղեցին։ Ճանապարհորդ Ռուբրուկվիսը հիշատակում է, որ Սուդակում արժանացել է պատվավոր ընդունելության եպիսկոպոսի և հոգևորականության կողմից։ Բրունը գտնում է, որ այդ ընդունելությունը կազմակերպել են հայ կաթողիկե եպիսկոպոսն ու հոգևորականությունն իրենց եկեղեցում։ Մինչև այժմ Սուդակում կանգուն է հայ կաթողիկեների հինավուրց

[1] *Габриелян О., Араджиони М., Гукасян Е.,* Кросс-культурная адаптация. Этническая история Крыма, Культура мира, Методическое пособие, Симферополь, 2002, стр. 50.

եկեղեցին, որը հայտնի պատմաբան, պրոֆեսոր Վ.Ղ. Ամիրնովի կարծիքով՝ «Սուդակի ամենաարժեքավոր հնությունն է»[1]: Սակայն արդեն 19-20-րդ դդ. ռուսական աղբյուրներն այլևս չեն հիշատակում Սուդակի հայ կաթողիկե համայնքի մասին: Կարելի է ենթադրել, որ այն կամ ուծացման միջոցով դադարել է գործել, կամ նրանք տեղափոխվել են այլ քաղաքներ: Չնայած Ղրիմում բնակվում էին նաև այլազգի կաթոլիկեր, այդուհանդերձ, հայ կաթողիկեներին սպասարկում էին հիմնականում հայ հոգևորականները, որոնցից առավել հայտնի էին Հովհաննես Խաստաթիջյանը (ղեկավարել է 1728-1748թթ.) և Հակոբ Վարտերեսովիչը (1769 թվականից):

Հյուսիսային Կովկաս

Հայ կաթողիկե համայնքների թվով Ղրիմին հաջորդում է Հյուսիսային Կովկասը, որի գլխավոր կենտրոններն են Մոզդոկն ու Կիզլյարը: Այս համայնքներն առաջացան 1720-1760թթ. Թուրքիայից, Պարսկաստանից, մասամբ Աստրախանից տեղափոխված գաղթականության արդյունքում: Վերոհիշյալ քաղաքներից բացի, հայ կաթողիկեներ էին հիշատակվում նաև Գրոզնիում, Վլադիկավկազում, Պյատիգորսկում, Թեմիրխան-Շուրեում, Եկատերինոդարում, Նովոռոսիյսկում: Առանձին վայրերում հայ կաթողիկեները, հարաբերվելով այլ կաթոլիկների հետ, միանում են լատինական կաստյոլներին հատկապես Ռուսաստանի հարավում, և կորցնում ազգային դիմագիծը[2]:

[1] *Փորքշեյան Խ.,* Ե՞րբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ, Պատմա-բանասիրական հանդես, 1962, № 2, էջ 109:

[2] *Селицкий А.,* Из истории армяно-католиков на Северном Кавказе, http://www.mashtots.ru/istoriya-armyan-kubani/nauchnye-raboty/iz-istorii-armyano-katolikov-na-severnom-kavkaze

Ռուսական կայսրության կազմի մեջ հետագայում հայտնվեցին նաև Վրաստանի հայ կաթողիկեները, որոնք բնակվում էին հիմնականում Թիֆլիսում, Գորիում, Քութայիսում և պատմական Ջավախքում: Արդեն 1803-1805թթ. Կովկասում գործում էր միացյալ հայկական եկեղեցիների դեկանատ, որի մեջ էին մտնում Աստրախանի, Մոզդոկի, Թիֆլիսի և նույնիսկ Կախեթի հայ կաթողիկեները: Միայն Հյուսիսային Կովկասում այդ ժամանակ հաշվվում էր կաթոլիկ դավանանքի մոտ 2000 հայ[1]:

Քանի որ Ռուսաստանի կայսրության տարածքում բնակվող հայ կաթողիկեների թիվն աճեց, նրանց համար 1807թ. ստեղծվեց առանձին եպիսկոպոսարան՝ Մոգիլև-Պոդոլսկ կենտրոնով: Բոլոր համայնքները միասին վերցրած՝ այս ժամանակահատվածում արդեն ունեին 18 եկեղեցի: Մինչ այդ Մոգիլևի, ինչպես նաև Պոդոլյեի հայերը հոգևոր հարցերում ենթարկվում էին Լվովի հայ արքեպիսկոպոսին, ինչը ռուսական իշխանությունները չէին կարող հանդուրժել: Ուստի, Ռուսական կայսրության լուսավորության նախարար Գոլիցինի եռանդուն միջամտությամբ Մոգիլևի հայ կանոնիկոս Հովսեփ Քժիշտոֆովիչը, որը հրավիրվել էր Պետերբուրգ, նշանակվում է եպիսկոպոս, և նրա հոգևոր իշխանության տակ են անցնում Ռուսաստանի բոլոր Հայ Կաթողիկե եկեղեցիները: Մոգիլևում հայ կաթողիկե եպիսկոպոսությունը հաստատվել է նաև ռուսական Սենատի կողմից, որին այդ կապակցությամբ 1810թ. նոյեմբերի 7-ին տրվել է անձամբ Ալեքսանդր Առաջին ցարի կողմից ստորագրված հրաման[2]:

[1] *Меленберг А., Козлов-Струтинский С.,* Кавказ, Католическая Энциклопедия, http://www.ecat.francis.ru/K/Kavkaz.html

[2] *Գրիգորյան Ռ.,* Մոգիլյով-Պոդոլսկ քաղաքի հայկական գաղութի պատմությունից, Պատմաբանասիրական հանդես, 1972, № 4, էջ 82:

Ռուսաստանի հայ կաթողիկեների առաջին և վերջին եպիսկոպոս դարձած Հովսեփ Քժիշտոֆովիչի մահվանից հետո (1816թ.) եպիսկոպոսության գործունեությունը ձևական բնույթ էր կրում: Մոգիլևի թեմի կառավարումը հանձնվեց «գլխավոր հաջորդներ» կոչված կառավարիչներին: Այդ «կառավարիչներից» առաջինը եղել է եպիսկոպոս Անտոն Վարդերեսովիչը (1816-1822թթ.): Նրան հաջորդում է Սամոլել Մոշորոն (1822-1854թթ.): Ի դեպ, Նիկոլայ Առաջին ցարը ցանկություն է ունեցել վերջինիս իր աթոռով տեղափոխել Թիֆլիս, բայց այդ ծրագիրը հավանության չի արժանացել[1]: Սակայն Մոգիլև-Պոդոլսկ կրոնավարչական միավորումն այդպես էլ չդարձավ հայ կաթողիկեների գլխավոր կենտրոն, քանի որ նրանց սպասարկող հոգևորականությունը եկեղեցական կոչում ստանալու համար պետք է մեկներ Մոգիլև, իսկ դա բավական հեռու էր: Չնայած Մոգիլևում 1840-ականներին համաճարակի բռնկումից հետո հայերը հեռացել էին քաղաքից, սակայն մինչև 1896թ. այստեղ 502 հայ կաթողիկեներ էին բնակվում[2]:

Հետաքրքիր է նկատել, որ համայնքների մասին տեղեկությունները, նամակները, զեկույցները գրվում էին միայն լեհերեն և լատիներեն: Զեկույցներում Ռուսական կայսրության քաղաքներում գոյություն ունեցող հայ կաթողիկե համայնքներից հիշատակվում են Նիկոլաևի, Օդեսայի, Կիզլյարի, Մոզդոկի, Աստրախանի համայնքները[3]:

[1] Նույն տեղում, էջ 83-84:

[2] Энциклопедический словарь, т. XXXVIII. СПб., 1898, стр. 575:

[3] *Чаплицкий Б.,* История Католической Церкви в России, "Свет Евангелия", 9 июня 1996 г. № 23, с. 30 և http://krotov.info/libr_min/24_ch/ap/lizky_01.html

Գրոզնիում, Վլադիկավկազում, Պյատիգորսկում, Եկատերինոդարում, Նովոռոսիյսկում հայերի համար ծիսական արարողությունները կատարվում էին մայրենի լեզվով, բայց ժամանակի ընթացքում նրանք այցելում են կաթոլիկ դավանանքի հետևորդ այլազգիների համար նախատեսված եկեղեցիներ։ Պյատիգորսկի կաթոլիկ եկեղեցու նախամուտքին պահպանվել են հայկական արձանագրություններ, ինչը վկայում է, որ 1840թ. այստեղ ապրել են նաև հայ կաթողիկեներ։ Անկասկած, հայ էին նաև Եկատերինոդարում բազմամյա հոգևոր, կրոնական գործունեությամբ աչքի ընկած Հովսեփ Կանունովը և նրա օգնական Յաղուլովը, որը 19-րդ դարի վերջին հիմնեց Նովոռոսիյսկի հայ կաթողիկե համայնքը[1]։

Ռուսական կայսրության սահմաններում հայ կաթողիկեներ են բնակվել նաև Բեսարաբիայում՝ ներկայիս Մոլդովայում։ Հետաքրքիր է, որ նրանք արդեն չէին տիրապետում հայերենին, խոսում էին լեհերեն և լեհական մշակույթի կրողներ էին։ Նշենք նաև, որ Քիշնև և Բելց քաղաքները դարձան հայ կաթողիկեների համայնքային կյանքի կենտրոններ։

Նիկոլայ Առաջինի ղեկավարման տարիներին կաթոլիկների նկատմամբ վերաբերմունքը կոշտացավ, ինչը հանգեցրեց նոր իրողությունների։ Տասնմեկ տարիների ընթացքում Նիկոլայ Առաջինն աշխատեց արմատախիլ անել կաթոլիկներին Ռուսական կայսրությունից։ Բազմաթիվ եկեղեցիներ անցան Ռուս Ուղղափառ եկեղեցու տրամադրության տակ, իսկ որոշ հոգևորականներ ուղղակի բռնադատվեցին։ Ցարի անմիջական հրամանով լուծարվեց Հույն Կաթոլիկ եկեղեցին, իսկ 1844թ. Ռուսական

[1] Նույն տեղում։

կայսրության տարածքից վտարվեցին օտարազգի բոլոր կաթոլիկ հոգևորականները՝ բացառությամբ հայերի։ Ախալցխայի և Ախալքալաքի մեկ տասնյակից ավելի հայ կաթողիկե գյուղերը հոգևոր առումով դրվեցին Ախալցխայի հայ կաթողիկե առաջնորդի իրավասության ներքո։ Հռոմի ազդեցությունից խուսափելու նպատակով ցարական իշխանություններն այստեղի կաթոլիկների շատ իրավունքներ սահմանափակեցին, իսկ առաջնորդի պաշտոնը դարձավ նշանակովի[1]։ Քաղաքական բնույթի այս որոշումը խոչընդոտեց օտարազգի լատինածես հոգևորականների ներկայությանը հայ կաթոլիկ գյուղերում, և դա նպաստեց այն բանին, որ վերջիններս սպասարկող քահանաներ պատրաստելու հարցերում ինքնակամ նախապատվությունը տան միայն հայերին։ Ստույգ հայտնի է, որ այդ խնդրի լուծման համար Մխիթարյան միաբանությունում, Կ.Պոլսում, Վատիկանում, Զմմառում, հետագայում՝ Հռոմի Լևոնյան վարժարանում և այլ երկրների կրոնական հաստատություններում հայ կաթողիկե գյուղերից ընտրվում էին ընդունակ պատանիներ[2]։

Դժգոհ լինելով Նիկոլայ Առաջինի՝ կաթոլիկների հանդեպ վարվող նման քաղաքականությունից՝ Հռոմի պապ Գեորգիուս XVI-ը հանդես եկավ խիստ և կտրուկ քննադատություններով։ Նիկոլայ ցարը, տեղի տալով Վատիկանի պահանջներին, վերջինիս հետ 1847թ. ստորագրեց կոնկորդատ, որում ամրագրված մի կետով որոշում կայացվեց Ռուսաստանի հարավում կաթոլիկների համար (հատկապես գերմանացիների) ստեղծել նոր

[1] *Մելքոնյան Ա.,* Զավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդում, Երևան, 2003, էջ 225։
[2] *Միմավորյան Ա., Հովյան Վ.,* Զավախահայության որոշ հիմնախնդիրներ (Զավախահայության դավանանքային և տեղեկատվական վիճակի ուսումնասիրություն), Երևան, 2009, էջ 11։

վարչական միավոր՝ ներառելով բոլոր ռուսահպատակ կաթոլիկներին։ Արդյունքում՝ ստեղծվեց Խերսոնյան եպիսկոպոսությունը, որը ներառում էր Խերսոնի, Տավրիայի, Աստրախանի, Սարատովի նահանգները, Բեսարաբիան և Կովկասյան երկրամասը։ Հայ կաթողիկեները փաստացի մտան նորակազմ եպիսկոպոսության մեջ, իսկ 1807թ. հայերի համար ստեղծված Մոգիլև-Պոդոլսկ կենտրոնը հատուկ հրամանով կազմալուծվեց։ Կոնկորդատով այլազգի և հայ կաթոլիկ հոգևորականները հավատարմության երդում պետք է տային ռուսաց ցարին, իսկ ուղղափառություն ընդունած հայերին արգելվում էր դառնալ կաթոլիկ[1]։ Այս վերջին իրողությունից կարելի է ենթադրել նաև, որ առաքելական և կաթոլիկ հայերը, հայտնվելով Ռուսաստանի տարածքում, ժամանակի ընթացքում դավանափոխվել են։

Համաձայն կոնկորդատի՝ հայ կաթողիկեների համար նախատեսվում էր հիմնել նաև հոգևոր գիմնազիա Թիֆլիսում։ 1847թ. տվյալներով՝ միայն Վրաստանի 29 վայրերում ապրում էին 8731 հայ կաթողիկեներ, որոնց սպասարկում էին 29 հոգևորականներ[2]։ Համաձայն հետազոտող Բրոնիսլավ Չապլիցկու՝ Տիրասպոլյան եպիսկոպոսության մեջ մտնող հայ և գերմանացի կաթոլիկների աննախադեպ թվաքանակը պայմանավորված էր բարձր ծնելիությամբ։ Չապլիցկու նման ենթադրությունը մի փոքր չափազանցված է, քանի որ հայ կաթողիկեների թվաքանակը շատացել էր նաև ի հաշիվ 1828-1830թթ. Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան, Վրաստան և Ռուսաստանի մի շարք քաղաքներ տեղափոխված հայ գաղթականության։

[1] *Кумор Б.,* Российский конкордат от 3 августа 1847г. и создание Тираспольской епархии, http://lib.zagloba.me/node/51

[2] Նույն տեղում։

Ռուս Ուղղափառ և Հռոմի Կաթոլիկ եկեղեցիների միջև առաջացած խնդիրների հետևանքով Խերսոնյան եպարքությունը 1852թ. վերանվանվեց Տիրասպոլյան: Սրանով Կովկասի հայ կաթոլիկների հոգևոր վարչությունը ժամանակավորապես և որոշ կանոնական իրավունքով հանձնվեց Սարատովի լատին եպիսկոպոսին, մինչև հայերը սեփական եպիսկոպոս կունենային: Հարկ է նշել, որ դեռևս 1850թ. Պիոս IX-ի հրամանով ստեղծվեց նաև Արդվինի եպիսկոպոսությունը, որի կազմում պետք է մտնեին Օսմանյան և Ռուսական կայսրություններում բնակվող Հայ Կաթողիկե եկեղեցու հետևորդները: Սակայն, երբ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արդվինը միացվեց Ռուսական կայսրությանը, տեղի հայ կաթողիկեները ընդգրկվեցին Տիրասպոլյան եպիսկոպոսության մեջ, ինչը չընդունվեց Հռոմի կողմից: Այդուհանդերձ, Արդվինի եպիսկոպոսությունը ֆորմալ գործեց մինչև 1972թ.[1]:

Տիրասպոլյան եպիսկոպոսության կազմի մեջ մտնող հայ կաթոլիկների վերաբերյալ ամփոփ տեղեկություններ առաջին անգամ ներկայացվեցին *«Directorium Officii Divini Pro Dioecesi Tirasponelensi in Annum Domini 1866»*[2] անվանումը կրող Հռոմի Կաթոլիկ եկեղեցու կողմից հրատարակված փաստաթղթում: Այն հնարավորություն է տալիս հստակ պատկերացնել, թե Ռուսաստանի կայսրության կազմի մեջ մտնող որ գյուղերում և քաղաքներում էին բնակվում հայ կաթողիկեները, սակայն ներկայացված չէին այդ համայնքի անդամների թվաքանակները:

[1] Очерк истории армяно-католиков в России, http://www.armeniancatholic.ru/ru/church/5.html
[2] Տե՛ս հավելված 1 և «Directorium Officii Divini Pro Dioecesi Tirasponelensi in Annum Domini 1866», http://www.petergen.com/bovkalo/sp/tyraspol1866.html

Այս փաստաթուղթը բավական արժեքավոր է հատկապես Վրաստանի մասով, քանի որ ներկայումս արդեն իսկ «վրացական» համարվող կաթոլիկ գյուղերը փաստաթղթում ներկայացվում են որպես հայկական, առանց որևէ բացառության:

Ըստ փաստաթղթի՝ հայ կաթողիկե համայնքներ էին գործում Հայաստանում, Ղրիմում, Վրաստանում: Ռուսաստանի տարածքում գործող հայկական համայնքների մասին որևէ տվյալ չի հաղորդվում: Մինչդեռ այլ աղբյուրներ նշում են, որ 1864թ. Տերի մարզում՝ Վլադիկավկազ կենտրոնով, կաթոլիկները բաժանվում էին երկու մասի՝ հայկական և լատինական: Տերի մարզի մեջ մտնող շրջաններից հայ կաթոլիկներ էին բնակվում Կաբարդինում՝ 31, Գրոզնիում՝ 69, Մոզդոկում՝ 127 հոգի, Կիզլյարում՝ շատ աննշան[1]: 19-րդ դարի 80-ական թվականներին հայ կաթողիկեներ են հիշատակվում նաև Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող Բաքու քաղաքում, որտեղ հայկական շուկայի հարևանությամբ գործել է աղոթատուն[2]:

Ըստ 1861-1922թթ. եկեղեցի այցելողների և քահանաների թվաքանակի վերաբերյալ Եկատերինոդարի (ներկայիս Կրասնոդար) Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու տվյալների՝ Կուբանի և Եկատերինոդարի հայ կաթողիկեները գաղթել են Արդվինից և շատ դեպքերում զուրկ են եղել հայկական ծեսով առաջնորդվող հայ հոգևորականներից, որի հետևանքով ստիպված են եղել այցելել լատինածես եկեղեցիներ[3]: Սակայն

[1] *Чаплицкий Б.,* История Католической Церкви в России, http://krotov.info/libr_min/24_ch/ap/lizky_01.html

[2] Баку и немцы. 1884 год., http://www.window2baku.com/Net/german7.htm

[3] *Селицкий А.,* Из истории армяно-католиков на Северном Кавказе, http://www.mashtots.ru/istoriya-armyan-kubani/nauchnye-raboty/iz-istorii-armyano-katolikov-na-severnom-kavkaze

19-րդ դարի վերջին Կուբանում մեծացավ հայկական ծիսակարգով առաջնորդվող հոգևորականների թիվը: Իսկ արդեն 1907թ. Եկատերինոդարում հայ կաթողիկեների համար բացառապես նշանակվում էին հատուկ ընտրված հոգևորականներ, որոնք եկեղեցական արարողությունները կատարում էին հայերենով: 20-րդ դարասկզբին տեղի ունեցած հայ կաթողիկեների ներքին գաղթերի արդյունքում Ռուսական կայսրության մի շարք քաղաքներում՝ Վորոնեժում, Պեմզայում, Ռոստովում, առաջացան նոր համայնքներ: Այդ ժամանակաշրջանում Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող հայ կաթողիկեների մասին բավական ուշագրավ տեղեկություններ են պարունակում սարատովյան արխիվները՝ թվագրված 1901թ. հունվարի 1-ով[1]: Ի տարբերություն *«Directorium Officii Divini Pro Dioecesi Tiraspone-lensi in Annum Domini 1866»*-ի՝ այստեղ ներկայացված են Թիֆլիսի նահանգի կազմում գտնվող և Ղրիմի հայ կաթողիկեների մասին տեղեկություններ: Ուշագրավ է, որ այստեղ ևս ներկայումս «վրացական» կաթոլիկ համարվող գյուղերը ներկայացված են որպես հայկական:

[1] ОГУ Государственный архив Саратовской области, ф.365, оп.1, д.978, л.138 об., 139, 160-161, մեջբերված՝ *Чаплицкий Б.,* История Католической Церкви в России, http://krotov.info/libr_min/24_ch/ap/lizky_01.html

Բնակավայրի անվանումը	Եկեղեցի-ների քանակը	Հոգևորականների թվաքանակը	Համայնքի թվաքանակը	
			արական	իգական
Ախալցխայի դեկանատ				
Ախալցխա	4	4	1906	-
Սուխլիս	1	1	277	244
Ծղալթբիլա	1	2	505	502
Աբաթխև	1	-	82	86
Ծինուբան	1	-	120	123
Նառխրեբ	1	1	170	165
Ուդե*	1 (+ 1 մասնաճյուղ)	1	847	715
Բոլաջուր	-	-	36	22
Վալե*	1	2	395	360
Արալ*	1	1	361	291
Աբասթուման*	1	-	-	-
Խզաբավրա*	1	1	889	809
Վարևան	1	1	290	243
Ալաստան	-	-	874	754
Տուրցխ	1	1	272	268
Խուլգումա	1	1	242	246
Բավրա	1	1	178	150
Կարտիկամ	1	1	560	515
Թորիա	1	1	247	217
Ուջմանա	1	1	242	213
Հեշտիա	1	1	1130	1043
Վարգավ*	-	-	71	70
Բնելա	-	-	18	24
Լոռու դեկանատ				
Շահ Նազար	1 (+ 1 մասնաճյուղ)	1	1160	1125
Մեծ Ղարաքիլիսա	1	1	530	497
Փոքր Ղարաքիլիսա	1	1	414	409
Սարչապետ	1	1	470	466
Շիշթաբա	1	1	309	331

* Աստղանիշով առանձնացված հայկական բնակավայրերն այսօր Վրաստանում համարվում են «վրացական կաթոլիկ» գյուղեր:

Բնակավայրի անվանումը	Եկեղեցիների քանակը	Հոգևորական-ների թվաքա-նակը	Համայնքի թվաքանակը	
			արական	իգական
Ալեքսանդրապոլի դեկանատ				
Ալեքսանդրապոլ	1	1	130	149
Քավթարլի	1	1	627	623
Թապադոլակ	1	2	501	459
Փալուտլու	1	1	341	318
Ղազանչի	1	1	365	369
Կորբուլախ	1	1	417	347
Շիշթաբա	1	1	328	312
Թիթո-Խարաբա	1	1	203	151
Ղրոբխ	1	1	290	267
Դարակյոյ	1	-	119	143
Մուլուխլի	1	1	335	326
Ջիթելի	1	1	163	165
Ընդհանուր	Եկեղեցիներ	Հոգևորականներ	Հետևորդներ	
	41	39	30874	

Ինչպես տեսնում ենք, Ռուսական կայսրությունում հայ կաթողիկեներն ավելի համախմբված բնակվում էին Հայաստանում և Վրաստանում: Նույն ժամանակահատվածում Ղրիմի հայ կաթողիկե համայնքի թվաքանակը, 19-րդ դարասկզբի համեմատ, որոշ քաղաքներում աստիճանաբար նվազել է.

Բնակավայրի անվանումը	Համայնքի թվաքանակը
Սիմֆերոպոլ	725 մարդ
Կարասուբազար	510 մարդ
Թեոդոսիա	295 մարդ
Եվպատորիա	56 մարդ
Կերչ	30 մարդ[1]

Սակայն Տիրասպոլյան եպիսկոպոսության մեջ մտնող հայ կաթողիկեները դժգոհ էին կառավարման համակարգից: Փաստացի նրանք ենթարկվում էին Սարատովի լատին եպիսկոպո-

[1] Նույն տեղում:

սին, որին խորթ էին հայերին հուզող շատ հարցեր: Սրա հետևանքով Անդրկովկասի հայ կաթողիկեների բազմաթիվ խնդրանքներից և բողոքներից հետո առաջ եկավ հայ կաթողիկեներին Սարատովի լատին եպիսկոպոսի իրավասությունից հանելու հարցը: Շատերը սա բացատրում են լատին կրոնավորների և ծիսակատարության հարուցած խոչընդոտներով: Մասնավորապես, Անդրկովկասի հայ կաթոլիկները 1905թ. գարնանը հատուկ պատգամավորություն են ուղարկում փոխարքա Վորոնցով-Դաշկովի մոտ՝ բացատրելով նրան, որ «բուն Անդրկովկասում, ռուսաց տիրապետության ժամանակ, տեղացի հայ կաթոլիկներին հովվել են նախ լատին կապուցին կրոնավորներ, և ապա նրանք ենթարկվել են Տիրասպոլյան (Սարատովի) լատին եպիսկոպոսին: Այս ենթարկումն ըստ օրենքի միայն ժամանակավոր է եղել, բայց նա տևում է մինչև հիմա: ...Թեմակալ լատին եպիսկոպոսը թե՛ իր մեծ հեռավորության և թե՛ շնորհիվ այն հանգամանքի, որ նա ծեսով և լեզվով օտար է և տեղյակ չէ Հայ Կաթողիկե եկեղեցու առանձնահատկություններին, չի կարողացել ոչ մի կարգ մտցնել և ամենևին բավականություն չի տվել հայ կաթոլիկների իրական հոգևոր պահանջներին: Դրանից անընդհատ առաջացել են վեճեր և անկարգություններ»[1]: Եվ ըստ այդմ՝ նրանք պահանջում են. «հանել իրենց վերջնականապես լատին եպիսկոպոսի իրավասությունից, տալ սեփական հայ կաթոլիկ եպիսկոպոս»[2]:

Հայ կաթողիկեներն իրավական և բարոյական հիմքեր ունեին պահանջելու հայ եպիսկոպոս, քանի որ «Տիրասպոլի լա-

[1] Հրաւէր Ողջմտութեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1993, էջ 110:
[2] Նույն տեղում:

տին եպիսկոպոսը, որպես թեմական վիճակավոր, ազատ էր այնպիսի տնօրինություն անել, որ, օրինակ, Թիֆլիսի հայ կաթոլիկների եկեղեցին հետզհետե կորցրեց իր հայկական բնավորությունը և դառավ լատինական եկեղեցի»[1]: Սակայն հայ կաթողիկեների պահանջները միանգամից չլուծվեցին: 1909թ. Ռուսական կայսրության ներքին գործերի նախարարությունը հանձն առավ մշակել մի օրենք, որը կկարգավորեր հայ կաթողիկեների եկեղեցական-համայնքային կյանքի կառուցվածքը: Ըստ օրենքի՝ նախատեսվում էր ապագայում Հայ Կաթողիկե եկեղեցու ղեկավարումը հանձնել հատուկ կառավարչի, որը պետք է լիներ հոգևորական դասի ներկայացուցիչ: Նա պետք է նշանակվեր միայն ընտրության արդյունքում, իսկ թեկնածության հարցը պետք է համաձայնեցվեր Հռոմի Կաթոլիկ եկեղեցու բարձրագույն ներկայացուցչի հետ: Հայ Կաթողիկե եկեղեցուն օրենքով նախատեսվում էր տալ համայնքների խնդիրներն ինքնուրույնաբար տնօրինելու և կառավարելու արտոնություններ: Այս մշակված օրինագիծը նույն թվականին ներկայացվեց պետական դումա[2]:

1909թ. դումայի ընդունած օրենքի համաձայն՝ հայ կաթողիկեների համար Ռուսական կայսրությունում ստեղծվեց Առաքելական կառավարչություն (*Апостольская администратура*), որի ղեկավար նշանակվեց Հռոմից ուղարկված ազգությամբ հայ առաջնորդ Սարգիս վրդ. Աբրահամյանը: Կառավարչության կազմի մեջ ստեղծվեց նաև Եկատերինոդարի կուրացիան:

[1] *Բէրուրեանց Պ.,* Հայ-կաթոլիկութեան մուտքը Վրաստան եւ վրացախօս հայ-կաթոլիկները, «Մշակ», Թիֆլիս, 1888, թիվ 26-29:
[2] Армяне-католики, Голос Москвы, Москва, 1909, N 14.

1910թ. Եկատերինոդարը դարձավ տեղի հայ կաթողիկեների կենտրոնը, որի հովվապետության տակ անցան Հյուսիսային Կովկասի, Աստրախանի, Վորոնեժի, Պենզայի, Ռոստովի, Սարատովի, Սամարայի և Ցարիցինի հայ կաթողիկե համայնքները: 1913թ. Եկատերինոդարի եկեղեցական ծուխը կազմում էր 2087 հայ կաթոլիկ[1]:

Ընդհանուր առմամբ, մինչև խորհրդային կարգերի հաստատումը՝ ողջ Ռուսական կայսրությունում, համաձայն Հայ Կաթողիկե եկեղեցու «Օրացոյց»-ի, կային 61.240 հայ կաթողիկեներ, որոնք բաշխված էին 172 գյուղում, ունեին 71 եկեղեցի, 36 քահանա և 8 վարդապետ[2], իսկ 1917թ. արդեն հաշվվում էր 47 հոգևորական, 45 եկեղեցի և մատուռ՝ 66.618 հետևորդներով[3]:

Թվում է, թե հայ կաթողիկե համայնքների ձևավորումը Ռուսական կայսրության սահմաններում անցել է հանդարտ և առանց լուրջ խնդիրների: Իրականում նրանց նկատմամբ եղել են թե՛ քաղաքական ճնշումներ և թե՛ միջդավանական, հատկապես՝ կրոնական անհանդուրժողականության հողի վրա առաջացած լրջագույն խնդիրներ: Բացի այդ, կային նաև այլ խնդիրներ. օրինակ, դավանափոխությունը հանգեցրեց Թիֆլիսի հայ կաթողիկեների համայնքի քայքայմանը, որն ուներ իր պատճառները: Պատահական չէ, որ ժամանակի ընթացքում տեղի, Գորիի ու Քութայիսի հայ կաթողիկեները բռնել էին վրացականացման ուղին, դարձել վրացախոս: Հարկ չենք համարում այս-

[1] *Селицкий А.,* Из истории армяно-католиков на Северном Кавказе, http://www.mashtots.ru/istoriya-armyan-kubani/nauchnye-raboty/iz-istorii-armyano-katolikov-na-severnom-kavkaze

[2] *Արոյան Ս.,* Համառոտ պատմութիւն Հայ Կաթողիկէ (Կաթոլիկ) Եկեղեցու, http://www.armeniancatholic.ru/pdf/armchurch.pdf

[3] *Селицкий А.,* Из истории армяно-католиков на Северном Кавказе, http://www.mashtots.ru/istoriya-armyan-kubani/nauchnye-raboty/iz-istorii-armyano-katolikov-na-severnom-kavkaze

տեղ կանգ առնել սույն խնդրի վրա, բայց այն, որ վերոհիշյալ քաղաքների և մյուս վայրերում բնակվող հայ կաթողիկեների որոշ մասը կամա թե ակամա «ընտրեց» ազգափոխության ճանապարհը, փաստ է: Ընդ որում՝ այն առավել քան արագացավ ցարական և խորհրդային տարիներին[1]:

Ինչպես ժամանակին նշում էր Պետրոս Բեբուրյանցը. «...ցաւալին այն է, որ այն ժամանակին Թիֆլիսի հայ-կաթոլիկները ոչինչ գիտակցութիւն չեն ունեցել հեռատես լինելու, որովհետեւ նոցա համար կրօնական դաւանութեան առաջ իսպառ անհետանում էր ազգայնութեան գաղափարը, եւ հաւանական է կարծել, որ ինչպէս ազգայնութեան մասին, այնպէս էլ կրօնի առանձնայատկութեան մասին ոչինչ հասկացողութիւն չէ եղել այն ժամանակ հայ-կաթոլիկների մէջ: ...Իսկ Վրաստանի մէջ, վրաց դրացիութեամբ, եւ նոցա ազդեցութեան տակ արդէն թուլացել էին ազգայնութեան ամենաէական մասից – մայրենի լեզուից: Եւ այդպիսով կապուցին պատերները, թեեւ 1844 թւին ռուսաց կառավարութեան ձեռքով աքսորուեցան Կովկասից եւ Անդրկովկասից, բայց Թիֆլիսի հայ-կաթոլիկ հասարակութեան մէջ չը գտնվեցաւ մի այնպիսի հայ-կաթոլիկ հոգեւորական, որ ուղղակի պաշտպանէր հայ-կաթոլիկների եկեղեցական իրաւունքները, տեղի չը տալով լատին եկեղեցականների անիրաւացի պահանջներին»[2]:

[1] Այս մասին տե՛ս Հրաւէր Ողջմտութեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1993, *Միմավորյան Ա., Հովյան Վ.,* Ջավախահայության որոշ հիմնախնդիրներ (Ջավախահայության դավանաբանային և տեղեկատվական վիճակի ուսումնասիրություն), Երևան, 2009:

[2] *Բեբուրեանց Պ.,* Հայ-կաթոլիկութեան մուտքը Վրաստան եւ վրացախօս հայ-կաթոլիկները, «Մշակ», Թիֆլիս, 1888, թիվ 26-29:

Ռուսական կայսրությունում Թուրքիայից գաղթած շատ հայ կաթողիկեներ դավանափոխվել և ընդունել են ուղղափառություն[1], հայտնի են նաև խառնամուսնության փաստեր, որոնք հիմնականում կատարվում էին այլազգի կաթոլիկների հետ՝ վտանգելով ազգային ինքնության պահպանումը: Հայտնի է, որ հայ կաթողիկեներին արգելված էր զբաղվել միսիոներությամբ, սակայն օտարազգի կապուցինները մշտապես փորձ էին անում դավանափոխել Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներին, խառնվել հայ կաթողիկեների հանրային կյանքի տարբեր ոլորտներին՝ կապելով նրանց լատինական եկեղեցու հետ, և եթե առաքելադավան հայերի պարագայում «հաջողություններն» անշան էին, ապա հայ կաթողիկե եկեղեցու հետևորդներին դեպի լատինական կոստյոլ ուղղորդելու քաղաքականությունը տվեց իր բացասական պտուղները: Արժե հիշատակել, որ դեռևս 1852թ. Նիկոլայ Առաջին ցարն արտոնել էր Էջմիածնի վեհապետերին համապատասխան առիթ ներկայանալու դեպքում Հայաստանեայց Առաքելական եկեղեցու գիրկը վերադարձնել կաթոլիկ դավանությանը հարած հայերին՝ դրա համար պահանջելով ներքին գործերի նախարարության նախնական թույլտվությունը[2]: Անհատական մակարդակով բազում հայերի հնարավորություն ընձեռվեց վերադառնալ առաքելական դավանանքին:

Ամփոփելով՝ թվարկենք այն հիմնական գործոնները, որոնց արդյունքում հայ կաթողիկեները հայտնվեցին Ռուսական կայսրության տարածքում և ստեղծեցին համայնքներ: Դրանք էին.

[1] *Лейберов И.,* Подвиг Нунэ: документальная повесть о М.Ф. Агаджановой, Ленинград, 1985. стр. 25.

[2] Հրաւէր Ողջմտութեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1993, էջ 113:

1. Ղրիմի նվաճումը,
2. Ռեչ Պոսպոլիտայի երրորդ բաժանումը՝ 1775թ.,
3. Վրաստանի միացումը Ռուսաստանին,
4. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին,
5. 1828-1830թթ., 1877-78թթ. և հետագայում Արևմտյան Հայաստանից հայ կաթողիկեների տեղափոխվելն Արևելյան Հայաստան, Վրաստան և Ռուսական կայսրության այլ տարածքներ։

ԳԼՈՒԽ 2
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՆԵՐԸ ԽՍՀՄ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հոկտեմբերյան հեղափոխությունից և խորհրդային կարգերի հաստատումից հետո ողջ ԽՍՀՄ տարածքում սկսվեցին կրոնական տարատեսակ հետապնդումներ: Աթեիստ խորհրդային իշխանություններն առաջին սլաքն ուղղեցին կաթոլիկ զանգվածի դեմ՝ անկախ էթնիկ պատկանելությունից: Խորհրդային կարգերի հաստատման առաջին տասնամյակներում հակաեկեղեցական քաղաքականությունն ուղեկցվեց հոգևորականության նկատմամբ բռնարարքներով, աքսորով, ֆիզիկական ոչնչացումով, եկեղեցիների քանդմամբ, ինչպես նաև գույքի բռնագրավմամբ: Այն, որ հոգևորականության և եկեղեցու նկատմամբ այդպիսի քաղաքականությունն իրականացվում էր պետական մակարդակով, արտահայտվում է 1922թ. Լենինի՝ Մոլոտովին ուղղած նամակում. *«Որքան շատ հոգևորականների և արմատական բուրժուազիայի ներկայացուցիչների գնդակահարենք, այնքան լավ: Հատկապես հիմա՛, պետք է այնպիսի մի դաս տալ այս հանրությանը, որպեսզի մի քանի տասնամյակ ոչ մի դիմադրության մասին չկարողանան մտածել»*[1]:

Կրոնի և եկեղեցու դեմ հաջող պայքար մղելու նպատակով դեռևս 1925թ. Եմելյան Յարոսլավսկու գլխավորությամբ ստեղծ-

[1] Русская Православная Церковь в советское время (1917-1991): Материалы и документы по истории отношений между государством и Церковью (Сост. книги Герд Ш.) Москва, 1995. стр. 39, 156.

վեց «Անաստվածների միություն» (*Союз Безбожников*) կազմակերպությունը: ԽՍՀՄ տարածքում հակաեկեղեցական քարոզչությունը հասավ մեծ մասշտաբների: Նսեմացվում էին եկեղեցու, հոգևորականության դերն ու նշանակությունը հանրության կյանքում: Այդ պայքարն, առանց որևէ խտրականության, ուղղված էր ընդդեմ բոլոր քրիստոնեական ուղղությունների, որից խուսափել չկարողացան թե՛ Հայ Առաքելական, թե՛ Հայ Կաթողիկե և թե՛ Հայ Ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչները: Ռուսաստանի հայ կաթողիկեների (և՛ հոգևորականները, և՛ հետևորդները) մի մասն աքսորվեց, ոմանք գնդակահարվեցին:

Հատկապես կաթոլիկների նկատմամբ նման դիրքորոշումն իբրև երևույթ ուներ քաղաքական երանգ, ինչը դիտվում էր որպես արտասահմանի հետ կապերի չեզոքացման անհրաժեշտ «միջոցառում»: Իզուր չէ, որ ԽՍՀՄ կազմավորման առաջին քսանամյակում կաթոլիկները՝ անկախ ազգային պատկանելությունից, քաղաքական ընտրանու կողմից դիտվում էին որպես «օտար» զանգված:

Հատկանշական է, որ այդ «միջոցառումները» հատկապես տեղի էին ունենում խորհրդային սահմանամերձ տարածքներում՝ Վրաստանի հայաբնակ Սամցխե-Ջավախքում, Բաթումում, հետագայում՝ Լվովում, հայ, լեհ և գերմանացի կաթոլիկների շրջանում: Սամցխե-Ջավախքը, օրինակ, համարվեց «սահմանային գոտի»: Այդ պատճառով կաթոլիկ հոգևորականությունը, իբրև արտասահմանի հետ կապված անվստահելի տարր, մեծ խոչընդոտների էր հանդիպում գյուղեր այցելություններ կատարելիս, քանի որ այնտեղ մեկնելու համար անհրաժեշտ էր հատուկ անցաթուղթ ունենալ:

Թբիլիսիում գլխովին ոչնչացվեց հայ հոգևորականների մեծ մասը, որոնք լուրջ քայլեր էին ձեռնարկում ուծացած հայերին իրենց արմատներին բերելու գործում: Այս իրադրությունում հայադարձության թափ առնող գործընթացը կանգ առավ՝ զարկ տալով վախի մթնոլորտում կաթողիկե հայերի նոր ազգափոխման երևույթին, որը մինչև այսօր չի կարողանում վերականգնվել այդ հարվածներից: Շուրջ մեկ տասնամյակ տևած հակաեկեղեցական քարոզչությունը տվեց իր բացասական պտուղները: ԽՍՀՄ ղեկավարությունը, պետական մարմինների հետ համատեղ, համակարգված և ուղղորդված քաղաքականության շնորհիվ նախապատրաստեց հայ կաթողիկե հոգևորականության (և ոչ միայն նրանց) դեմ տարվող անմարդկային ծրագրի իրականացումը:

Հայ կաթողիկե հոգևորականների և Մխիթարյան միաբանության անդամների ձերբակալություններն սկսվեցին 1920-ական թվականների վերջին: Առաջին հարվածը ստացան Սովետական Հայաստանի և Վրաստանի հոգևորականները, որոնք հայ կաթողիկեների ղեկավարներն էին: 1930թ. հունվարին Թիֆլիսում խորհրդային իշխանությունների նախաձեռնությամբ տեղի ունեցավ Կովկասի հայ կաթողիկեների արհեստական մի նիստ, որտեղ հայ կաթողիկեների Առաքելական կառավարչության ղեկավար Տեր Հակոբ Բագարատյանն անհիմն մեղադրվեց «Սովետական իշխանությունների դեմ սանձազերծած հանցագործությունների մեջ, որը մեծ վնաս էր հասցրել Կաթոլիկ եկեղեցուն»: Մասնավորապես, նա ներկայացվեց որպես «Սովետական Միության հանդեպ արևմտյան երկրներում ոչ դրական

կարծիք ձևավորելու գլխավոր մեղավոր, քանի որ նա Հռոմի Կաթոլիկ եկեղեցուն ներկայացնում էր ԽՍՀՄ-ում տիրող կրոնական հետապնդումների մասին կեղծ տեղեկություններ և կաշառման միջոցով ներգրավել էր միսիոներներին հակահեղափոխական քարոզչությունում»: Հետո պետանվտանգության մարմինները, ճնշում բանեցնելով նիստի մասնակիցների վրա, զրկեցին Հակոբ Բագարատյանին Հայ Կաթողիկե եկեղեցու կառավարչի պաշտոնից: Նիստին ներկա հոգևորականներն արտաքին ճնշումների ներքո ստիպված եղան ընդունել այս որոշումը: 1930թ. Հակոբ Բագարատյանը ձերբակալվեց և դատապարտվեց 10 տարվա ազատազրկման՝ հոգևորականների համար գերեզմանափոս դարձած Ռուսաստանի հյուսիսում գտնվող Սոլովկի կղզում: Սակայն Բագարատյանը հասցրեց գտնել իրեն փոխարինող՝ հանձին Կարապետ Դիլուրգյանի[1]:

Նախքան Բագարատյանի ձերբակալությունը առաջին կոռուստը կրեց Ախալքալաքի Ալաստան գյուղը: 1928թ. ձերբակալվում և հետագայում՝ 1937թ., Սոլովկի կղզում գնդակահարվում է սույն գյուղի հոգևոր հովիվ, Լևոնյան վարժարանի նախկին սան, լուսավորյալ գիտնական Ստեփան Երոյանը[2]: Երոյանին ու Բագարատյանին աքսորավայրում ներկայացվեց նոր, ծանր մեղադրանք՝ լրտեսություն: Հասկանալի պատճառներով կղզում գտնվող հոգևորականները չէին կարող զբաղվել լրտեսությամբ: Սակայն շինծու մեղադրանքները հնարավորություն էին տալիս խորհրդային իշխանություններին վերջնականապես

[1] *Осипова И., "В язвах своих сокрой меня…": Гонения на Католическую Церковь в СССР. По материалам следственных и лагерных дел,* Москва, 1996, с. 148.

[2] Ստեփան Երոյանի Սոլովկիից ուղարկած նամակներ, ձեռագրեր, անտիպ աշխատություններ, նկարներ, Արեստակես Սիմավորյանի անձնական արխիվ:

իրականացնել այն, ինչին նրանք սպասում էին՝ զնդակահարությունների։ Երոյանի զնդակահարությունից (1937թ.) առաջ՝ 1936թ., Սոլովկի կղզում մահկանացուն կնքեց նաև արդեն անդամալույծ դարձած Բագարատյանը։

Հայ կաթողիկեների առաջնորդի պաշտոնը փաստացի ստանձնեց Կարապետ Դիլուրգյանը, որը դեռևս 1916թ. հովվում էր Մոսկվայի հայ կաթողիկե փոքրաթիվ համայնքին։ Դիլուրգյանը 1934թ. ապարդյուն ջանքեր գործադրեց համոզելու խորհրդային իշխանություններին՝ թույլ տալ իր ներկայությունը Հայաստանում (Ստեփանավանում և Լենինականում) գտնվող կաթոլիկ գյուղերի հասարակայնության հոգևոր պահանջները բավարարելու համար։ Այս հանդգնության համար վերջինիս, Կրասնոդարում գտնվելու ժամանակ՝ 1936թ., 75 տարեկան հասակում ձերբակալում են և աքսորում Կիրովի երկրամաս։ Ձերբակալությունից անմիջապես հետո խորհրդային իշխանությունների հրամանով փակվում է Կրասնոդարի կաթոլիկ եկեղեցին, ուր հաճախում էին նաև հայ կաթողիկեները։

Թեև 1939թ. Դիլուրգյանը պատիժը կրելուց հետո վերադառնում է Կրասնոդար, սակայն նրան արգելում են զբաղվել հոգևոր գործունեությամբ։ Չհամակերպվելով նման իրավիճակի հետ՝ նա գաղտնի այցելում էր հայ կաթողիկեների բնակավայրեր, իրականացնում կրոնական արարողություններ Կրասնոդարի երկրամասի հարավում[1]։ Հետագայում բնակվելով Աբխազիայի Օչամչիր քաղաքում՝ շրջում էր Վրաստանի հայ կաթողիկե գյուղերում՝ կատարելով ծիսական արարողություններ։

[1] *Селицкий А.,* Из истории армяно-католиков на Северном Кавказе, http://www.mashtots.ru/istoriya-armyan-kubani/nauchnye-raboty/iz-istorii-armyano-katolikov-na-severnom-kavkaze

Նույնիսկ եղել են դեպքեր, որ հայ պատանիներին կնքել է քնած ժամանակ, որպեսզի վերջիններս չպատմեն այլոց։

Այստեղ հարկ ենք համարում ներկայացնել Հայ Կաթողիկե եկեղեցու այն հոգևորականների անունները, որոնք բռնադատվեցին ստալինյան ժամանակաշրջանում.

Հալաջյան (Ալագյան) Պետրոս - ձերբակալվել է 1931 թվականին։ Հետագա ճակատագիրն անհայտ է[1]։

Գափոյան Անտոն - ձերբակալվել է 1929թ. և մինչև 1931թ. գտնվել Մոսկվայի բանտում, ավելի ուշ՝ աքսորավայրում։ Հետագա ճակատագիրն անհայտ է[2]։

Թաթոյան Հովսեփ - Բաթումի հայ կաթողիկեների հովիվ։ Ձերբակալվել է Բաթումում՝ 1938թ.։ Հետագա ճակատագիրն անհայտ է[3]։

Կարապետյան Տեր Արսեն (Տեր Հայկ) Խորենի (1893-1937թթ.) - ավարտել է հոգևոր սեմինարիան և հոգևոր ակադեմիան Հռոմում։ Ձերբակալվել է Հայաստանում 1932թ.։ Մեղադրվել է Թալինի շրջանում գտնվող դաշնակցության անդամների հետ կապեր ունենալու և բանդիտական խմբավորման մեջ գտնվելու, հակասովետական քարոզչություն իրականացնելու համար։ Դատապարտվել է 5 տարվա ազատազրկման Սոլովկի կղզում։ Գնդակահարվել է Լենինգրադի բանտում 1937թ. դեկտեմբերի 8-ին[4]։

---

[1] *Dzwonkowski R.,* SAC: Losy duchowieństwa katolickiego w ZSSR 1917-1939. Martyrologium, Lublin, 1998, c. 201.

[2] Նույն տեղում, էջ 237։

[3] Նույն տեղում, էջ 479։

[4] *Осипова И.,* "В язвах своих сокрой меня…": Гонения на Католическую Церковь в СССР. По материалам следственных и лагерных дел, Москва, 1996, с. 203.

Հակոբ Տերմաջերա Տիխոյան - ձերբակալվել է Կրասնոդարում 1937թ.: Նույն թվականին էլ գնդակահարվել է[1]:

Հովհաննես Տեր-Պողոսյան - ձերբակալվել է Հայաստանում, ուղարկվել Նովոսիբիրսկի աքսորավայր, այնտեղ էլ գնդակահարվել 1937 թվականին[2]:

Հայ Կաթողիկե եկեղեցուն ծառայող հոգևորականներից բռնադատվեցին նաև Արթիկի շրջանից Տեր Ալեքսան Հակոբյանը, Լենինականից՝ Տեր Պետրոս Դավթյանը, Ստեփանավանից՝ Տեր Հակոբ Անտոնյանը և Թալինից՝ Տեր Բարսեղ Կիրակոսյանն[3] ու Տեր Մեսրոպ Էդիջանյանը[4]: Ախալցխայում բռնադատվեցին Ծղալթբիլա գյուղի վարդապետ Քերոբ Տեր-Պողոսյանը և նույն գյուղի քահանա Բագրատ Տեր-Սիմոնյանցը (երկուսն էլ զոհվել են աքսորում)[5], Թիֆլիսում՝ Հայ կաթողիկեների Առաքելական վարչության նախկին ղեկավար վարդապետ Սարգիս Տեր-Աբրահամյանը[6]:

Այսպիսով, 1929-1937թթ. ողջ ԽՍՀՄ տարածքում Հայ Կաթողիկե եկեղեցուն ծառայող հոգևորականներին առավել շատ մեղադրել են լրտեսության, հակասովետական և կաթոլիկ եկեղեցու քարոզչությամբ զբաղվելու և, ավելի քիչ, դաշնակցության հետ կապերի մեջ:

---

[1] *Dzwonkowski R.,* SAC: Losy duchowieństwa katolickiego w ZSSR 1917-1939. Martyrologium, Lublin, 1998. c. 480.

[2] Նույն տեղում, էջ 480:

[3] *Մանուկյան Ա.,* Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ., Երևան, 1999, էջ 120:

[4] *Dzwonkowski R.,* SAC: Losy duchowieństwa katolickiego w ZSSR 1917-1939. Martyrologium, Lublin, 1998. c. 223.

[5] *Կարապետյան Ս.,* Ախալցխա, Երևան, 2008, էջ 217-218:

[6] *Dzwonkowski R.,* SAC: Losy duchowieństwa katolickiego w ZSSR 1917-1939. Martyrologium, Lublin, 1998, c. 480.

Այս ամենին զուգահեռ՝ որոշ հայ կաթոլիկ հոգևորականների թույլատրվել է լքել Խորհրդային Միությունը։ Այսպես, 1928թ. ձերբակալված Մխիթարյան միաբանության վարդապետ Ներսես Ակինյանը մեղադրվում է կաթոլիկ եկեղեցու քարոզչությամբ զբաղվելու և հեքիմության մեջ ու աքսորվում երեք տարով։ Ապա նրան թույլատրվում է մեկնել արտասահման[1]։ Նույն կերպ տարբեր մեղադրանքներից հետո Իտալիա է մեկնում Կրասնոդարում և Անապայում բնակվող արդվինցի հայ և այլազգի (չեխեր, լեհեր և այլն) կաթոլիկներին հովվություն անող Պետրոս-Պիեռ Ալաջաջյանը[2]։

Խորհրդային իշխանությունները եկեղեցու և ժողովրդի միջև եղած հոգևոր կապերն արմատախիլ անելու նպատակով որոշում ընդունեցին փակել նաև գործող եկեղեցիներն ու մատուռները՝ շատ տեղերում դրանք վերածելով պահեստների։ Թվում է, թե այսպիսով վերջ էր տրվում հոգևորականների նկատմամբ բռնություններին։

1940թ., երբ Լվովի հայ կաթողիկե մետրոպոլիան հայտնվեց խորհրդային բանակի վերահսկողության տակ, եկեղեցու հետևորդ հայերի գրեթե կեսը՝ 2500 մարդ, աքսորվեց Սիբիր, իսկ նրանց ղեկավար հայր Դիոնիսի Կաետանովիչը, որը գերմանական օկուպացիայի հետևանքով դեռևս պաշտոնավարում և գտնվում էր Լվովում, հետագայում՝ խորհրդային բանակի ազատագրումից հետո՝ 1944թ., ձերբակալվում և կնքում է մահկանացուն աքսորում՝ 1954թ.։ Լվովի, Իվանո-Ֆրանկովսկի, Տիսմենիցայի, Լիսեցի Սնյատինի, Բերեժանիի, Գորոդենկայի, Կուտի

[1] *Մանուկյան Ա.,* Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ., Երևան, 1999, 116։
[2] *Петросян А.,* Франги: историко-этнографическое исследование, http://lib.zagloba.me/node/772

Հայ Կաթողիկե եկեղեցիների գույքի մեծ մասը պետականացվեց։ Լվովի Հայ Կաթողիկե եկեղեցու և նրա հետևորդների վերջնական «լիկվիդացումն» իրականացվեց Ն.Խրուշչովի անմիջական հրահանգով։ Հատկապես Հայ Կաթողիկե եկեղեցու հոգևորականները մեղադրվում էին գեստապոյի և հայ ազգայնականների հետ կապեր ունենալու մեջ[1]։ Ի վերջո, «լիկվիդացնելով» Հայ Կաթողիկե եկեղեցու և նրա հոգևորականների գործունեությունը՝ արգելվեց նաև արտասահմանում գտնվող հոգևորականների մուտքը Խորհրդային Միություն։ Այս իրադարձություններից հետո հայ կաթողիկե համայնքներն, ըստ էության, դադարեցին գոյություն ունենալ։

[1] Տե՛ս Հավելված 2։

ԳԼՈՒԽ 3
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Ռուսաստանի, ինչպես նաև ողջ հետխորհրդային տարածքում կաթոլիկության վերածնունդը համընկավ վերակառուցման տարիների հետ: Այդ գործընթացն անմիջականորեն թույլատրվել էր ԽՍՀՄ իշխանությունների կողմից, միայն թե վերահսկվում էր ՊԱԿ-ի կողմից: Խորհրդային Միության փլուզումից հետո աստիճանաբար ընդլայնվեցին Վատիկանի ազդեցության սահմանները: Հիմնականում Հայաստանում, Վրաստանում և Ռուսաստանում բնակվող հայ կաթողիկեները մտան նորաստեղծ Արևելաեվրոպական թեմի մեջ (կենտրոնը՝ Գյումրի):

Ներկայումս Ռուսաստանի տարածքում բնակվող հայերը պատկանում են երեք հիմնական դավանանքի՝ առաքելական, կաթոլիկ, բողոքական: Սակայն մի շարք վայրերում կան նաև Ռուս Ուղղափառ եկեղեցու, վերջին մի քանի տարիներին՝ բողոքականության մեկ այլ ճյուղին՝ լյութերականությանը հարող հայեր ևս: Միևնույն ժամանակ, հարկ է շեշտել, որ հայ կաթողիկեները գտնվում են էթնիկ և կրոնադավանական բազմաշերտությամբ աչքի ընկնող, «ռիսկային գոտի» համարվող մի երկրում, ուր դավանանքային տարբերությունները կարող են օգտագործվել ի վնաս մեզ, եթե չկան առողջ հարաբերություններ այդ «դավանական կորիզը» կազմող անհատների և մարդկային խմբերի միջև:

Ռուսաստանի հայ կաթողիկե համայնքներն ու Հայ Կաթողիկե եկեղեցին ունեն ինչպես հոգևորականների պակասի, այնպես էլ պետության կողմից եկեղեցու գրանցման հետ կապված խնդիրներ, որոնց կանդրադառնանք ստորև:

Նախ՝ Ռուսաստանի էթնիկ և կրոնական հարցերով զբաղվող կառույցները մինչ այժմ որևէ վիճակագրություն չեն կատարել հայ կաթողիկեների թվաքանակի վերաբերյալ: Փորձենք ինքներս մի փոքր լրացնել այդ բացը՝ ՌԴ հայ կաթողիկեների հետ մեր ունեցած որոշակի անհատական կապերի միջոցով: Ռուսաստանում բնակվող հայ կաթողիկեներն Արևելաեվրոպական թեմի ստեղծումից ի վեր Հայաստանի, Վրաստանի իրենց դավանակիցների հետ կազմեցին մեկ ընդհանրական միավոր:

Թվաքանակն ու աշխարհագրական սփռվածությունը

Հայ կաթողիկեները ՌԴ ընդհանուր հայության փոքր մասն են կազմում. թվային առումով զգալիորեն զիջում են հայ առաքելականներին և գերազանցում հայ ավետարանականներին: Ըստ պատմաբան Սալավաթ Արոյանի՝ Ռուսաստանում 2002թ. տվյալներով բնակվում էր 54 հազար հայ կաթողիկե[1]: Նույն թվաքանակը, բայց արդեն 2010թ. նշում է նաև Անաստասիա Միտրոֆանովան[2], որը, հավանաբար, կրկնել է Արոյանի տվյալները: Մոսկվայի հայ կաթողիկեների համայնքի ավագ քահանա Գևորգ Նորատունկյանը նշում է, որ թվաքանակի վերաբերյալ տվյալներ հավաքելը բավական բարդ է: Ըստ նրա, Ռուսաստա-

[1] *Արոյան Ս.,* Համառոտ պատմութիւն Հայ Կաթողիկէ (Կաթոլիկ) Եկեղեցու, 2002, http://www.armeniancatholic.ru/pdf/armchurch.pdf:

[2] *Митрофанова А.,* Католическая церковь на постсоветском пространстве, http://ruskline.ru/analitika/2010/02/22/katolicheskaya_cerkov_na_postsovetskom_prostranstve/

նում պետք է որ հաշվվեն մոտ 80 հազար, որոշ դեպքերում՝ անգամ 200 հազար հայ կաթողիկեներ[1], ինչը խիստ ուռճացված է։ Թվաքանակի հարցում դժվարությունները, համաձայն նույն քահանայի, կապված են Ռուսաստանի տարածքում հայ կաթողիկեների տեղաշարժերի հետ, որոնք աշխատանք փնտրելու հույսով անընդհատ մեկնում են քաղաքից քաղաք։ Այնպես որ, հայ կաթողիկեների թիվը փորձագիտական գնահատականներով պետք է որ տատանվի 60-80 հազարի սահմաններում։ Ընդ որում՝ համայնքն ավելանում է ոչ թե բարձր ծնելիության հաշվին, այլ Հայաստանից և Վրաստանից առայսօր շարունակվող նույնադավանների արտագաղթի հետևանքով։

Հայության տարադավան այս խումբը կազմված է երկու հիմնական շերտից՝ հնաբնակներից և ներգաղթյալներից։ Հնաբնակ հայ կաթողիկեների և ներգաղթյալների միջև հնարավոր չէ սահմաններ անցկացնել, քանի որ շատ դեպքերում նրանք կազմում են խառը բնակչություն։ Թեև Ռուսաստանի կաթոլիկների հիմնական միջուկը լեհերը, գերմանացիները, ուկրաինացիներն ու մասամբ նաև չեխերն են, սակայն մի շարք քաղաքներում հայերը քանակական տեսանկյունից նույնիսկ գերազանցում են վերջիններիս։ ՌԴ-ում հայ կաթողիկե համայնքներն իրարից հեռու են. Իրկուտսկից մինչև Սանկտ Պետերբուրգ ընկած տարածքում հայ կաթողիկեներն ապրում են ցրված, ինչը որոշակի մասնատվածություն է ստեղծում։

Ընդհանրապես, Մոսկվայի հայ կաթողիկե համայնքը պատմական տարբեր ժամանակաշրջաններում զարմանալիո-

[1] *Орлова Л.,* Католицизм с кавказским акцентом, http://religion.ng.ru/people/2010-10-06/6_catolicism.html

րեն վերածնունդ էր ապրում և հետո մարում: Գոնե հայտնի է, որ տեղի հայ կաթողիկեները երբեք չեն ունեցել սեփական եկեղեցի և այցելել են լատինածես արարողակարգ անցկացնող Սբ. Լյուդովիկոս եկեղեցի՝ ընդհուպ մինչև 1930թ.: Հատկանշական է, որ հայ կաթողիկե համայնքը Մոսկվայում Սբ. Լյուդովիկոս կաթոլիկ եկեղեցում սկսել էր հավաքվել արդեն 1980-ական թվականների կեսերից, իսկ 1991 թվականից այն գործում էր կանոնավորապես:

Ըստ այդմ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքների շարքում ամենակազմակերպվածը, թերևս, Մոսկվայի հայ կաթողիկե համայնքն է, որն ավելի համախմբված սկսեց գործել 2000 թվականից: Սկզբնապես հայ կաթողիկեները հավաքվում էին Մոսկվայի Սբ. Լյուդովիկոս եկեղեցում՝ միանձնուհի Նունե Պողոսյանի ղեկավարությամբ, սակայն վերջինիս հեռանալուց հետո որոշ ժամանակ հավաքները դադարել էին, և միայն 2002 թվականից այն սկսեց գործել վանահայր Միքայել Բասսալեի հովվապետությամբ[1]: Մոսկվայի համայնքը գլխավորապես կազմված է Սամցխե-Ջավախքից արտագաղթած հայերից: Համայնքի ինքնակազմակերպման խնդիրը կատարում են Նորշեն (Ծղալթբիլա, Ախալցխայի շրջան) գյուղից արտագաղթածները, որոնց հետ միասնաբար են գործում Ախալքալաքի և Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկայի) շրջաններից, Թբիլիսիից, Բաքվից, Թուրքմենստանից և ԱՊՀ այլ երկրներից այստեղ բնակություն հաստատածները: Համաձայն Նորատունկյանի, որպես Հայ Կաթողիկե եկեղեցու հետևորդ Մոսկվայում գրանցված է 2000 ընտանիք: Բացի դրանից, շատերն այցելում են եկեղեցի,

[1] Католики армянского обряда, http://www.catholic.su/node/48

սակայն չեն ցանկանում գրանցվել՝ իրենց մասին տվյալներ չհաղորդելու նպատակով։

Հայ կաթողիկեներն առավել խիտ բնակվում են նաև Ռուսաստանի հարավում՝ Կրասնոդարի երկրամասում։ Ընդ որում՝ այստեղ հնաբնակներ կարելի է համարել Արևմտյան Հայաստանից 1894-1920թթ. գաղթած հայերին, որոնք Սամցխե-Ջավախքից արտագաղթած (1960-ից առայսօր շարունակվող) հայության հետ միասին կազմում են Կուբանի ընդհանուր կաթոլիկների 70%-ը։ Արդվինից գաղթած հայ կաթողիկեները բնակվում են Դոնի Ռոստովում, Տագանրոգում, Կրասնոդարում, Սոչիում, Նովոռոսիյսկում, Անապայում, իսկ բայազետցի հայ կաթողիկեների սերունդները՝ Կալինինսկի շրջանում։ Նշենք, որ այս վայրերում բնակվում են նաև Վրաստանից արտագաղթած հայ կաթողիկեները, որոնք ավելի հոծ բնակվում են Կուրգանինսկում, Աբինսկում, Գելենջիկում։ Հայ կաթողիկեներ եկել և այստեղ են հաստատվել նաև Հայաստանի հյուսիսային շրջաններից՝ Շիրակից, Լոռուց, այլ քաղաքներից ու գյուղերից։ Հայ կաթողիկե համայնքի շատ անդամներ ցրված են նաև ՌԴ այլ շրջաններում.

Յամալո-Նենեցական ինքնավար շրջան, ք.Նոյաբրսկ՝ *20 ընտանիք*

Նովոսիբիրսկի շրջան, ք.Նովոսիբիրսկ՝ *12 ընտանիք*

Օմսկի շրջան, ք. Օմսկ՝ *18 ընտանիք*

Տոմսկի շրջան, ք. Տոմսկ՝ *52 ընտանիք*

Ալթայան երկրամաս, ք. Բառնաուլ՝ *22 ընտանիք*

Իրկուտսկի շրջան, ք. Իրկուտսկ՝ *30 ընտանիք*

Պրիմորսկի շրջան, ք.Վլադիվոստոկ՝ *35 ընտանիք։*

Թե Սիբիրում ու Հեռավոր Արևելքում կոնկրետ որքան հայ կաթողիկե կա՝ անհնար է ասել, սակայն ամեն մեծ քաղաքում կան հայ կաթողիկեներ, և նրանք լատին եկեղեցու անդամներ են։

Միջդավանական համագործակցությունն ու փոխընկալման խնդիրը

Չնայած այն հանգամանքին, որ Հռոմի Կաթոլիկ և Ռուս Ուղղափառ եկեղեցիների միջև միջդավանական համագործակցությունը «բարձր» մակարդակի վրա է, այդուհանդերձ, կաթոլիկների նկատմամբ վերաբերմունքը, անշուշտ, լավագույններից չէ։ Երևում է, որ խորհրդային շրջանում կաթոլիկության նկատմամբ բացասական կարծրատիպերը մասամբ պահպանվում են։ Ռուսաստանի կրոնական դաշտի բազմազանությունը երբեմն այդ երկրում դիտվում է որպես սպառնալիք ազգային անվտանգությանը։ Հասկանալի պատճառներով ուշադրությունն ավելի շատ սևեռված է մուսուլմանների վրա։ Սակայն ուղղափառ-կաթոլիկ հակասությունները նույնպես տեղավորվում են և՛ կրոնադավանաբանական, և՛ մշակութային բախման համատեքստում։

Նշենք, որ այս առումով հայ կաթողիկեները խնդիրներ չունեն, քանի որ ընկալվում են որպես հայեր, այսինքն՝ էթնիկական գործոնն առաջնային է։ Չնայած կաթոլիկների նկատմամբ կրոնական հողի վրա ռուս ծայրահեղականների կողմից ոտնձգություն տեղի է ունեցել 2007թ. Կրասնոդարի երկրամասի Լենինգրադյան մեծ գյուղ կոչվող բնակավայրում, երբ այրեցին տեղի հայ և լեհ կաթոլիկներին պատկանող փայտաշեն եկեղեցին[1], դեպքը միանշանակորեն էթնիկական երանգներ չէր պա-

[1] http://tvkana.ru/2010/02/25/prixod-stanicy-leningradskaya/

րունակում, սակայն ակնհայտ է, որ կրոնական անհանդուրժողականության դրսևորում ստացած նախադեպն իրական «թեժ կետի» կարող էր վերածվել: Մյուս կողմից՝ հայ կաթողիկեներն առանձին ինչ-որ ուժ չեն ներկայացնում և բավական լավ հարաբերություններ ունեն առաքելական հայերի հետ, ինչպես նաև լավ ինտեգրված են ռուսական սոցիումին:

Նշենք, որ փոխադարձ ընկալման հարցում, մինչև խորհրդային կարգերի հաստատումը հսկայական հոգեբանական անջրպետ կար Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների և հայ կաթողիկեների միջև: Նրանք մեկուսացած էին միմյանցից, և շփումները խիստ սահմանափակ էին: Տիրում էր փոխադարձ անհանդուրժողության մթնոլորտ: Խորհրդային տարիներին, սակայն, այդ հոգեբանական անջրպետը գրեթե լիովին վերացավ, և հայ առաքելականի ու հայ կաթողիկեի միջև հաստատվեցին նորմալ՝ դավանանքային տարբերություններով չկաշկանդված հարաբերություններ: Այս գործում, թերևս, էական էր խորհրդային շրջանում պետական մակարդակով իրականացվող աթեիզմի քաղաքականության դերը[1]:

Միջդավանական՝ առաքելական-կաթոլիկ հարթությունում հայերի միջև ներկայում ևս սուր հակասություններ չկան: Երկու եկեղեցիների միջև գոյություն ունեցող հանդուրժողականությունը մերձեցրել է նաև նրանց հետևորդներին, ինչն էլ նպաստել է ՌԴ հայության հասարակական համերաշխությանն ու համախմբմանը: Սրանից ելնելով՝ կարելի է փաստել, որ Վրաստանի և Ռուսաստանի հայ կաթողիկեներն այս տեսան-

[1] *Միմավորյան Ա., Հովյան Վ.,* Կրոնական հանդուրժողականությունը արդի հասարակությունում, http://armmodernization.am/digest_6/

կյունից երբևէ միմյանց նկատմամբ հակաքայլեր չեն ձեռնարկում: Ազգային բարձր ինքնագիտակցությունը կանխում է համայնքների դավանական երկփեղկվածությունը: Դա արտահայտվում է ինչպես կենցաղային՝ ամուսնությունների, համատեղ ուսումնառության, ամառային ճամբարների և միմյանց եկեղեցիներ սովորական այցելություններով, այնպես էլ համազգային նշանակության միջոցառումներով:

Հայաստանում այս խումբն ավելի շատ ժառանգական ինքնությամբ է կաթոլիկ, քան հավատքով: Նրանց հետևորդների մեծամասնությունը որևէ դավանանքային հակասություն չի գիտակցում հայոց եկեղեցու հետ: Նրանք կրոնական կարիքի դեպքում հանգիստ դիմում են առաքելական եկեղեցու հոգևորականին, մտնում են առաքելական եկեղեցի, մասնակցում վերջինիս արարողություններին, առհասարակ իրենց կրոնական կենցաղով գործնականում չեն տարբերվում հայ եկեղեցու հետևորդներից: Այս հանգամանքը, հայագիտության զարգացման գործում Մխիթարյան միաբանության ունեցած անգնահատելի ներդրման հետ մեկտեղ, համենայնդեպս մինչև օրս խոչընդոտել է Հայ Կաթողիկե եկեղեցու նկատմամբ հանրային վերաբերմունքի հնարավոր վատացմանը[1]:

Գրեթե նույն պատկերն է Ռուսաստանում: Նորատունկյանը նշում է, որ «կաթոլիկ հայերի և առաքելական հայերի միջև չկան այնպիսի էական տարբերություններ, ինչպես կաթոլիկների և ուղղափառների միջև: Մեզանում փոքր-ինչ տարբեր են

[1] *Վ. Ասցատրյան,* Հասարակություն-պետություն-կրոն հարաբերությունները, աշխարհում և ՀՀ-ում ընթացող կրոնական տրանսֆորմացիաները, ararat-center.org/upload/files/Hasarakutiun-Petutiun-Kron_Trv.doc

որոշ ավանդույթներն ու ծեսերը: Հավատացյալները փոխադարձաբար կարող են լինել երկու եկեղեցիներում էլ»[1]: Ավելին, Վրաստանի հայաբնակ տարածքներից արտագաղթած հայ կաթողիկեների որոշ մասը վերադառնում է առաքելականությանը, դա ոչ թե պարտադրված քայլ է, այլ շատ անգամ տեղի է ունենում ամուսնական կապերի միջոցով:

Միևնույն ժամանակ, հատկանշական է նաև, որ Ախալցխայի գյուղերից Ռուսաստան արտագաղթած հայերի շրջանում կաթոլիկ հավատքին ապավինելը մեծ տեղ ունի: Խոսքը ներքին ամուսնությունների մասին է, ինչն իրենց հավաստիացմամբ՝ ոչ թե բխում է միմյանց «լավ ճանաչելու» սկզբունքից, այլ արտահայտվում է նույնադավան լինելու հանգամանքով և հատկապես օտար միջավայրում հայ մնալու ձգտումով: Որոշ դեպքերում, սակայն, Ռուսաստան արտագաղթած հայ կաթողիկեներն ամուսնանում են նաև դավանակից լեհերի հետ: Սա միանգամայն այլ խնդիր է և ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ այդ վայրում միևնույն համայնքի անդամներ չեն բնակվում:

Բայց դրան զուգահեռ՝ մի քանի գործոնների պատճառով, ՌԴ հայության շրջանում, անկախ դավանանքային պատկանելությունից, աստիճանաբար ինքնակամ ուղղափառ դառնալու փոքր միտում է նկատվում: Հատկապես այն քաղաքներում, որտեղ հայերը փոքրաթիվ են, համայնքը դեռ կայացած չէ, չունեն եկեղեցիներ (սա վերաբերում է դավանական բոլոր խմբերին)՝ հարկադրված ամուսնանում և կնքվում են ռուսական եկեղեցիներում:

[1] Ապագա ունի՞ Հայ Կաթոլիկ եկեղեցին Ռուսաստանում, «ԱԶԳ», #197, 28-10-2010:

Փոխադարձ ընկալման խնդիրը ևս սուր բնույթ չի կրում: Սակայն անցյալի վերապրուկներ երբեմն հանդիպում են: Հայ կաթողիկեներին այստեղ ոչ միայն առաքելական հայերն են անվանում «ֆրանգ», այլև երբեմն՝ ռուսները: Ընդհանրապես «ֆրանգ» արտահայտության օգտագործումը մեր հանրության մեջ այնքան էլ տեղին չէ, եթե ուղղակի կարելի է ասել հայ կաթողիկե կամ ՀԿԵ հետևորդ: Ազգագրական բնույթի աշխատություններից դուրս նպատակահարմար չէ կիրառել «ֆրանգ» արտահայտությունը հայ կաթողիկեների նկատմամբ: Հաշվի առնելով, որ դա պարունակում է քամահրական և նվաստացուցիչ երանգավորում, ինչպես նաև ենթադրում է ազգային ինքնությունից օտարվածություն, ապա նման արտահայտությունների հաճախակի կիրառումը խոչընդոտում է Հայության դավանական շերտերի ազգային համախմբան գործին: Օրինակ, ըստ ռուսաստանաբնակ հեղինակ Տ.Թավադյանի. «Վերջին տարիներին Ռուսաստանի հարավում բացվում են Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու ծխական համայնքներ, որոնց հիմնական ծխականները հայ ֆրանգներն են, դրա համար էլ որոշ ծխական համայնքներում (Կրասնոդար, Դոնի Ռոստով) քահանաներ են նշանակվում հայերը»[1]: Նախ՝ վերոհիշյալ քաղաքներում կաթոլիկ եկեղեցիները ոչ թե բացվում, այլ վերաբացվում են, քանի որ դրանց գործունեությունը կասեցվել է ԽՍՀՄ ժամանակաշրջանում, և երկրորդ՝ դրանք հայ կաթողիկներ են, այլ ոչ թե «ֆռանգներ»: Այնպես որ, ինքնակազմակերպման միջոցով հայ կաթողիկեները վերականգնում են իրենց կորցրած իրավունքները:

[1] *Ժամակոչյան Ա. և ուրիշներ,* Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում, Երևան, 2010, էջ 35:

Հոգևոր-եկեղեցական խնդիրները

Ռուսաստանի հայ կաթողիկեների համար առանձնահատուկ նշանակություն ունեն հոգևոր-եկեղեցական խնդիրները. դրանք են հայ հոգևորականների խիստ պակասը, ինչն ունի համայնքին հատուկ բնույթ, և ՀԿԵ կարգավիճակի տրամադրումը ՌԴ-ում՝ կապված Ռուսաստանի Դաշնության դատաիրավական համակարգի հետ: Ռուսաստանի հայ կաթողիկեները թեև մտնում են Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի թեմի մեջ, սակայն չեն կարողանում գրանցվել որպես կրոնական համայնք: Սա, թերևս, ամենասուր խնդիրն է, որը վերջին շրջանում մեծ արձագանք է գտել ՌԴ կրոնական և իրավական հարցերով զբաղվող կազմակերպություններում և ամենաքիչն է լուսաբանվել հայկական տեղեկատվական դաշտում:

Վերջին երկու տարում դատական լուրջ գործընթացների մեջ է հայտնվել Մոսկվայի Հայ Կաթողիկե Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը 2009թ. դատական հայց էր ներկայացրել քաղաքային իշխանություններին՝ ցանկություն հայտնելով գրանցվել որպես կրոնական համայնք: Սակայն հայցը մերժվել էր առանց վերանայման:

Հատուկ կարգավիճակ ստանալու համար տարբեր երկրներում սահմանվում են տարբեր չափանիշներ՝ հետևորդների որոշակի թվաքանակը, երկրում տարածված լինելու չափը, բնակչության մեջ բարի գործերով հանրաճանաչ լինելը, իրենց գործունեությունն ու ուսմունքը պետությունից չթաքցնելու, երկրում ակնհայտորեն խոր արմատներ ունենալու հանգամանքը, դավանվող կրոնական պրակտիկայի չհակասելը երկրի սոցիա-

լական քաղաքականությանը և այլն[1]: Իսկ հատուկ կարգավիճակ ՌԴ-ի դեպքում կարող է ունենալ Ռուս Ուղղափառ եկեղեցին, մյուս եկեղեցիները կարող են ունենալ այլ կարգավիճակ:

Ունի՞ արդյոք ՀԿԵ-ն պետական գրանցման հնարավորություն: Հարցին պատասխանելու համար նախ անդրադառնանք ՌԴ դավանական պատկերին ու կրոնական ոլորտի իրավական կողմին: 2009թ. հունվարի 1-ի դրությամբ ՌԴ-ում գրանցված են ավանդական քրիստոնեական ուղությունները, ինչպես նաև իսլամական, հուդայական, բուդդայական կրոնները՝ որպես կոնֆեսիոնալ միավորումներ: Այս շարքին կարելի է ավելացնել նաև աղանդավորական կազմակերպությունները և շամանականություն դավանող խմբերը, որոնք նույնպես պետական գրանցում ունեն: Կաթոլիկ դավանանքի գրանցում ունեն միայն Հռոմի և Հույն Կաթոլիկ եկեղեցիները[2]: Ընդ որում՝ 2004թ. ՌԴ-ում Հռոմի Կաթոլիկ եկեղեցին ուներ 235 գրանցված եկեղեցական ծուխ, Հույն Կաթոլիկ եկեղեցին՝ 5[3], իսկ արդեն 2009թ.՝ համապատասխանաբար 234 և 4[4]:

Կարելի է կարծել, թե ՌԴ իրավական հարցերով զբաղվող կառույցները ՀԿԵ-ն դիտում են որպես Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու բաղկացուցիչ մաս: Բայց այս պարագայում հարց է առա-

[1] *Ացատրյան Վ.,* Պետություն-եկեղեցի հարաբերությունները. Հայեցակարգային մոտեցումներ, «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածինի, 2005, թիվ Բ-Գ, էջ 177:

[2] *Лопаткин Р.,* Конфессиональный портрет России: к характеристике современной религиозной ситуации, Вопросы религии и религиоведения, Москва, 2009, Выпуск 1, часть 4, с. 241-242:

[3] Проблемы развития государственно-конфессиональных отношений и социальные концепции ведущих религиозных объединений современной России, Серия: Основные проблемы социального развития России – 79, Аналитический вестник, Москва , 2004, № 17 (237), с. 53:

[4] *Лопаткин Р.,* Конфессиональный портрет России: к характеристике современной религиозной ситуации, Вопросы религии и религиоведения, Москва, 2009, Выпуск 1, часть 4, с. 241:

ջանում, թե ինչու է Հույն Կաթոլիկ եկեղեցին գրանցված որպես առանձին եկեղեցական միություն: Ցանկացած կրոնական միավորում կամ կրոնադավանանքային խումբ պետական գրանցում կամ որևէ կարգավիճակ կարող է ստանալ «Խղճի ազատության և կրոնական միությունների մասին» դաշնային օրենքի շրջանակներում: Համաձայն այս օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետի՝ պետական գրանցման համար տեղական կրոնական կազմակերպության հիմնադիրները համապատասխան տարածքային մարմնին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- հաշվառման (գրանցման) դիմում,
- կրոնական կազմակերպության հիմնադիրների ցանկը՝ ըստ քաղաքացիության, բնակության վայրի և ծննդյան տարեթվի,
- կրոնական կազմակերպության կանոնադրությունը,
- փաստաթուղթ, որը հաստատում է տվյալ կրոնական խմբի առկայությունը հիշյալ տարածքում առնվազն տասնհինգ տարի՝ տրված տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, կամ առաջնորդող կենտրոնի կողմից տրված փաստաթուղթ, որը հաստատում է, որ տվյալ կրոնական խումբը մտնում է կենտրոնացված կրոնական կազմակերպության մեջ,
- ստեղծվող կրոնական կազմակերպության գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն) հաստատող փաստաթուղթ[1]:

[1] Федеральный Закон О свободе совести и о религиозных объединениях, http://www.feor.ru/files/laws/religious.law.html

Բոլոր այս պահանջները ներկայացված էին, սակայն ՌԴ արդարադատության նախարարության պատկան մարմինները խտրական վերաբերմունք ցուցաբերեցին՝ պատճառաբանելով, թե եկեղեցին փաստաթուղթ չէր ներկայացրել, ինչը կհաստատեր հայ կաթողիկեների ներկայությունն այս շրջանում (Մոսկվայում) 15 տարվա ընթացքում: Հայ կաթողիկեների դատապաշտպան Վլադիմիր Ռյախովսկին 2010թ. հուլիսին նշել էր, որ Մոսկվա քաղաքի կրոնական կազմակերպությունների և պատմական արխիվի ղեկավարության օժանդակությամբ Ռուսաստանի արդարադատության նախարարություն են ներկայացրել պատմական փաստաթուղթ, համաձայն որի՝ Հայ Կաթողիկե եկեղեցին Ռուսաստանում հայտնի է եղել 18-րդ դարից և նրա համայնքները վերացվել են 1920-ական թվականներին[1]:

Արդարադատության նախարարությունն իրավունք չուներ հաշվի չառնել սույն փաստը, ուստի դատարանի կայացրած որոշումն անօրինական էր համարվում՝ հակասելով «Խղճի ազատության և կրոնական միությունների մասին» դաշնային օրենքին: Մեշանինսկի շրջանի դատարանը վերանայեց և անօրինական ճանաչեց ՌԴ ԱՆ կայացրած որոշումը և պարտադրեց վերանայել Ս.Գրիգոր Լուսավորիչ Հայ Կաթողիկե եկեղեցու հայցն ու պետական գրանցում տալ նրա համայնքներին՝ հաշվի առնելով, որ հայ կաթողիկեները նոր երևույթ չեն Ռուսաստանում: Խնդիրն այսպիսով չավարտվեց. հարցի լուծումը դատաիրավական մարմինների կողմից տեղափոխվել էր ս.թ. մարտ ամիս: Մինչդեռ պատկան մարմինները չներկայացան դատա-

[1] Мещанский районный суд столицы поддержал приход Армянской Католической Церкви, который добивается регистрации, http://www.sclj.ru/news/detail.php?ID=2907

վարական ընթացակարգին, և գործը հետաձգվեց: Հայ կաթողիկեների իրավունքների դատապաշտպան Վլադիմիր Ռյախովսկու կարծիքով, եթե գրանցման հարցը դարձյալ մերժվի, ապա այն հնարավորություն կտա դիմել ՌԴ Սահմանադրական դատարան՝ վիճարկելու կրոնի մասին ընդունված օրենքը[1]: Իրավունքի նման սահմանափակումները մեկ անգամ ևս ցույց են տալիս, որ իշխանությունների ապօրինի միջամտությունը համայնքի ներքին գործերին կրոնական կազմակերպությունների կյանքի անբաժանելի մասն են:

Պետական գրանցման համար ՀԿԵ-ն փաստացի բոլոր իրավական հիմքերն ունի, եթե, իհարկե, հարցը չի կարգավորվում «անտեսանելի ուժի» կողմից: Մասնավորապես, Ռուս Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչները մտավախություն ունեն, որ Հայ Կաթողիկե եկեղեցու գրանցմամբ ՌԴ-ում կմեծանա կաթոլիկ եկեղեցական ծխերի թիվը՝ հաշվի առնելով այն, որ հայ կաթողիկեները բնակվում են բազմաթիվ քաղաքներում: Մյուս կողմից՝ գրանցումը լավ հնարավորություն էր ՀԿԵ-ի համար՝ տնօրինելու սեփական համայնքի կյանքը, բացելու եկեղեցիներ և համայնքապատկան կառույցներ, ինչն առանձնապես կարող էր դուր չգալ Ռուս Ուղղափառ եկեղեցուն, քանի որ ցանկացած «կաթոլիկական հաջողություն» նշանակում է սեփական եկեղեցական դիրքերի թուլացում:

Բայց մեզ համար այս հարցի լուծումը կարևոր է նախ և առաջ ինքնության պահպանման տեսանկյունից, քանի որ

[1] Московские Свидетели Иеговы и община армянской католической Церкви продолжают борьбу за получение государственной регистрации, 03 марта 2011, http://www.portal-credo.ru/site/?act=news&id=82698:

հարցի չկարգավորման պարագայում հայ կաթոլիկներն ինքնաբերաբար հաճախում են Լատին և Ռուս Ուղղափառ եկեղեցիներ, որի բացասական հետևանքներն իրականություն կարող են դառնալ, ինչպես նախկինում դա տեղի ունեցավ սեփական եկեղեցուց և հայերեն ծիսական արարողություններից զրկված բազում հայ կաթողիկեների հետ: Եթե կազմակերպված համայնքների պարագայում, օրինակ՝ Մոսկվայում և Կրասնոդարում, այս խնդիրները նվազագույնի են հասցված, ապա չկազմակերպված, երկրով մեկ ցրված համայնքներում դրանք առկա են և խորանալու միտում ունեն: Այդ իսկ պատճառով, ըստ Նորատունկյանի, արժե մեծ քաղաքներում ստեղծել քահանայական խորհուրդներ, հոգաբարձուներ և նոր մտածել գրանցման մասին:

Հարկ է նշել, որ հայ-ռուսական հարաբերությունների ներկայիս բարձր մակարդակը, միջպետական համագործակցության առկա ներուժը կարող են օժանդակել համայնքի իրավունքների վերականգնմանը, ինչը խաթարվել էր 20-ական թվականներից, քանզի Հայ Կաթողիկե եկեղեցին ունի բոլոր իրավական և պատմական հիմքերը, որը թույլ է տալիս նրան հաստատելու իր իրավունքը ՌԴ-ում: Սրան զուգահեռ՝ որպես օժանդակ ուժ կարող էր հանդես գալ նաև Հռոմի Կաթոլիկ եկեղեցին, որն անպայմանորեն շահագրգիռ պետք է լինի այս հարցում: Մինչդեռ համայնքի իրավունքների վերականգնմանն ուղղված այս ողջ գործընթացում վերջինիս կողմից ոչ մի քայլ չձեռնարկվեց:

Ռուսաստանի հայ կաթողիկե համայնքին առնչվող դժվարությունների մեջ առանձին հարց է քահանաների սուր պակասը: Բանն այն է, որ ԽՍՀՄ ժամանակաշրջանում հայ կաթողիկե համայնքների ոչնչացումից հետո Ռուսաստանը երբեք չի դիտվել որպես «հեռանկարային» երկիր, և ռուսերեն իմացող քահանաներ երբևէ չեն պատրաստվել: Եվ երբ պատրիարքը ծառայություն է առաջարկում Ռուսաստանում, շատերը հրաժարվում են հենց այդ պատճառով[1]: Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի նորանշանակ արքեպիսկոպոս Ռաֆայել Մինասյանի խոսքով՝ ՀԿԵ բոլոր հոգևորականները Սփյուռքից են՝ Սիրիայից ու Լիբանանից, որոնք չեն տիրապետում ռուսերեն լեզվին, իսկ տեղացի հայ կաթողիկեների մեծամասնությունը ռուսախոս է և չի տիրապետում արևմտահայերենին[2]:

Հասկանալի է, որ խորհրդային «հոգևոր ճգնաժամի» տարիներին, երբ կաթոլիկ եկեղեցիներն առհասարակ չէին գործում, այդ դավանական հանրության մեջ բացակայում էր կրոնական արարողությունների պրակտիկան: Հետևաբար, նրանց համար դժվար է արագ մերվել, մանավանդ որ անընդհատ գտնվում են Հռոմեական Կաթոլիկ եկեղեցիներում, որտեղ քարոզները միմիայն կատարվում են լատիներեն՝ իրենց համար խորթ արարողակարգով: Հայ Կաթողիկե եկեղեցին Ռուսաստանում ունի ընդամենը չորս քահանա և ստիպված է այլ չափանիշներով մոտենալ խնդրին. քահանաները հաճախում են այն քաղաքները, ուր ապրում է մոտավորապես 100 ընտանիք:

[1] Ապագա ունի՞ Հայ Կաթոլիկ եկեղեցին Ռուսաստանում, «ԱԶԳ», #197, 28-10-2010:

[2] *Киракосян Н.,* Новый глава армян-католиков в Армении, Грузии и Восточной Европе продолжит журналистскую деятельность на телевидении Ватикана «Телепаче», http://www.blagovest-info.ru/index.php?ss=2&s=3&id=42438

Այս պարագայում չորս հոգևորականն անծայրածիր Ռուսաստանի կենտրոնացված և ցրված համայնքների համար, միանշանակ, բավարար չէ։ Ընդ որում՝ նրանցից երկուսը ծառայում են Մոսկվայում, մեկը՝ Կրասնոդարում, մեկը՝ Նովոռոսիյսկի շրջանում։ Նորանշանակ արքեպիսկոպոսը խնդիր է դրել իր իրավասության ներքո գտնվող տարածաշրջանի համար պատրաստել հոգևորականների նոր սերունդ, որոնք կկարողանան լուծել համայնքների առջև ծառացած հարցերը։ Խնդիրն այն է, որ կաթոլիկ հոգևորականներ պատրաստում են Պետերբուրգում, սակայն լատինական ծեսով առաջնորդվող համայնքների համար։ Այս բոլոր տարիների ընթացքում Պետերբուրգում գործող սեմինարիայում ընդամենը մեկ հայ կաթոլիկ քահանա է պատրաստվել, սակայն ավարտելուց հետո էլ ստիպված է եղել սովորել հայերեն, որպեսզի կարողանա կարդալ և հասկանալ ծիսական արարողություններին վերաբերող տեքստերը։ Հույս կա, որ այս սեմինարիայում կբացվի առանձին հայկական բաժին։ Այս ուղղությամբ զգալի աշխատանք պետք է տանեն ՀԿԵ ներկայացուցիչները։

Մյուս կողմից՝ չնայած հայ կաթողիկեների որոշակի թվին, համայնքների մեծ մասը սեփական եկեղեցի չունի։ Հետևաբար, ինչպես նշեցինք, հայ կաթողիկեները ստիպված են հաճախել լատինաձես եկեղեցիներ, որտեղ քարոզները հիմնականում կատարվում են լեհ և այլազգի հոգևորականների կողմից։ Միակ մխիթարող հանգամանքն այն է, որ լատինական եկեղեցի այցելող հայերին երբեմն սպասարկում են հայ հոգևորականներ՝ հայկական ծեսով։ Կրասնոդարում այդ գործը կատարում է հայ հոգևորական Սերգեյ Բաբաջանյանը, որը կարողանում է

համախմբել հայերին անգամ համազգային նշանակության միջոցառումներին:

Այնպես որ, ԽՍՀՄ ժամանակաշրջանից հետո Ռուսաստանի «կրոնական քարտեզից» անհետացած հայ կաթողիկե համայնքները նոր պատմություն են կերտում՝ վառ ապագայի հույսով: Մի առիթով հայ կաթողիկե քահանային ուղղված լրագրողի հարցին, թե ապագա ունի արդյոք ՀԿԵ-ն Ռուսաստանում, վերջինս պատասխանել է. *«Ապագա՞: Դա միայն Աստված գիտի: Ինչպես ասում են պատմաբանները, Լեհաստանում, օրինակ, բնակվում էին 200 հազարի հասնող հայ կաթոլիկներ, իսկ այժմ նրանք գոյություն չունեն: Մենք անում ենք ամեն հնարավորը, որ Ռուսաստանի մեր համայնքը նույն ճակատագրին չարժանանա»*[1]:

Այսպիսով, կարելի է փաստել, որ պատմական փորձությունների միջով անցած, վերելքներ և անկումներ տեսած հայ կաթողիկեները, բնակվելով այլ մշակույթ և արժեհամակարգ ունեցող երկրում, հարաբերվելով Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների հետ, դեռևս «ժառանգաբար» պահպանում են իրենց «կաթոլիկական ինքնությունը»: ԽՍՀՄ փլուզումից հետո մեր աչքի առջև վերստեղծվում է նոր համայնք, որն իրապես հակասության մեջ չմտնելով ՌԴ տարբեր կրոնադավանական և էթնիկ խմբերի հետ՝ փորձում է ինքնակազմակերպման միջոցով վերհաստատել այն, ինչից զուրկ է եղել խորհրդային շրջանում: Առավելագույն խնդիրները, որոնք հրատապ կմնան համայնքի համար, եկեղեցու կարգավիճակի ու քահանաների սակավաթիվ լինելուն վերաբերող հարցերն են:

[1] *Орлова Л.,* Католицизм с кавказским акцентом, http://religion.ng.ru/people/2010-10-06/6_catolicism.html

Հավելված 1

DIRECTORIUM OFFICII DIVINI
PRO
DIOECESI TIRASPOLENSI
in Annum Domini
1866
ECCLESIASE
RITUS ARMENO-CATHOLICI[1]

Decanatus Achalcichensis.

1. ***Achałcich*** Eccl. paroch. s. t. Assump. B. M. V.
Paroch. Awgarow-Cziczijan Jacobus.
Vicar. Szajtow Simeon.

2. Ecclesia paroch. s. t. Joannis Baptistae.
Admin. Małumow Oganess.
Vicarius Łazarow Pogos.

3. Ecclesia paroch. s. t. Exaltationis S. Crucis.
Parochus Muradow Jacobus.
Vicarius Chucianow Josephus.

[1] Ռուսական կայսրության, Տիրասպոլյան եպարքության կազմի մեջ մտնող հայ կաթողիկե բնակավայրերի և նրանց սպասարկող հոգևորականների անունները՝ ըստ Հռոմի Կաթոլիկ եկեղեցու կողմից 1866թ. հրատարակված օրացույցի։ Աստղանիշով նշված բնակավայրերն այժմ վրացական գիտական շրջանակների կողմից ներկայացվում են որպես կաթոլիկ վրացական գյուղեր։

4. Ecclesia paroch. s. t. Exaltat. S. Crucis.
Parochus Mazmanow Ovacim.

5, Ecclesia paroch. s. t. B. M. V.
Capellanus Agiszew Petrus.

In Circulo Achałkałachensi.

1. Villa ***Tore*** Eccles. parocb. s. t. S. Jacobi.
Parochus Asłanow Simon.

2. ***Chizabaur*** * Vil. Eccl. paroch. s. t. J. Chr.
Parochus Astwacaturow Oganess.

3. ***Ałastan*** *Vil.* Eccl. paroch. s. t. Assum. B. M. V.
Parochus Darpinow Petrus.
Vicarii: Saruchanow Kerop, Ericiane Minas.

4. ***Warewan*** Vil. Eccl. paroch. s. t. B. M. V.
Parochus Owelian Alexan.

5. ***Dureche*** Vil. Eccl. paroch. s. t. S. Crucis.
Parochus Sarkissow Moses.

6. ***Chulkuma*** Eccl. paroch. s. t. B. M. V.
Curatus Sarkissow Karapet.

7. ***Baura*** Eccl. paroch. s. t. S. Crucis.
Curatus Asłanow Simon.

8. ***Kartikam*** Eccl. paroch. s. t. S. Crucis.
Parochus Szitchanow Jacobus.

9. ***Udżmana*** Eccl. paroch. s. t. Joan. Bapt.
Parochus vacat.

10. ***Esztija*** Eccl. paroch. s. t. B. M. V.
Parochus Seropow Gregorius.
Vicarii: Simonow Pohos, Oganessow Narcessus.

Decanatus Alzehurensis.
In Circulo Kablianensi.

11. ***Abatchew*** Eccl. paroch. s. t. S. Crucis.
Curatus Saarow Gregorius.

12. ***Chałtpiła*** Eccl. paroch. s. t. S. Joan. Bapt.
Curatus Terpohosow Pohos.
Vicarius T. Simonow Mirkiticz.

13. ***Suflis*** Eccl. paroch. B. t. B. M. V.
Curatus Awraamow Michael.

14. ***Wale*** Eccl. paroch. s. t. J. Chr. Salvat.
Curatus Zacharow Stephanus.

15. ***Neochreb*** Eccl. paroch. s. t. J. Chr. Salv.
Curatus Hazałow Saak.

16. ***Ude****Eccl. paroch. B. M. V.
Curatus Hazułow Stephanus.

17. ***Aral****Eccl. paroch. s. t. Josephi.
Parochus Bałachow Pohos.

Decanatus Alexandropelensis.
In Gubernio Erivanensi. In Districtu Alexandropolensi.

18. ***Alexandropol*** Eccl. paroch. s. t. B. M. V.
Parochus Araratow Alexander v. s.
Vicarius Mechitarow Sarkis.

19. ***Kaftarli*** *Eccl. par. rit. Armeno-Cath. s. t. B. M. V.*
Parochus C. H. Nahapetow Paulus.
Vicarius Ohanesow Petrus.

In Circulo Suragalensi.

20. ***Tepetołak*** Eccl. paroch. s. t. S. Gregorii M.
Curatus Grigorow Petrus.
Vicarius Ezekow Michael.

21. ***Katakitis*** Eccl. paroch. s. t. B. M. V.
Curatus Keleszow Chaczatur.
Vicarius Gregorow Antonius.

22. ***Pałutli*** Eccl. paroch. s. t. S. Joan. Baptis.
Curatus Hazarow Petrus.

23. ***Kazancz*** Eccl. paroch. s. t. S. Gregorii.
Parochus Oganesow Michael.

24. ***Mushuchli*** Eccl. paroch. s. t. B. M. V.
Curatus Awraamow Saak.

25. *Girch* Eccl. paroch. s. t. S. Gregorii.
Curatus Danielew Mojses.

26. *Szisztapa* Eccl. paroch. s. t. D. N. J. Chr.
Parochus Mikirticz Pohos.

27. *Dziteli* Eccl. parocb. s. t. B. M. V.
Curatus Awraamow Abraham.

Decanatus Łoriensis. In Circulo Łoriensi.

28. *Szachnazar* Eccles. paroch. s. t. Joannes Bapt.
Parochus Ohanesow Pohos.
Vicarius Gregorow Petrus.

29. *Karakitisi* Eccl. paroch. s. t. S. Gregori.
Curatus Sechposow Gregorius.

30. *Sarezabet* Eccl. paroch. s. t. D. N. J. Chr.
Curatus T. Martirosow Mikirticz.

31. *Małaja Kurakitis* Ecclesia paroch. s. t. S. Stephani.
Parochus Welcian Jacobus.

Decanatus Tauridensis.
In Gubernio Tauridensi in Districtu Theodosiensi.

1. *Theodosia Eccl. paroch. Armeno-Cathol.* s. t. Assumptionis B. M. V.
Parochus et Decanus Kara-Musa Joseph. S. T D. Archimandr. Eremit. Ordinis S. Ant.

2. ***Kiercz*** Eccl. paroch. s. t Assump. B. M. V.
Curatus Arasow Joannes.

3. ***Karasu-Bazar*** Eccl. paroch. Arm.-Cath. s. t. S. Gregor. Illum.
Parochus Burdur Vartanes S. T. D. Abbas Ord. S. Antonii Eremit. Ordinis S. Stanislai 3 cl. Eques, nec non aurea; cruce pect. decoratus.

Vicarius Pessilian Dionysius S. T. D. ejus. Ordinis, Praeceptor Scholae parochialis.

4. ***Symferopol*** Eccl. paroch. rit. Arm. Cath.
Curatus Gulardian Simon S. T. D. Eremit. Ordinis S. Antonii, aurea cruce pect. decorat.

In Districtu Nachiczivanensi.

5. ***Siahut*** Eccl par. ritus Chald. Cath. s.t. B. M. V.
Parochus Arunow Joannes.

Visitatoriatus Caucasensis et Transcaucaseusis.
In Gubernio et Districtu Tiflisensi.

6, ***Tiflis*** Eccl. par. s. t. Assump. B. M. V.
Vicarius Zacharias Kurgenian. presb. A. C.
Vicarius Petrus Mezedałow presb. A. C.

Հավելված 2

Розсекречено

СОВ.СЕКРЕТНО

СЕКРЕТАРЮ ЦК КП/б/У

тов. Х Р У Щ Е В У Н.С.

-13

Направляем Вам специальное сообщение областного Управления НКГБ о разоблаченном тайном советнике шефа " СД " генерал-губернаторства и Галиции - РУШ Роберте Евгеньевиче.

" Разыскиваемый резидент и содержатель конспиративной квартиры, а затем официальный работник гестапо во Львове

- РУШ Робет Евгеньевич ,1896 года рождения,уроженец села Добрывляны,Стрийского района,Станиславской области, немец, из помещиков, беспартийный, являлся до войны. нашим агентом " ПИР ".

Ранее арестованный [redacted], как агент гестапо, священник армяно-католической церкви:

- РОМАШКИН Казимир Николаевич,1909 года рождения, уроженец Пашканцы, Городокского района, Львовской области, поляк, с высшим богословским образованием, до ареста советник капитуллы и секретарь руководителя армяно-католической церкви в Галиции -митрата КАЙТАНОВИЧА,-

на протяжении 2-х месяцев о принадлежности к агентуре гестапо и антисоветской деятельности - показаний не давал.

Суммируя имеющиеся у нас агентурные материалы и показания РУША на БАЗЯК, ГАЛУНЕВИЧ, КАЙТАНОВИЧА, КВАШНИКОГО и КОТИВА, [redacted] они намечены к аресту,который даст нам возможность вскрыть созданную БАЗЯКОМ и ГАЛУНЕВИЧЕМ антисоветскую организацию " Крест и меч " и оперативно ликвидировать созданную КАЙТАНОВИЧЕМ и РОМАШКАНОМ экспозитуру армянско-националистического комитета.

Учитывая ,что РУШ хорошо осведомлен об антисоветской деятельности духовенства, считаем возможным использовать его в качестве свидетеля в случае, если будет поставлен вопрос о гласном процессе над арестованными руководителями греко-католической церкви или на Международном процессе в Нюренберге над главными военными преступниками, по делу ФОН-ПАПЕНА. "

СЕКРЕТАРЬ ЛЬВОВСКОГО ОБКОМА КП/б/У И.ГРУШЕЦКИЙ.

23 ноября 1945 г.

Հավելված 3

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ[1]

Քաղաքը	Կառույցը	Հիմնադրման տարեթիվը	Ղեկավարը	Հասցեն	Կապի միջոցները
Մոսկվա	Հայ Ավետարանական եկեղեցի	1993	Հոգևոր հովիվ՝ վերապատվելի Մասիս Հակոբյան	ք. Մոսկվա, Նամյոտկինայի 15 Փոստային հասցե՝ Մոսկվայի մարզ, Բալաշիխա, Կարբիշևայի 25, բն. 100, 143900	Հեռ.՝ (7-925) 091-49-25 Էլ. փոստ masis_akopjan@list.ru
Սոչի	Հայ Ավետարանական եկեղեցի	1997	Հոգևոր հովիվ՝ վերապատվելի Սասուն Կարախանյան	ք. Սոչի, Առողջարանային պողոտա 67, 354000 Փոստային հասցե՝ ք. Սոչի, 1230 3544000	Հեռ.՝ (7862 -2) 62-00-46 62-00-42 Ֆաքս (862 -2) 62-00-56 Էլ. փոստ Church@Sochi.ru
Խոստա	Հայ Ավետարանական եկեղեցի	2001	Հոգևոր հովիվ՝ վերապատվելի Սասուն Կարախանյան	ք. Խոստա, ԽՍՀՄ 50-ամյակի փ., 20	Էլ. փոստ sasunavoi@rambler.ru
Սարատով	Հայ Ավետարանական եղբայրություն	2010	Հոգևոր հովիվ՝ Վահան Ֆրանգյան	ք. Սարատով, Օրջոնիկիձեի 11	Հեռ.՝ (7-965) 8840728

[1] Աղբյուրը՝ AMAA Directory 2011: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 16 http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf

Հավելված 4

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքը	Կառույցը, որտեղ հավաքվում են հայ կաթողիկեները	Հասցեն	Կապի միջոցները
Մոսկվա	Ս. Մարիամ Աստվածածնի Անարատ Հղության տաճար[1]	Մոսկվա, փ. Մալայա Գրուզինսկայա, տ. 27/13	Հեռ.՝ +7 (499) 252-39-11 Էլ. հասցե՝ info@catedra.ru
Սամարա	Հիսուսի սուրբ սիրտ Հռոմեական Կաթոլիկ եկեղեցի	ք. Սամարա, Ֆրունզեի փ. 157	Հեռ.՝ 007 (846) 333 41 88 Էլ. հասցե՝ ppsi.samara@gmail.com
Սոչի	Սուրբ առաքյալներ Ֆադեյի և Սիմոնի Հռոմեական կաթոլիկ եկեղեցի	Կրասնոդարի երկրամաս, ք. Սոչի, փ. Պարալելնայա, 11ա	Հեռ.՝ +7 (8622) 61-60-81
Նովոսիբիրսկ	«Կանա» կաթոլիկ հեռուստաընկերություն, տնօրեն՝ հայ կաթոլիկ հոգևորական Հովսեփ Մելիքսեթյան	ք. Նովոսիբիրսկ, Լենինանի փ., 38, ա/յա 20 (Կանա)	Հեռ.՝ (383) 279-03-16, Ֆաքս. (383)279-20-38. Էլ. հասցե՝ tv@kana.rutv@kana.ru Մելիքսեթյանի անձնական էլ. հասցե՝ hovsepme@gmail.com

[1] Հայ կաթողիկեների համար կատարվում են հայերենով ծիսական արարողություններ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԴԱՎԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ



1. Սանկտ Պետերբուրգ	7. Գելենջիկ	13. Պյատիգորսկ	19. Նովոսեմեյկինո	25. Տոմսկ
2. Կրասնոդար	8. Նովոռոսիյսկ	14. Տվերի մարզ	20. Նոյաբրսկ	26. Ուդմուրտիայի Հանրապետություն
3. Սոչի	9. Տուապսե	15. Սարատով	21. Վլադիվոստոկ	27. Պսկով
4. Աբինսկ	10. Կուրգանինսկ	16. Սամարա	22. Ալթայի երկրամաս	28. Չիտա
5. Արլեր	11. Դոնի Ռոստով	17. Պենզա	23. Բառնաուլ	29. Ուլան Ուդե
6. Անապա	12. Տագանրոգ	18. Նովոսիբիրսկ	24. Իրկուտսկ	30. Օմսկ

ԱՄՓՈՓՈՒՄ

Ռուսաստանի հայ կաթողիկե և ավետարանական համայնքներն անցել են պատմական զարգացման երեք փուլ՝ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային (արդի)։ Սակայն, եթե հայ կաթոլիկության առաջացումը Ռուսաստանում կապված էր կայսրության տարածքային ընդլայնման (արևմուտքում՝ Ղրիմի թերակղզի, լեհական տարածքներ, հարավում՝ Կովկաս և այլն), իսկ այնուհետև՝ ժողովրդագրական տեղաշարժերի հետ, ապա հայ ավետարանականության առաջացումը Ռուսաստանում պայմանավորված էր ռուսաստանաբնակ հայության ազգային և մշակութային կյանքի վերելքով, ինչպես նաև Ռուսաստանում օտարերկրյա միսիոներների (հիմնականում՝ Բազելյան միաբանության քարոզիչների) ծավալած գործունեությամբ։

Խորհրդային ժամանակաշրջանում ինչպես բոլոր եկեղեցիները, այնպես էլ հայ կաթողիկե և ավետարանական համայնքները նույնպես ենթարկվել են հալածանքների, որոնց դրսևորումներն էին եկեղեցական գույքի բռնագրավումը, գործունեության ոլորտների սահմանափակումը, դատական հետապնդումները հոգևոր գործիչների նկատմամբ։ Հատկապես մեծ տարածում ունեին քաղաքական մեղադրանքներով (լրտեսություն, հակախորհրդային քարոզչություն և այլն) հայ կաթողիկե և ավետարանական գործիչների նկատմամբ իրականացված հալածանքները՝ ձերբակալություններ, բանտարկություն, աքսոր և այլն։ Խորհրդային ժամանակաշրջանում տիրող հակակրոնականության այդ մթնոլորտը մեծ հարված հասցրեց Ռուսաստանի հայ կաթողիկե և ավետարանական համայնքներին՝

ոչ միայն կանխելով դրանց զարգացումը, այլև ոչնչացնելով արդեն իսկ առկա ձեռքբերումները:

Հետխորհրդային շրջանում ընձեռված քաղաքական ազատությունները, ինչպես նաև հակակրոնական մթնոլորտի հաղթահարումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին այս համայնքների վերազարթոնքի և զարգացման համար: Բացի ռուսաստանյան սոցիալ-քաղաքական իրավիճակի փոփոխությունից, ներկա փուլում հայ կաթողիկե և ավետարանական համայնքների զարգացմանը խթանում են նաև Հայաստանից արտագաղթը դեպի Ռուսաստան և հետխորհրդային շրջանում նոր թափ առած բողոքական միսիոներությունը:

Ռուսաստանի հայ կաթողիկե և ավետարանական համայնքները թվաքանակի առումով համաչափ չեն: Եթե հայ կաթողիկեների քանակը տարբեր հաշվարկներով կազմում է 60-80 հազար, ապա հայ ավետարանականներինը չի գերազանցում 1000-ը:

Չնայած քանակական սահմանափակությանը, Ռուսաստանի հայ կաթողիկե և ավետարանական համայնքները կենտրոնացված չեն մեկ վայրում, այլ սփռված են այդ երկրի հայահոծ բնակավայրերում: Միաժամանակ, դրանք ցուցաբերում են քանակական աճի և աշխարհագրական սփռվածության ընդլայնման միտում:

Ռուսաստանաբնակ հայության այդ դավանանքային շերտերի կազմակերպչական կառույցները թեև աչքի չեն ընկնում բազմազանությամբ, սակայն վերջին շրջանում նկատվում է դրական միտում նաև այս հարցում: Կազմակերպչական առումով ռուսաստանաբնակ հայ կաթողիկեների և ավետարանականների գլխավոր խնդիրներից է այն, որ ո՛չ Հայ Կաթողիկե և ո՛չ

էլ Հայ Ավետարանական եկեղեցին չունեն պետական գրանցում։

Ռուսաստանի ընդհանուր կաթոլիկության կամ բողոքականության մաս լինելու հանգամանքն օգնում է հայ կաթողիկե և ավետարանական համայնքներին որոշակի օգուտներ քաղել ռուսաստանաբնակ այլ կաթողիկե և ավետարանական համայնքների, ինչպես նաև միսիոներների հետ համագործակցությունից։

Բացի Ռուսաստանի ընդհանուր կաթոլիկության և բողոքականության մաս կազմելուց, հայ կաթողիկեներն ու ավետարանականները միաժամանակ հանդիսանում են ռուսաստանաբնակ հայության անբաժանելի մասը։ Նրանք բնակվում են հայ առաքելականների հետ կողք կողքի։ Անհատական մակարդակով առկա են միջդավանական շփումներ ու փոխգործակցություն հայ առաքելականների, կաթողիկեների և ավետարանականների միջև։

Ռուսաստանաբնակ հայության տարբեր դավանանքային շերտերի համերաշխության ու ազգային համախմբման հիմքում ընկած գործոններն են բարձր ազգային ինքնագիտակցությունը, ընդհանուր քրիստոնեական հավատը, ռուսաստանյան սոցիալ-քաղաքական միջավայրով պայմանավորված մարտահրավերները (ահաբեկչություն, քաղաքական ցնցումներ, այլատյացություն, միջէթնիկ բախումներ և այլն), որոնք ընդհանուր են Հայության բոլոր դավանանքային շերտերի համար և որոնց արդյունավետ դիմագրավումը պահանջում է համազգային ջանքերի համատեղում։ Միջդավանական համերաշխությանը նպաստում է նաև մեր օրերում մեծ տարածում գտած աշխարհիկությունը, որը կրոնադավանանքային հողի վրա առկա տարաձայնությունները մղել է երկրորդական պլան։

Այսքանով հանդերձ, ինստիտուցիոնալ մակարդակով

Ռուսաստանի Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների միջև միջդավանական համագործակցությունը ներկայումս գտնվում է գրեթե խիստ ցածր մակարդակի վրա։ Այս հանգամանքը լուրջ մարտահրավեր է ռուսաստանաբնակ հայության համար, քանի որ ինստիտուցիոնալ մակարդակով միջդավանական համագործակցությունը վճռական նշանակություն ունի Ռուսաստանի հայ համայնքի տարբեր դավանանքային շերտերի ինտեգրման տեսանկյունից։

Ինստիտուցիոնալ մակարդակով միջդավանական համագործակցության այնպիսի ձևերն ու մեխանիզմները, ինչպիսիք են համատեղ կառույցների ստեղծումն ու գործարկումը, համատեղ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, միջհարանվանական համակարգող խորհրդի ստեղծումը և այլն, բարերար ազդեցություն կունենան ինչպես առանձին վերցրած Ռուսաստանի հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական համայնքների, այնպես էլ ռուսաստանաբնակ հայության վրա՝ ընդհանրապես։

Առանձին դավանանքային շերտերի այդ համագործակցությունը կհանգեցնի հայապահպանությանը և մյուս խնդիրներին ու մարտահրավերներին առավել արդյունավետ դիմագրավելուն։ Իսկ ընդհանուր Ռուսաստանի հայ համայնքի համար այն կնշանակի ազգային համախմբման մակարդակի բարձրացում։ Այսպիսով, ինստիտուցիոնալ մակարդակով միջդավանական համագործակցությունը լուրջ հիմք և խթան է Ռուսաստանի հայության տարբեր դավանանքային շերտերի համախմբման և ազգային հիմքով նրանց մեկ միասնական կուռ ամբողջության՝ Ռուսաստանի հայ համայնքի մեջ ինտեգրելու համար։

РЕЗЮМЕ

Армянские католические и евангелические общины России прошли три этапа исторического развития: досоветский, советский и постсоветский (современный). Однако если возникновение армянского католичества в России было связано с территориальным расширением империи (на западе – Крымский полуостров, польские территории, на юге – Кавказ и т.д.) и последующими демографическими сдвигами, то возникновение армянского евангелизма здесь обусловливалось подъемом национальной и культурной жизни российского армянства, а также деятельностью, развернутой в России иностранными миссионерами (в основном – проповедниками Базельской конгрегации).

В советский период, как все церкви, так и армянские католические и евангелические общины подвергались преследованиям, проявлявшимся в экспроприации церковного имущества, ограничении сфер деятельности, судебном преследовании духовенства. Особое распространение получили репрессии по политическим обвинениям (в шпионаже, антисоветской агитации и т.д.) в отношении армянских католических и евангелических деятелей – аресты, тюремные заключения, ссылки и т.д. Царящая в советский период антирелигиозная атмосфера сильно ударила по армянским католическим и евангелическим общинам, не только не дав им развиться, но и уничтожив уже имеющиеся достижения.

Появившиеся в постсоветский период свободы, а также преодоление антирелигиозной атмосферы создали благоприятные условия для возрождения и активизации этих общин. Помимо изменения социально-политической обстановки в России, сегодня развитию армянских католических и евангелических общин способствуют как эмиграция из Армении в Россию, так и обретшее в постсоветский период новый размах протестантское миссионерство.

Армянские католические и евангелические общины России количественно не пропорциональны друг другу: если число армянских католиков по разным оценкам составляет примерно 60-80 тысяч, то армянские евангелисты не превышают 1000 человек.

Сегодня армянские католические и евангелические общины России малочисленны и рассеяны по разным армянонаселенным местностям России. Наряду с этим они демонстрируют тенденцию к количественному росту и расширению географического распространения.

В числе главных организационных проблем армянских католиков и евангелистов РФ – отсутствие государственной регистрации как у Армянской Католической, так и у Армянской Евангелической церквей.

Тот факт, что армянские католики или евангелисты выступают как часть общего католичества или евангелизма в России, позволяет им получать определенные выгоды от сотрудничества с миссионерами или другими католическими и евангелическими общинами России.

Но, помимо вхождения в качестве составной части в российский католицизм или евангелизм, армянские католики и евангелисты являются также неотъемлемой частью российского армянства. Они живут бок о бок с прихожанами ААЦ. На личностном уровне существуют межконфессиональные контакты и взаимосотрудничество между адептами ААЦ, АКЦ и АЕЦ.

В основе национальной консолидации и сотрудничества разных конфессиональных слоев армян России – высокое национальное самосознание, общая христианская вера, обусловленные российской социально-политической ситуацией вызовы (терроризм, политические потрясение, межэтнические столкновения, шовинизм и т.д.), которые являются общими для всех слоев армянства и противостояние которым требует сплочения усилий. Межконфессиональной толерантности способствует и очень распространенная в наши дни секуляризация, отодвинувшая на задний план конфессиональные разногласия.

Вместе с тем, на институциональном уровне межконфессиональное сотрудничество между Армянской Апостольской, Армянской Католической и Армянской Евангелической церквами России в настоящее время практически отсутствует. Это обстоятельство – серьезный вызов для российского армянства, так как институциональное межконфессиональное сотрудничество имеет решающее значение в плане интеграции разных конфессиональных слове армянской общины России.

Такие формы и механизмы межконфессионального сотрудничества, как создание и задействование совместных структур, организация и осуществление совместных мероприятий и

т.д., благотворно сказались бы как на отдельно взятых армянских апостольских, католических и евангелических общинах России, так и на российском армянстве в целом.

Такое сотрудничество отдельных конфессиональных слоев способствует сохранению армянской идентичности и более эффективному сопротивлению другим вызовам и проблемам. А для армянской общины РФ в целом оно обозначит повышение уровня национальной консолидации. Таким образом, институционализированное межконфессиональное сотрудничество – серьезная основа и стимул для консолидации разных конфессиональных слоев армянства России и интеграции их в единую общность – армянскую общину России.

SUMMARY

The Armenian Catholic and Evangelical communities in Russia passed 3 historical phases of development – pre-Soviet, Soviet and post-Soviet (contemporary). But if the appearance of the Armenian Catholicism in Russia was connected with territorial expansion of the empire (Crimea, Polish territories in the west, Caucasus in the south and etc.) and later with the demographic shifts, then the appearance of the Armenian Evangelism was conditioned by the rise of the cultural life as well as by the activity of the foreign missionaries in Russia (mainly preachers from Basel Evangelical Mission).

Over the Soviet period the Armenian Catholic and Evangelical communities also were persecuted and those persecutions manifested themselves in confiscation of church property, restriction of the fields of activity, legal prosecutions of the priests. The most widespread were the persecutions against the Armenian Catholic and Evangelical figures (arrests, custody, exile and etc.) under the political pretext (espionage, anti-Soviet activity and etc.). Such an anti-religious atmosphere, which dominated over the Soviet period, had greatly affected Armenian Catholic and Evangelical communities in Russia; it not only suspended the development but annihilated the existing achievements.

The political freedoms, given in the post-Soviet period, as well as overcoming of the anti-religious atmosphere, created favourable conditions for the revival and development of those communities. Besides the change of the political and social situation in Russia, the current development of the Armenian Catholic and Evangelical communities is stimulated by the emigration from Armenia to Russia and active Evangelical missionary activity.

The Armenian Catholic and Evangelical communities in Russia are disproportionate in terms of quantity: if the number of the Armenian Catholics, according to different estimations, is about 60-80 thousand people, while the number of the Armenian Evangelicals does not exceed 1000 people.

Though today the Armenian Catholic and Evangelical communities in Russia are restricted in terms of number, but they are not concentrated in one place and are spread over the population centers inhabited by the Armenians.

Though the organizational structures of those confessional groups of the Armenians are not distinguished by the diversity, over the recent period some positive tendencies can be observed in this sphere either. One of the main problems of the Armenian Catholic and Evangelical communities in organizational aspect is that neither Armenian Catholic nor Armenian Evangelical churches have state registration.

Being a part of the Catholics and Evangelicals of Russia in general, the Armenian Catholic and Evangelical communities acquired some benefits from the cooperation with other Catholic and Evangelical communities and missionaries in Russia.

Besides, being a part of the Catholics and Evangelicals in Russian, the Armenian Catholic and Evangelical communities at the same time constitute an integral part of the Armenian community. They live together with the Apostolic Armenians. There is a cooperation and communication between the Apostolic, Catholic and Evangelical Armenians on personal level.

The factors, on which the friendship and solidarity of different confessional segments of the Armenians are founded, are the high level of national self-consciousness, common Christian faith, challenges conditioned by the social and political environment of Russia (terrorism, political earthquakes, chauvinism, inter-ethnic collisions and etc.), which are the same for the all confessional groups of the Armenians and which demand consolidation of all the national segments. The inter-confessional friendship is also conditioned by the secularity which is widespread today and which has sidelined the confessional disagreements.

At the same time, in the institutional aspect the cooperation between the Armenian Apostolic, Catholic and Evangelical Churches is almost on zero level. This circumstance is a serious challenge to the Armenians living in Russia, as the inter-confessional cooperation on institutional level is of great importance from the point of view of integration of different confessional groups of the Armenian community in Russia.

Such types and mechanisms of the inter-confessional cooperation on institutional level as establishment and running of joint organizations, arranging joint events, creation of inter-confessional co-

ordinating council and etc., will have a positive effect on both Armenian Apostolic, Catholic and Evangelical communities in Russia separately, and Armenian community in Russia generally.

The cooperation between these layers of the Armeniancy will promote preserving of the Armenian culture, language and identity and efficiently resisting other problems and challenges. And for the Armenian community in Russia it would mean the upsurge of the level of national consolidation. Thus, the institutional inter-confessional cooperation will serve as a serious ground and impulse for consolidation of different confessional groups of Armenians and uniting them in one integral whole – the Armenian community in Russia.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱՆՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գիտական խմբագիր՝
Ռուբեն ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հեղինակներ՝
Արեստակես ՍԻՄԱՎՈՐՅԱՆ
Վահրամ ՀՈՎՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 16,75 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 300։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում։